

24357

ՀԱՅ . ԱՄԵՐԻԿԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

♦ Ա. ՀԱՏՈՐ ♦



891.99-192

Թ-82


0 4-8

621

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԻՋՈՑԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅ-ԼՍՆԵՐԻԿԵՆՆ

Ա.Զ.Գ.Ս.ՑԻՆ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ



20 03

❖ Ի յիշատակ ❖

ԱՂԱԻՆԻ Կ. ԶԱՆԳԱԼԵԱՆԻ
ընդ
ՊՕՂՈՍ Մ. ՀԱՄՄԱԼԵԱՆԻ
Պատկադրութեան

25 Մայիս 1925 թ. Յուլիանին

❖ (ԱՐԾԱԹԵԱՅ ՀԱՐՍԱՆԵԱՅ) ❖
Սոյն Գիրքը կը նուիրէ Աշխատասիրողն
ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

Որբանոցին:

4540

ԻՆՔՆՈՒՍՈՒՑԻԶ

ԵՆԳԼԻՏԵՐԷՆ ԼԵՂՈՒԻ

Հեղինակութիւն
ՊԵՏՐՈՍ Ռ. ԹՈՐՈՍՅԱՆԻ

Երկրորդ Տպագրութիւն
Վերաքննուած, ճշտացուցուած, ու Աւելցուած

ԱՆԳԼԻՏԵՐԷՆ ԽՕՍԻԼ, ԿԱՐԴԱԼ ԵՒ ԳՐԵԼ

Գլխին սովորելու Համար
ԻՆՔՆՈՒՍՈՒՑԻԶԸ ՄԷՎ ՀԱՏԻՎ Է

Ինքնուսուցչով սովորածը վստահ ես որ գիտես

Ինքնուսուցչին մէջ Հարկւրաւոր բառեր կը
գտնուին որոնք ցարդ Հրատարակուած ոչ մէկ
Անգլիերէն և Հայերէն բառարանի կամ գրուցատրու-
թեան մէջ կան:

ԻՆՔՆՈՒՍՈՒՑԻԶԸ Հարուստ է

ՈՏԵՐՈՎ Բացատրութիւններով Պատկերացումներով
ԻՆՔՆՈՒՍՈՒՑԻԶԸ անմրցելի է իր տեսակին մէջ:

Ինքնուսուցչի Ուսուցչական մէթոդը:

Մանկավարժական և Գիտական է.

արդիւնքը Գործնական և Ամփոփական է:

Ինքնուսուցչով ուսանողը չկրնար չը սովորել:

Ինքնուսուցչով սովորածը չէ կարելի մոռնալ:

Ինքնուսուցչիչը տեսնել և թղթատելն անգամ Հաճո-
յալից զբօսանք մը՝ և Հայերէն նորանոր բառեր սով-
որելու միջոց մ'է:

Հոգ չէ թէ Անգլիերէն սովորեցնող քանի գիրք ունիք,
Ինքնուսուցչին միշտ պէտք ունիք:

ԾԱԽՈՒ ԳՆԵՐ. — Ոսկեզօծ Կաշեկազմ \$4.00,

Լաթակազմ \$2.00, Թղթակազմ \$1.75:

Աւելի մանրամասնութեանց և վկայութեանց Համար,
գրեմել առ

B. R. TOROSSIAN
68 - 70 Hudson Street,
HOBOKEN, N. J.

891.99-132

թ - 82

0

ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

Յատկապէս պատրաստուած դպրոցներու, հանդէսներու,
ընկերական խնջոյքներու կամ խրախօսանքներու, և ուրիշ
գաւազան ուրախատիք կամ տրտմատիք խմբումնե-
րու մէջ խմբովին երգելու համար:

Հասցէ

ՊԵՏՐՈՍ Ռ. ԹՈՐՈՍՅԱՆ

❖ Ա. ՀԱՏՈՐ ❖

Կը բովանդակէ

Սրբազան, Ազատաշունջ, Հայրենասիրական

Յեղափոխական, Ռազմական

Նկարագրական, Ողբական, Մանկական

և ուրիշ խառն երգեր:



ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ

Տոգատիպ Տպագրատուն

Պ. Ռ. ԹՈՐՈՍՅԱՆԻ

Հօլլոքըն, Ն. Ճ.

1917

11916



COPYRIGHT 1917
BY
B. R. TOROSSIAN

4540-42

2312
39 +



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ուրիշ էն, երբեւ կը յանկան։

Տրոր էն, ողբու մէն կ'ըլան։

Աւանդական վիճակի մէջ կ'երբեն Ինչիւնէն զբօսելու համար,
Հասարակական մէջ կ'երբեն արեւելեան ու արեւմտեան համար։

Ուրեմն ամեն պարագայի տակ երգելու պէտք ունինք։ Եւ առ հասարակ երգուած երգերու եղանակները գիտենք բաց ոչ խօսքերը։ Կը պատահի ալ որ երգուած երգի մը եղանակը եթէ կանխաւ չը գիտնանք ալ, պիտի կրնանք սակայն խմբովին երգուած պաշտօն ձայնակցիլ, եթէ խօսքերը կամ բերանացի գիտնալինք, և կամ աչքերնուս առջև դրի վրայ ունենալինք։ Ահա այդ դժուարութիւնը բառնալու համար է որ լոյս տեսաւ սոյն ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆԸ. և որոյ գինն ալ՝ հակառակ ներկայիս թղթի խիստ սղութեանը, արտակարգ աժան նշանակած ենք, որպէսզի Հնար ըլլայ ամեն մէկ տան, դպրոցի, ժողովասրահի և Հանդիսասրահի մէջ առնուազն Հինգ կամ տասն օրինակ գտնցնել, և աշակերտով խմբովին երգուած պաշտօն, ձեռքի վրայ գտնուած մէկ օրինակը չստիպուին ձեռքէ ձեռք քաշելով պատուտել, և կամ մէկ երկուքը երգեն, միւսները երգարան չը գտնուելուն համար արգելուին երգելէ։

Յառաջընթաց պարբերութենէն որոշ կը հասկցուի սոյն շարքի հրատարակութեան գործնական նպատակը. և որմէ գիւրին է հետեցնել թէ ինչու սոյն երգերը հաւաքած և դասակարգած պաշտօն, մասնաւոր խնամք չը տարինք մատենագրական, բանաստեղծական կամ տաղաչափական «Հատընտիր» մ'արտադրելու, այլ մեր մասնաւոր հոգածութիւնը եղաւ Ամերիկահայոց մէջ արդէն ընդհանրացած եղանակներուն խօսքերն ալ ընդհանրացնել, որպէսզի Հնար ըլլայ մեր խսկական նպատակը ազգային օգտակարութիւն մը ձեռք բերել. այն է

(ա) Այս օտար հողին վրայ մեր Մայրենի Լեզուի (ՀԱՅԵՐԵՆԻ) գոյութեան պահպանմանը սատարել, և Հայրենիքի ու մերայնոց սէրը վառ պահել։

(բ) Մեր ազգը բնաջինջ ընող Թուրքի, Լպիրջ Թուրքիները կանչելու սովորութիւնը, (ինչ որ ներկայիս մեզ ամենամեծ աւերած ու նախատինք մը կը կազմէ) արմատախիլ ընել։

Ահա սոցն հատորը Ամերիկահայ ժողովրդին ընծայելով, իրենց կը չանձնենք նաև մեր իսկական նպատակի առաջին մասի դործադրութիւնը, որն անտարակոյս ենք ինչպէս մեր նոյնպէս ալ իրենցմէ ամեն մէկի ալ բաղձանքն է:

Իսկ սոցն չարքի Բ. Հատորը, որ արդէն պատրաստուած է և պիտի բովանդակէ Միւրերգներ, Հարսանեկան Երգեր, Հարսու-Փեսայի Գովասանքներ, Գեղջկական Երգեր, Պարերգներ, ևն. պիտի ծառայէ մեր իսկական նպատակի ր. մասը իրագործելու:

Եւ եթէ սոցն երկու Հատորներու սպառումը մեզ քաջալերէ, աչն ատեն պիտի հրատարակենք սոցն չարքի Գ. Հատորը, որ պիտի պարունակէ Հին և Նոր Մատենադարական, Բանաստեղծական, Տաղաչափական Հատընտիրներ, Հաչերէնի Գեղեցկութեան ճաշակը ընդհանրացնելու և Հայ արժանընտիր մատենագիրներն ժողովրդակացնելու համար:

Կ'արժէ աւելացնել որ այս առաջին Հատորին մէջ գետեղուած են միայն աչն երգերը, որոնք իրենց եղանակներով ժողովրդականացած են վեջին վաթսուն տարիներուն մէջ: Դուրս թողուած են անոնք՝ որոնք անդործածելի են դարձած ներկայիս:

Բոլոր երգերու թէ գրութիւնները և թէ հեղինակներու անունները հնար եղած չափով ճշգրտած են բաղձազան բաղդատութիւններով:

Մեր ջնորհակալութիւնները կը չաչանենք ներկայիս ամեն անոնց, որոնք իրենց քով գտնուած հաւաքածոցները մեզ տրամադրելի ընելով դիւրացուցին սոցն հատորի հրատարակութիւնը:

Պ. Ռ. ԹՈՐՈՍՅԱՆ

ԾԱԽՈՒ

Գին

Ամերիկեան Քաղաքացի (Քաղաքացի ըլլալ ցանկացողներուն համար	\$1.00
Ծննդեան Շարականներ, Գանձ և Տաղեր	.10
Յարութեան Զատիի Շարական (Հայերէն և Անգլիերէն) Եւրոպական Նոթաներով, մեծադիր .25	
Ո՞վ է Մկրտիչ Փորթուգալեան	.10
Թաղաւորաց Ժողով (Հայերէն և Անգլիերէն)	.30
Մկրտիչ Աւետիսեանի Խոշորադիր պատկերը	.25
Երազահան և Վիճակարան	.30
Հայ-Ամերիկեան Ազգային Երգարան (Ա. ՀԱՏՈՐ)	
Լաքակազմ	1.00
Հինգ Հատ միասին	4.00
Թղթակազմ	.75
Հինգ Հատ միասին առնողներուն	3.00

Մեզմէ կարելի է տտանալ նաև

ԵՐԱՆԻ բոլոր հրատարակութիւնները

իր վաճառած գներով:

Աւելի մանրամասնութեանց և գներու համար

դիմել առ

B. R. TOROSSIAN

68 - 70 Hudson Street,

HOBOKEN, N. J.

ՀԱՅ - ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

Ա. ՄԱՍ
ՍՐԻՆՉԸՆ ԵՐԳԵՐ

✠

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂԾՔ

ՈՎ ՀԱՅՐ, մեր Հայր, որ ես չերկին,
Սուրբ եղիցի անուն քոյն,
Եկեսցէ մեզ Աստուած Հօր,
Արքայութիւն քո երկնաւոր,
Եղեցին կամք քո խնկելի,
Որպէս չերկինս և աստ չերկրի:
Ձեաց Հոգւոյն մեր և մարմնոյ,
Տուր մեզ աչսօր շնորհիւ քո.
Եւ թող մեզ, թող զմեր պարտիս,
Որպէս և մեք թողունք չաստիս,
Ամենեցուն որք մեզ մեղան.
Կամ մնացին մեզ պարտապան:
Ո՛հ, մի տանիր ի փորձութիւն,
Այլ Հանապաղ Հաս չօգնութիւն.
Եւ չամենայն չարին մրցմանց,
Փրկեա զմեզ, Տէր գթութեանց.
Ձի քո է միշտ արքայութիւն.
Գո փառք պատիւ և զօրութիւն:

ԽՈՐԷՆ ԵՊՍ. ՆԱՐ-ՊԵՅ
(Լուսինեան)

ԱՂԵՐՍ

(Կ'երգութի Պատարագի կամ Հսկում Տէր Ողորմեաի հետ)

ԱՐԻ՛ Աստուած Հարցն մերոց ,
Որ ապաւէնդ ես նեղելոց ,
Հա՛ս օգնութիւն ծառայից քոց ,
Լեր օգնական ազգիս Հայոց :

Միջնորդութեամբ սրբոյ Խաչին ,
Եւ անարատ սուրբ ծնողին .
Յիշեա՛ զհեղուծն արեան Փրկչին ,
Ե՛լ ի խնդիր փոքու Հօտին :

Զի գիտացաք մեք Հաւաստեալ ,
Որչափ մեղաց մերոց լըցաւ .
Ուստի և Տէրդ մեր բարկացաւ ,
Առ ի խրատել զմեզ զարթեալ :

Արդ անկանխմբ առաջի քո ,
Գոչեմք մեղաց Տեառնդ մերոց .
Անցո՛ ի մէնջ զցասուծն քոյ ,
Վասն անսպառ գթութեան քո :

ՍԻՄԵՕՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌԱԻՕՏԵԱՆ ՄԱՂԹԵՐԳ

Ով երկնքի երկրի Տէր , Դու մեր բարի Հայր ,
Խնդրում ենք Քեզ մաղթանքներս ընդունիլ , և շնորհ
Հիր բարի միտք որ լաւ ուսանինք և բարի լինինք :

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ ՄԱՂԹԵՐԳ

Հրեշտակ զուարթուն , Հօր պահապան մեր ,
Որ զաիւ ողջոյն զմեզ խնամեցեր ,
Ի մուտս արփոյն , Դու լոյս անստուեր ես մեր ,
Կացցես մեզ յայս գիշեր :

Քուն քաղցր անփորձ շնորհեա ի փառս Աստուծոյ ,
Եւ զծնողս Հոգւոց և մարմնոց կեցո :

Ն. ՏԵՐ ԴԵՒՈՆԴԵԱՆՅԻ հաւաքածոյներէն

ՇԱՐԱԿԱՆ Ս. ԾՆՆԴԵԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴ մեծ և սքանչելի , որ յայտն առուր յայտնեցաւ
Հովիւքն երգեն ընդ Հրեշտակս տան աւետիս աշխարհի :

Ծնաւ նոր արքայ ի Բեթլէհէմ քաղաքի որդիք մարդկան
օրհնեցէք զի վասն մեր մարմնացաւ :

Անբաւելին երկնի և երկրի իխանձարուրս պատեցաւ ոչ
մեկնելով ի Հօրէ ի սուրբ աչրին բազմեցաւ :

Այսօր ցնծան երկինք իվերուստ մեծապաշտոն աւետեօք և
աւարածք ամենայն զգեցան Հանդերձ փրկութեան :

Այսօր յաչրին ընծայեցաւ Քրիստոս , Որդին Աստուծոյ և
Հ եղինաց բազմութիւնք չերկնից չերկրի վայր իջեալ :

Այսօր Հովուացն տեսեալ զարդարութեան արեգակն . և
ընդ Հրեշտակս երգեսցուք «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ :»

Ի Հօրէ ծագեցար լուսաւորել զարարածս , արդարութեան
արեգակն , Տէ՛ր , փառք Քեզ :

Ծնար ի յաչրին , ընծայեցար Բեթլէհէմ , արդարութեան
արեգակն , Տէ՛ր , փառք Քեզ :

Հովուացն յայտնեցար երկրպագեալդ ի մոգուցն , արդա-
րութեան արեգակն , Տէ՛ր , փառք քեզ :

Եւ մեք երգեսցուք որ իկուսէն մարմնացար , արդարու-
թեան արեգակն , Տէ՛ր , փառք քեզ :

ՏԱՂ ԾՆՆԴԵԱՆ

ԱՅՍՈՐ տօն է ծննդեան . աւետիս .

Տեառն մերոյ և յայտնութեան . աւետիս :

Այսօր արեւն արդարութեան . աւետիս :

Երեւցաւ ՚ի մէջ մարդկան . աւետիս :

Այսօր Հրեշտակք չերկնից իջան . աւետիս .

Ընդ մեզ օրհնեն զանձա՛հ արքայն . աւետիս :

Արող մի պաշտօն և պատուական . աւետիս .

Երեւցաւ ՚ի Հընդկաստան . աւետիս :

Մեծ թագաւորք Ժողովեցան . աւետիս .

Յուով դպիրք և շատ իշխանք . աւետիս :

Չատուղն տեսին և զարմացան . աւետիս .

Շատ քրննեցին և չիմացան . աւետիս :

Յնձա՛ ցնձա՛ Դաւիթ արքայ. աւետիս.
 Հնչեա՛ դքնարն քո և խաչտա՛. աւետիս:
 Զոր ասացեր նախագուշակ. աւետիս.
 Կատարեցաւ յոյժ գերունակ. աւետիս:
 Թէ՛ ՚ի Սաբայ և Յարաբայ, աւետիս.
 Սուրբ պատարադ բերցեն նրձա. աւետիս:
 Ահա՛ երեք արքայ եկին. աւետիս.
 Որ երեքեանն անուանին. աւետիս:
 Մեղքոն, Գասպար և Պաղտասար. աւետիս.
 Որք ՚ի Սաբայ և Յարաբայ. աւետիս.
 Ոսկի՛ կնդրուկ՝ զըմուռ նմա. աւետիս.
 Ունին երեք ազնիւ ընծայ. աւետիս:
 Ոսկին զպատին արքայական. աւետիս.
 Կընդրուկն ըզգարդ Աստուածութեանն. աւետիս:
 Զըմուռն որ էր անապական. աւետիս.
 Նըշան թաղման և չարութեան. աւետիս:

ՇԱՐԱԿԱՆ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ

ԱՅՍՈՐ ՅԱՐԵԱՒԻ ի մեռելոց փեսայն անձա՛ և երկնաւոր,
 քեզ աւետի՛ք խնդութեան, Հա՛րսն ի չերկբէ, եկեղեցի. օրհնեա՛
 ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիրովն:

Այսօր անձառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց զմանկունս քոյ.
 լուսաւորեա՛, Նրուսաղէ՛մ, քանդի չարեաւ լոյս քո Քրիստոս,
 օրհնեա՛ ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիրովն:

Այսօր խաւարն անդիտութեան Հալածեցաւ երբեա՛կ լու-
 սովն, և քեզ ծագեաց լոյս գիտութեան, չարուցե՛ալն խմեռելոց,
 Քրի՛ստոս, օրհնեա՛ ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիրովն:

Այսօր զատիկ մեր զենմամբ Քրիստոսի, արասցուք տօն
 ցնծութեամբ նորոգեալքս ի Հնութենէ մեղաց ասելով, Քրիս-
 տոս չարեա՛ւ ի մեռելոց:

Այսօր Հրեշտակն լուսափալ ի չերկնից իջեալ զարհուրե-
 ցոց զպաշտպանսն, և սուրբ կանանցն քարոզէր ասելով Քրիս-
 տոս չարեա՛ւ ի մեռելոց:

Այսօր Նոր Իսրայէլ կոչեցեալք ի Քրիստոս, ազատեալք
 արեամբ Գառնին Աստուծոյ, պարեսցուք ընդ երկնայնոցն ասե-
 լով Քրիստոս չարեա՛ւ ի մեռելոց:

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՂԹԵՐԳ

(Կ'երգուի նաև Ամերիկեան Ազգ. երգի «America»ի եղանակով)

Տէր՝ կեցո՛ւ դու ըզՀայս
 Եւ արա՛ զնոսա պաշտառս.
 Կեցո՛ւ ըզՀայս.

Զողորմութիւնդ վերին
 Հաճեա՛ ձօնել նոցին,
 Զի նովաւ մարթացին
 Ապրիլ յաստիս:

Ո՛վ Տէր մեր, Տէ՛ր փութա՛,
 Զազդ մեր Համայն փրկեա՛
 Ի թըշնամեաց.

Կալիո՛ դաշըս նոցուն,
 Հա՛տ զարմատոցն ըզբուն,
 Եւ զազդ մեր պարտասուն

Արա՛ Հըզօր:
 Աջովդ Համատարած
 Զազդ մեր արտաՀալած
 Փոյթ գումարեա՛

Յաշխարհ Արարատեան
 Ի վաչր մեր ծընընդեան
 Որ աշտ՛ է սեպհական
 Օտար անգագ:

Ի քո իջեալ տեղի
 Զաթոռ Հայրապետի
 Մեր Հաստատեա՛.

Զերկարութիւն կենաց
 Հօր մեր աստուածազգեաց,
 Շնորհեա՛ պետին մեր Հարց
 Որ զմեզ Հովուէ:

Առաքեա՛ ՚ի բարձանց
 ԶՀամակցութիւն կամաց
 Ի մերազնեացս.

Զոմըն ՚ի մէջ չարո՛
 Պաշտպան ազգի մերոց,
 Տուր նրձա ցուպ Հովու
 Հովուել ըզմեզ:

Մ. Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆՑ

ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՂԹԵՐԳ

Իջի՛ր, արքայ Հոօր,
Անունըդ փառաւոր

Տուր որ դովենք-

Ամենաաւելի եղող,
Ամեն տեղ միշտ չաղթող
Եղի՛ր մեր վրայ տիրող-

Քեզ կ'աղաչենք:

Իջի՛ր, Յիսո՛ւս Փրկիչ,
Եղի՛ր մեզ պաշտպանիչ,

Մեզ միշտ օգնէ-

Քու օգնութիւնըդ մենք
Մեզի պարիսպ ընենք-
Քու վրադ մեր լոյսն դնենք,

Տէր, մեզ լսէ:

Իջի՛ր, ո՛վ, Սուրբ Հոգի,
Եւ Հիմա տուր մեզի

Վկայութիւն,

Թէ Տէրն մեզ կը սիրէ-
Մեր սիրտն առ, դուռն տիրէ
Մի Հեռանար մեզմէ,

Հոգի սիրուն:

Ո՛վ դու երեսակ և մի,
Մեծ գովութիւնք քեզի

Անդուլ տրուին-

Քու փառքդ տուր որ մենք
Երկնից մէջ վայելենք,
Ու քեզ փառաբանենք,

Տէր երկնային:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ

Էին ՓԱՌԱՅ նշույ անշէջ, ամենազօր Սուրբ Հոգի,
Մերթէ խաւար մեր սրտերէն, ազդէ ի մեզ միտք բարի:

Օրհնեալ երգով զարքան փառաց, ի սուրբ քնար տասնադի,
Որ միշտ անեղ է և անմահ, Տէրն Տէրանց կենդանի:

Դաւթին տուիր ազօթք ու սէր, Սողոմոնին միտք Հանճար,
Մեզ ևս տուր օրհնեալ Հոգի, շնորհք և լոյս սրբարար:

Միշտ ևս պատրաստ, միշտ զթառատ, պարզ և տալու
Քաղցրաբար,

Շարժէ զՀոգիս ի սէր վերին, կազմէ մարդիկ սուրբ տաճար:

Ոչ զոչ պարարտ, ոչ դանձր առատ, չեն քեզ Հաճոյ պատարագ-
Քննես զամեն ընտրեալ զխոնարհ, Հանդիս ինա խանդակաթ:

Յօդէ անձրև հօտիւ վրայ, պարարտ արօտ տուր ճարակ-

Սիրով պճնիմք, Հոգւով Հրճուիմք, փառս վեր երգեմք Քեզ
անՀատ:

ԳԵՐԻ ՀԱՅՈՒ ԱՂՕԹՔԸ

Գոհ ենք քեզանից, ո՛վ Բարերար,
Օրհնեալ լինի միշտ քո անուն-

Արդար արեդ աչք լուսավառ
Թո՛ղ Հեա բերէ մեզ փրկութիւն:

Ո՛հ, ուրախ օր շնորհի՛ր, Տէ՛ր,

Մեր խղճալի Հայրենիքին,

Նորա սիրուն տարեր ու դաշտեր

Օրհնում են քեզ եռանդաղին:

Մի՛ տար, Աստուած- որ կործանուի

Սըրբակը՞ծն Հայոց աշխարհ,

Թո՛ղ քաղցր անուն Հայաստանի

Մնայ կենդան միշտ մեր Համար:

Բա՛ց մեզ քո դուռն ողորմութեան,

Յետեւ, Մոխէս մեզ ուղարկի՛ր,

Որ այս դրժնեայ եղիպտոսից՝

Աւետեաց մեզ տանեն չերկիր:

Ո՛հ, աչն աշխարհ, ուր առաջին

Քարոզեցաւ Աւետարան,

Փայլեց դրօշը ծիրանածին,

Կանգնեցաւ թաշ Քրիստոսական:

Ուր նուիրական նահատակներ՝

Դէմ վիշապին զինուորեցան,

Պատերազմի կանաչ դաշտեր

Նոցա արեամբը ներկուեցան:

Ուր մեր Հայրեր երանելի,

Դրիգոր, Ներսէս, Մեսրոպ, Սահակ,

Մեծարեցին անուն ազգի,

Եւ նընջեցին ծաղկապրտակ:

Ս. Շահազիզեան

ԶԻՆՈՒՈՐԻՆ ԵՐԳԸ (Թարգ. Onward Christian Soldiers)

«Բարի պատերազմը պատերազմեցայ» Բ Տիմ. Դ. 7:

Օ՛հ, Փրկչին զինուորներ, Քրիստոս մեր Տէր Արքան,

Օ՛հ, չառաջ ի մարտ, Առաջնորդն է մեր,

Պաշանիչ դրօշը ձեր Օ՛հ, կուրինք չաղթական,

Թող ծածանի չաղթ- Բռնենք դրօշն ի վեր:

Խմբերգ
 Օ՛րն, Փրկչին զինուորներ,
 Օ՛րն, չառա՛ջ ի մարտ,
 Խաչանիշ դրօշը ձեր
 Թող ծածանի չաղթ։

Տէրոջ Եկեղեցին
 Շարժի զերթ բանակ,
 Մեզ ալ պահուած է Հին
 Սըրբոց չաղթանակ։

Մընանք միշտ անբաժան
 Մէկ սիրտ մէկ Հոգի,
 Միրով եղբայրութեան
 Յոյսովն Հաւատքի։

Խմբ. — Օ՛րն, Փրկչին, Էն։

Գահեր կը կործանին
 Ու պետութիւններ,

Տէրոջ Եկեղեցին
 Կը մնայ աներեր։

Դրժոխքին սև դռներ
 Յաղթել չեն կարող,
 Զալդ խոստացած է Տէր
 Անտու խոստումով։

Խմբ. — Օ՛րն, Փրկչին, Էն։

Օ՛րն, դուք ժողովուրդներ,
 Միացէ՛ք մեր խումբին։

Խառնեցէք ձայնն ալ ձեր
 Յաղթութեան երգին։

Փա՛ռք, պատի՛ւ մեծ Փրկչին։

Թաղաւորին մեր,
 Թող միշտ մեզ ձայնակցին

Մարդիկ, Հրեշտակներ։

Խմբ. — Օ՛րն, Փրկչին, Էն։

Թարգ. ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ԲԵՐԴԻՆ ՏԻՐԵՑԻՔ

ՔԱՁ եղէ՛ք ո՛վ եղբայրներս, մերձ է օգնութիւն,
 Վերը կ'երևալ նշան, ստուգ է չաղթութիւն։

Օ՛րն չառաջ կ'ըսէ զօրապետն, բերդին տիրեցէք,
 Կը տիրենք Տէր քու օգնութեամբ պատասխան տուէք։

Մեր չանդուդն թշնամիներ բազմութեամբ կուգան,
 Եւ անոնց վատ զօրապետն ինքն է չանդիման։

Օ՛րն չառաջ կ'ըսէ, Էն։

Պանծալի է մեր դրօշակը, փողը կը լսենք,
 Մեր զօրապետին անուամբ պիտ' անշուշտ չաղթենք։

Օ՛րն չառաջ կ'ըսէ, Էն։

Դառն երկար է պատերազմն, սակայն դիմացէք,
 Մեր անչաղթ զօրապետն Հոս է, քաջ եղէք։

Օ՛րն չառաջ կ'ըսէ, Էն։

Ե.ՕԼՏՏԵՇՆՈՒՆՔ ԵՐԳԵՐ

→→

ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

ԱԶԱՏՆ Ատուածն այն օրից՝
 Երբ Հաճեցաւ շունչ փչել։
 Իմ Հոգանիւթ շինուածքին,
 Կենդանութիւն պարգեւել։

Ես անբաժարու մի մանուկ
 Երկու ձեռքս պարզեցի,
 Եւ իմ անգոր թեւերով,
 Ազատութիւն գրկեցի։

Մինչ գիշերը անհանգիստ՝
 Օրօրոցում կապկապած։
 Լալիս էի անդադար,
 Մօրս քունը խանգարած։

Խնդրում էի նորանից
 Բաղուկներս արձակել։—
 Ես այնօրից ուխտեցի՝
 Ազատութիւնը սիրել։

Թոթով լեզուիս մինչ կապերն՝
 Արձակուեցան, բացուեցան։
 Մինչ ծնողքս իմ ձայնից
 Խնդացին ու բերկրեցան։

Նախկին խօսքն որ ասացի՝
 Չէր Հալը, կամ մալը, կամ ալ ինչ,
 «Ազատութիւն» դուրս թռաւ,
 Իմ մանկական բերանից։

«Ազատութիւն» ինձ կրկնեց՝
 Ճակատագիրը վերեւից։
 «Ազատութեան դու զինուոր,
 Կամի՞ս գրուիլ այս օրից»։

«Ո՛հ, փշոտ է ճանապարհդ՝
 Քեզ շատ փորձանք կ'սպասէ։
 Ազատութիւն սիրողին,
 Այս աշխարհը խիստ նեղ է»։

23/8
 59

«Աղատութիւն», գոչեցի
Թո՛ղ որոտայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թո՛ղ դաւ դնէ թշնամին:

Ես մինչ ի մահ կախաղան*
Մինչև անարդ մահու սիւն,
Պիտի գոռամ սլիտ կրկնեմ,
Անդադար՝ աղատութիւն:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՅ
(Կոմս Էմմանուէլ)

(Հիւսիսափայլ 1859)

Ի Զ ԷՆ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ աչն վառ սէրը
Թունդ որոտաց իմ սրտում,
Իմ Հայրենեաց սուրբ անունը
Ինձ պատերազմ է կանչում:

Ելէ՛ք, ելէ՛ք, Հայկազունք,
Ելէ՛ք, Հայկաց զաւակունք,
Ելէ՛ք, ելէ՛ք, Հայ եղբարք,
Առէ՛ք ձեր սուրն ու նիզակ:

Ահա՛, եղբարք, Հայ եղբայրներ
Առէ՛ք զրազ, սուր, դէնքեր,
Մահը դաշտում Շաւարշանայ
Մեզ հրաւէր կը կարդայ:

Ելէ՛ք, ելէ՛ք, Հայկազունք, ևն:
Ա՛խ Հայրենիք, սուրբ անունըդ
Անշէջ վառի իմ սրտում,
Մեր Հայ եղբարց շիրիմները
Իրանց գըրկին մեզ կանչում:

Ելէ՛ք, ելէ՛ք, Հայկազունք, ևն:
Այս օրերը մեր քաջ կեանքին
Նուիրական թող լինին.
Ո՛վ սիրոյն է Աղատութիւն,
Թո՛ղ չմոռնայ Հայ անուն:

Ելէ՛ք, ելէ՛ք, Հայկազունք, ևն:

ՄԱՀԱՄԵՐՁ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

ԱԶՆԻԻ ընկեր, մեռանում եմ,
Բայց Հանգիստ եմ ես Հողում
Իմ թշնամիքս ես օրհնում եմ,
Օրհնում եմ քեզ Աստուծով:

Հեռանում եմ, անգին ընկեր,
Զրգնահատուած ոչ ոքից.
Բայց Հաւատեալ անձնանուէր
Ազգիս մշակ կը Հաշուիմ:

Ազնիւ ընկեր, չըմտանաս,
Անդաւաճան ջերմ սիրով.
Ես սիրել եմ իմ Հայրենիք,
Գնա և դու նույն շաւղով:

Սեղծութիւնը Հայոց ազգին,
Վարեկցաբար մտածիր.
Ոսկէ գրքոյկն Եղիշէ՛ր՝
Քաջ առաջնորդ քեզ ընտրիր:

Անտեղ սուրբ կրօն, ազդ միաբան,
Ազատ կամքով ու խղճով,
Անտեղ Վարդան, անմահ Վարդան,
Իւր խնկելի քաջներով:

Հայրենիք սեղան սրբութեան
Ես Աստուծոյ առաջն,
Շատ կ'աղաչեմ, շատ կ'արտասուեմ,
Որ ծագէ քեզ նոր արև:

Իմ մտերիմ, մահս մօտ է,
Բայց Հանգիստ եմ ես Հողում,
Որովհետև խիղճս արդար է
Ճշմարտութեան ջատագով:

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՅ

Երգ ի Հանդէս Տասներորդ Տարեդարձի
ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

ԱՂԼ ԹՈՂ դադրին արտասուք Հայուն աչերէն,
Փռչոտ քնարն վար անունի ա՛լ որմէն
Եւ սիրարծարծ նուազս իր լարք թող հնչեն
Զի Հայք աչսօր սէր միութիւն կը գոչեն:

Սիրոյ մեր նշան
Սահմանադրութեան
Մաղթենք բարձր ի ձայն
Կեցցէ՛ր չաւիտեան:

Հայե՛ր, երթանք լեռ, ձոր գուարթ պարելով,
Հայաստանի մեր սիրելի հէզ ձօր քով.
Զմեկ բաժնող խաւարն վանենք և չառա՛ջ
Երթանք սիրել ծաղկունս ոտքին ընդ առաջ:

Հայոց լուսատուն
Սահմանադրութիւն
Գոչենք միաձայն
Կեցցէ՛ր չաւիտեան:

Մեր Հայրենեաց արիւնագանգ սուրբ դաշտեր,
Ե՛րբ կը բուսնին արդեօք փշոց տեղ վարդեր.
Ե՛րբ կը կանգնին աւերակներն և Հայեր
Ճանչնան իրենց պարտք իրաւունք. աչս՝ ուխտ մեր:

Հայրենեաց ի նուէր
Պատրաստ մեր սրտեր
Սահմանադրութեան
Կեցցէ՛ր ձայն կուտան:

Ահա պարտուց և իրաւանց սուրբ դրօշակ
Կը ծածանի մեր խեղճ ազգին ջուշն ու փառք.
Սահման, օրէնք դրոշմած կան իր վրան
Որոնք կրնան կեանք տալ Հայոց ազգութեան:

Ազգի կենսատուն
Սահմանադրութիւն,
Գոչէ՛ր Եւգոկեան,
Կեցցէ՛ր չաւիտեան:

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

1870, Եւդոկիա
(Եղանակ Բժիշկ Յ. Աղապապեան)

ՀԱՌԱԶԱՆՔ ԱՐՄԵՆՈՒՀԻՈՅՆ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Ա՛խ, Հայաստանս, սիրտս ու հոգիս քեզ նուիրեմ, ընդունէ՛.
Թէ կարելի, թո՛ղ ես մեռնիմ ու Հայաստանս ոտք ելնէ.
Անոր սիրոյն բանտն ալ դրուիմ, պալատ է ան ինձ Համար.
Ոտքերս ձեռքերս չըղթան զարնեն, երջանկութիւն է ան ալ:

Թէ մինչև իսկ աքսորուիմ, զիս թափառական ընէ բաղդ,
Հայաստանիս սիրոյն Համար ամեն տեղ ինձ կըլլան դրախտ.
Նըպատակիս Համարի՛մ միայն, թո՛ղ զիս Հանեն կախաղան,
Կախաղանէն ալ խեղդուող ձայնս պիտի կանչէ ՀԱՅ ԱՍ ՏԱՆ:

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

(Եռյն երգը, որոյ սրբան խօսքերն սիրուած՝ նոյնքան եղա-
նակն ընկանրայած է, վերջաբանն է միայն «Երբ կը լսեմ
Հայաստանիս անունն, թնդալ սիրտս ուժգին»՝ առանձառփին,
որը մեծանուն Հայրենասէրը գրած է 1873ին Եւդոկիա բան-
տին մէջ:)

ՎԱՆԵՑԻ ԳԵՂՋՈՒԿԻ ՏԱՂԸ

ԱՂՕԹԱՐԱՆԸ բացուեցաւ, ժամանակ է զարթելու.
Երթամ ախոռ, գոմշուկներս լըծեմ՝ գութան վարելու:
Դէ՛հ, գոմշուկներ, ելէ՛ք, ելէ՛ք, արտը երթանք աշխատինք,
Հարկ ու խարճին վատէն ձօտ է, վօթենք արուն ու քրտինք:

Հալի գութան, Հալի գութան, որի՞ Համար կը ջանաս,
Ո՞վ քեզիմով կը տանջուի, որի՞ն գութ կուշտ Հաց կուտաս.

Ան օր, երբ քեզ ձեռքս առի, ազատ օրս կորուցի.
Անպիս սիրտս վհատեցաւ, հոգիս թուրքին մատնեցի:

Բա՛ւ է, գութան, մեր տանջանքը՝ Համբերութիւնն վերջ ունի.
Դ լն տեսա՞ր որ մեր գուշմանը՝ ամօթ, խելը ու գութ Հունի:

Արի՛ փըշրեմ ես քու խովը, տանք դարբինին կըռելու,
Կըռենք-կոփենք սուր ու սուսեր, գուշմանի դէմ կուռելու:

Եզրարք Հայեր, առէք խովը՝ առէք դարբինին կըռելու,
Կուռ-կոփել սուր ու սուսեր Հայաստանը փրկելու:

ԲԱՄԱՌ-ԲԱԹԻՊԱ

ՅՈՅՍ

Ա.Հ.Ա' կ'երթամ, սիրելի մայր,
Ազգիս Համար մեռնելու,
Քաջ ընկերօքս ես միասին,
Անդուժ քիւրդին ջարդելու.

Մի' լար, մայր իմ, մ'ողբար, մայր իմ
Վերադարձիս ըսպասէ,
Ազգիս Հայոց ազատութեան,
Տիւ և գիշեր աղօթէ:

Ա.Հ.Ա' կ'երթամ, սիրելի քույր,
Նպատակըս է բարի,
Ձենք զիմանար, մենք գերի ենք,
Իբր վեց Հարիւր տարի.

Մի' լար, քույր իմ, մ'ողբար, քույր իմ,
Վերադարձիս ըսպասէ,
Ազգիս Հայոց ազատութեան,
Տիւ և գիշեր աղօթէ:

Ա.Հ.Ա' կ'երթամ, սիրելի Հայր,
Մնաս բարեաւ դու Հիմայ,
Այսքան ճնշման տակ ինկած է,
Հայր ինչպէ՞ս զիմանայ:

Մի' լար, Հայր իմ, մ'ողբար Հայր իմ,
Վերադարձիս ըսպասէ, հն:

Ա.Հ.Ա' կ'երթամ, սիրելի կին,
Քու արտասուք չը Հոսէ,
Պատերազմի դաշտին վրայ
Իմ ընկերը կը սպասէ.

Մի' լար, տիկինս, մ'ողբար տիկինս,
Վերադարձիս ըսպասէ, հն:

Ո'վ բարեկամք և ազգականք,
Թողէք մեզի ոք երթանք,

Պատերազմի դաշտին վրայ,
Վէրքեր տանք ու ստանանք.

Մի' լար, եղբայր, հն:

Թէ լաջողիմ ողջ կը դառնամ,
Այս ամենը կը մոռնաս,
Թէ պսակուիմ ես սուրբ մահով,
Օր մը անշուշտ դու կուգաս.

Մի' լար, մայր իմ, հն:

Գերեզմանիս քարին վրայ
Թափէ արցունք, ո'վ մայրիկ,
Թափէ արցունք, ցանէ ծաղիկ,
Երիտասարդ եմ, մայրիկ:

Մի' լար, մայր իմ, հն:

Սերաստիա երբ կ'երթայի,
Երկու օրէն դառնայի,
Երկու օրս կ'ըլլար տարի,
Ես քեզ շատ կարօտնայի:

Մի' լար, մայր իմ, հն:

Կ'ելլէի լեռանը վրայ,
Քար մը զարնէի գլխուս.
Իմ գլխուս եկած ձիւները
Մասեաց դադաթն ալ չկայ:

Մի' լար, մայր իմ, հն:

Պարտիզիս մէջ երկու ծառ կայ,
Տեսնողին զարմանք կուտայ,
Հայ քաջերուն արիւնովը,
Կարծես ներկած ճիւղեր կայ:

Արդեօք այս մեր քաջածները
Պիտ' վերջացնես, ո'վ Աստուած,
Փուցէ ողջ ողջ պիտի տեսնենք
Հայ դրօշակը պարզուած:

ՊԱՅՆ ԲԱՐՔԱՆՈՅ ՅԱՆԱՊԱՏԻ

ԱՍՏՈՒԱԾ վկայ որ մենք կը չաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:
Օրէ օր Թուրքը կ'ելլէ մեր տեղէն,
Տեղըս մարդ չի մնաց՝ դատ ծծի տղէն:
«Հայր գէնք չունի» կ'ասէ Օսմանլին,
Անտէր թողեր է նա մեր Հայրենին . . .

Աստուած վկայ որ մենք կը չաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:

Ով Հայ աղբասէր, ո՞ւր ես, ո՞ր ծակն ես,
Աղբային զգացմունք, մի՞թէ դեռ խակ ես.
Լոկ ան, որ կուտաք խուճի և թըղթի,
Հա՛լք, ձեզ կը Հասցնէր աղբային բաղդի.

Աստուած վկայ որ մենք կը չաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:

Ո՞ր կաթողիկոս գրեց մէկ կոնգակ,
Ո՞ր եպիսկոպոս ցըրուեց Հրաւիրակ,
Ո՞ր գիտնականը ձայնը բարձրացուց,
Ո՞ր գորականը թուր ու գէնք վերցուց:

Աստուած վկայ որ մենք կը չաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:

Ա՛խ, անդարձ կ'անցնի լաւ ժամանակը,
Անփութիւն կը մնայ մեր դառն վիճակը,
Սլաւօնի ձեռքէն թափթըփած չղթան,
Քեզ պինդ կը կապէ, խղճուկ Հայաստան . . .

Բաց լաւ չի չեցէք, սառնասիրտ Հայեր,
Որ փրկութիւնը ձեզի շատ մօտ էր . . .
Եւ ես միշտ կ'ասեմ. — «Մենք կը չաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենային»:

ԳԱՄԱՌ-ԲԱԹԻՊԱ

ՈՒՐ ՀԱՅ ԶԻՔ ՎԱՅ

ԱՐԿԱՄԲ Հայոց ժամանակին ընդ անիւ
Փշրին տակաւ մինչդեռ սիրոյ Համբուրիւ,
Ուխտել ի սէր եղբօր՝ զկեանս դնել գրաւ.
Օ՛ն անդր ի մէնջ աչք ընկերին լարել դաւ:

Սրացաւ ի մէնջ բաղդն անՀամբուր,
Արդ նոր բաղդիս քաղցր է Համբուր.
Եղբայր զեղբայր գըզուէ Սիրով,
Ճոխն աղբատին մատչի Գըլթով,
Իանց դիշեր՝ արդ առաւօտ.
Ի ցօղ ժըպտի Մասեաց արօտ.
Եւ վառ ի վառ չողչողելով՝
Լոյսն արեգին ծըփաց ի ծով:

Հասաւ մանկունք,
Վեհ քաջագունք,
Ի գլուխ պսակ,
Ի չաղթանակ.
Առեալ նուազս,
Արագս արագս.
Օ՛ն փութացուք,
Օ՛ն երգեսցուք,

Սէր և գութ
Մեր պսակ
Առ մեր բաղդ
Հրաւիրակ,
Յնծասցեն
Որք լսեն՝
Թէ «ուր Հայ,
Զի՛ք անդ վայ»:

Ե. ՄԵԼԻՔԵԱՆ

ԵՐԳ Մ. ՆԱԼԲԱՆՏԵԱՆՅԻ

ԲԱՐՁՐԱՄԲԱՐՁ լեռներ տեսի ոտքիս տակ,
 Լերանց տակը կարծես ձորեր անշատակ,
 Դեռ չը սերտած անցեալների չիշատակ,
 Ազատ արձակ չափէի դաշտ անդաստան:
 Մանկութեան ջերմ եռանդս էր որ միշտ բարձրեր
 Հրապուրեր երթալ ազատ անվեհեր,
 Հեռի էին բռնաւորին բանը վեհեր,
 Արիւնարբու թուրք անդգագը անսահման:
 Եկաւ մի օր յորում հասակս դարդացաւ,
 Մանկութիւնը չինէն ի բաց մեկնեցաւ,
 Սրտիս մի նոր փափաք ախրեց նաե ցաւ,
 Ըսի բաւ լուռ պէտք է գործեմ անսասան:
 Իսկոյն եռանդս բորբոքեցաւ սրտիս մէջ,
 Արեան չըջան ուժգին առաւ ել և էջ:
 Տրոփեց սիրտս սէրս դարձաւ հուր անշէջ,
 Արդար ազատ գոչեցի ուր Հայաստան:
 Զայն Հիւսիսէն մինչ Արեւելք յառաջեց,
 Հիւսիսի սառ կարծես ձայնէս չախորժեց.
 Յարեւելից մի տխուր ձայն հառաչեց,
 Ըսաւ որդեակ զգոյշ անդ կայ մարդասպան:
 Հիւսիսի փուք իսկոյն ձայնէս սառեցան,
 Կարծրացան նոր բռնութեամբ քարացան.
 Իմ ձայնս իրենց մի չարադոյժ իմացան,
 Գիտցայ արդեւ կայ չիշել անդ Հայաստան:

Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

ՅՈՅՍ ԵՒ ՍՓՈՓԱՆՔ

ԵՐԲ ալեկոծ ծովի վրայ
 Իմ մակուցը խորտակուի,
 Ես փըրփրադէզ ալեաց մէջը
 Դեռ իմ չոյսը չեմ կտրի:
 Բոլոր ոչոքով և համարձակ
 Բազուկներս կը շարժեմ,
 Արիւնները պատառելով
 Դէպի ափը կը թըռչեմ:
 Անհաւասար աչս կռուի մէջ
 Թէ ուժերս ինձ թողնեն,
 Արիւնները չորձանք տալով
 Դէպի անդունդ ինձ տանեն:
 Այն ժամանակ լոկ սիրտիս ք
 Ես կը գտնեմ նորա մէջ,
 Որ մեռնում եմ քաջի նման՝
 :Ճձգի զճձգի Դաւիթ յիսկ
 Գ. ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԶԻՆՈՒՈՐԻ ՄՕՐ ՎԵՐՁԻՆ ԽՕՍՔԵՐԸ

ԶԱՐԹԻՐ՝, որդեակ, ուշ բեր, վեր կաց,
 Պատերազմի փող հնչեց,
 Զարթիր կոչէ ձայն Հայրենեաց,
 Կենաց, մահու ժամ հնչեց:

Պատրաստեր եմ քո գէնք, քո սուր,
 Եւ քո գօտին ոսկեթել,
 Եւ մի պսակ ոսկեփետուր
 Երկինք կանխէր պատրաստել:

Հաւաքեր եմ քո գէնքերը,
 Ահա գլխիդ վերե կան,
 Ինչպէս երբեմն քո դրքերը,
 Երբ կ'երթալիր վարժարան:

Ելի՛ր, կապեմ սուրը մէջքիդ,
 Ասպար կապեմ քու ուսէդ,
 Եւ սուրը դրօշակ Հայրենիքիդ
 Թող ծածանի աջ թևէդ:

Միթէ դու չես չիշեր, երբոր
 Գրիչ ու թուղթ տուի քեզ.
 Փոխան դոցա՝ ըսի մի օր,
 Ուրիշ բաներ կըտամ քեզ:

Ահա փոխան դրիչի՝ սուր,
 Փոխան թղթի՝ կռուի դաշտ.
 Ազգիդ համար դնա կեանքդ տուր,
 Քո մայր ժպտի, երկինք հաշտ:

Գրչով ուսար ազգ, Հայրենիք,
 Սուրով դնա փրկել զայն.
 Մեր Հայրենեաց վըշտաց հէ՛րիք,
 Զըսաւ աշխարհը համայն:

Մեր Հայրենեաց թըշուառութիւն
 Երկրիս ազգէն մէկ չունի.
 Մեր խեղճութիւն, կարեկցութիւն,
 Երկրիս վրայ մէկ չունի:

Գնա՛, որդեակ, աչդ սև չարիք
 Խեղդեց ազգի քո շունջը,
 Գնա՛ փրկել քո Հայրենիք,
 Եթէ ոչ է՞ր քեզ ծնեցի։

Քսան տարի կերակրեցի,
 Մինչև Հասակդ աչդ առիւր-
 Բարձր Հասակիդ մայրդ մեռնի,
 Դու ալ ազգին քո մեռիր։

Խանձարուրիդ ծնար մրմունջ,
 Օրօրոցիդ շուրջը տալ,
 Ազդ, Հայրենիք երգեց իմ շունջ,
 Դու Հայրենեաց ես մատաղ։

Դու Հայրենեաց սեղանին զոհ,
 Մատիւր որդեակ ժամ Հասու-
 Երկինք ու ազդ չաչդ մնան զոհ,
 Մայրդ ալ վասն աչդ քեզ ծնաւ։

Արշալոյսին, վերջալոյսին,
 Ազօթք մ'է վերջ ու առաջ-
 Զքեզ ծներ եմ վասն ազգին,
 Զըսի որդեակ օ'ն չառաջ։

Յառա՛ջ, որդեակ, ահա կ'երթան
 Քո ընկերներ բիւրաւոր,
 Որպէս ընկեր դպրոցական,
 Քաղցր է ընկեր կուռաւոր։

Յառա՛ջ, որդեակ, իմ քաջ, անաչ,
 Տուէ՛ք կուրծք ու ճակատ-
 Հող չէ թէ քեզ կը գտնէ՛ մաչ,
 Զի չաջնժամ ազգն է ազատ։

ՊՕԴՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ



ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ

Թէ իմ ալեւոր հերքըս սենային
 Ոչոք ինձ չեա դար, կըտրի՞ճ դառնայի-
 Նըթոյգ ձի Հեծած, պիտեա ոլորած,
 Ձեռքս թուր առած ես դաշտ կ'երթայի։
 Ես դաշտ կ'երթայի՝ դաշտ Աւարայրի,
 Ողողած, ցողած Հայոց արիւնով-
 Ազդ իմ սիրական, դու ազդ Թորդոմեան,
 Քու կորցրած թագը քեզ չեա կուտայի։

Կ'ասէի Հայոց օրիորդներին,
 Ծախեցէ՛ք Հազի ձեր թանգ շորերը-
 Թողէ՛ք պաճուճանք, զարդ, մարգարիտներ,
 Ժանդոտած ու բութ են մեր թըրերը,
 Տուէ՛ք բեհեգեալ մեզ ձեր շապիկը,
 Որ մենք փաթաթենք մեր մարմնու վէրքը-
 Վերակապ Հիւսէ՛ք դուք ձեր մազերից,
 Էտպէս չաշտնեցէ՛ք դուք մեզ ձեր սէրը։

Թէ ես լինէի Հարուստ մեծատուն,
 Սընտուկներըս չի ոսկւով, արծաթով,
 Շատերուն նման ես չէի լինիլ
 Երբէք ազգասէր ունայն խօսքերով-
 Շամբանիա գինու, փառք ու պատուի տեղ
 Կ'առնուի առատ զընդակ ու վառօդ,
 Արձակ Համարձակ կ'երթայի Հանդէպ
 Հայատեաց ազգաց՝ անթիւ զօրքերով։

Թէ ես լինէի մի երկրի իշխան,
 Կուտայի զօրքիս սաստիկ Հրաման,
 Շուտաքաջ երթալ դէպ 'ի Հայաստան,
 Խրդճուկ Հայ ազգին լինել օգնական-
 Եւրոպ, Ասիա արեան գետերը
 Կը վազընէի Հեղեղի նման-
 Մինչև որ թագ, դա՛ ու ազատ կրօն՝
 Ինձնից չըստանար թշուառն Հայաստան։

Բայց եթէ մի օր, մի ժամ, մի րոպէ
 Աստուած լինէի մեր հողազընդին,
 Ի՛նչ սուր սըլաքներ պիտի չող տայի
 Մեր արիւնարբու թըշնամեաց գընդին։

Նենգ սուր, Գուրդ մորի, Պարսիկ սխերիմ,
Գարաւոր ոսոխ դու Յոյն կրօնամոլ,
Գիտացէ՛ք որ իմ երկսացրի սըրից՝
Անխաւ չէր պըրծնիլ ո՛չ ծի ձեր ողբին:
Գամառ — Քաթիպա.

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Թէ ՀԱՅՐԵՆԵԱՅ պսակադիր
Գողթնի քնարք լուր են.
Երկնից թող դան անմահ Հոգիք
Հաչոց քաջերն պսակել:
Մասեաց գաղաթ թող դան բազմին
Երկնից դունդ դունդ Հրեշտակներ,
Աստուած իջեր ի Հալաստան
Հաչոց արին Հոտոտել:
Փախէք ամպեր Շաւարշանէն,
Ալ մի՛ ցօղէք ձեր ցօղեր.
Շաւարշանը ոռոգուած է
Հաչոց քաջաց արիւնէն:
Եւ կը ծլին ու կը ծաղկին
Այն դաշտին մէջ ոչ խոտ, վարդ.
Այլ Վարդանայ ինկած երկիր
Պիտի ծաղկի սուրբ Հաւատ:
Քանդակագործ քաջն Եղիշէ
Գրիչ ի ձեռն գալ յԱրտաղ,
Չափէ, ձեւէ, գրէ, դրօշմէ,
Կեանք, մահ Հաւատք Վարդանայ:
Ա՛հ, Վարդանայ անուան արժան,
Մասիս կանգնի մահարձան
Մենաստաններ, խաչն ի դմբէթ,
Աւետարան սուրբ տաճար:

Ծագէ արեւ քոյդ ճառագայթ,
Պաղտեաց լեռնէն, մութ խորշեր.
Այն տեղ ինկաւ քաջն Հմայեակ,
Այնտեղ պառկէր ՆաՀատակ:

Լուսին, լուսին, աչքովդ անջուն.
Պահէ Հաչոց ոսկորներ,
Եւ Մալխի զուարթ ցօղով՝
Յօղէ անոնց չիրիմներ:

Արծիւք, բաղէք Հալաստանի,
Եւ արագիլք ամբան Հիւր.
Դուք հսկեցէք այս աշխարհին,
Ժառանգեցէք Հաչոց տուն:

Մոխիրներու վրայ նստէք,
Աւերակներ շինէք բոյն.
Եւ ծիծեռնակ դալ ու երթալ
Մինչև Հաչոց գալ գարուն:

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

ՎՏԱՐԱՆԴԻՆ

Թէ՞ՊԵՏ վըտար քաղքէ քաղաք դամ թափառ,
Քաղդն ու մարդիկ զիս Հալածեն անդթաբար,
Այլ արդէն իսկ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ երբ վեհ ձայն
Թըռաւ բերնէս, չանձն առի դայս վիշտս Համայն:

Ազատութեան ես անձնուէր,
Վիշտ, ցաւ սիրով եմ չանձն առեր:

Թէ՛պէտ Հեռի իմ սիրելեաց դըրկերէն,
Հեռի անոնց գողարիկ ձայնէն, երգերէն,
Տըխուր քնարս նոճիներէն վար կախած՝
Լըռիկ ողբամ խեղճ Ազգիս բաղդն մըտալած,

Ազատութեան ես անձնուէր,
Վիշտ ցաւ սիրով եմ չանձն առեր:

Թէպէտ չաչացս դառն չորդեն արտասուք,
Յաշտնել սրտիս կարօտն ու սուգ և պասուք.
Այդ արտասուք սրտիս վէրքերն լուանան,
Վէրքեր, զորոնք Ազգիս ցաւերն հոն բանան.

Ազատութեան ես անձնուէր,
Վիշտ, ցաւ սիրով եմ չանձն առեր:

Վտարանդի, թէպէտ դառն են աչս օրեր,
Օր մ'ալ տեսնես նպատակիդ ևս հասեր.
Ազատութեան չաղթանակը քո ձեռքիդ՝
Վարդն ու շուշան պըսակ պըճնել դան ճակտիդ.

Ազատութեան երբ անձնուէր,
Վիշտ, ցաւ սիրով ես չանձն առեր:

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

1873 Սեբաստիա

ՀԱՍՏԱՏ ՅՈՅՍԸ

ԹՈՂ ՓՁԷ քամին պաղ, պաղ երեսիս,
Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թող գալ,
Որքան որ կուղէ. թող փչէ հիւսիս,
Յուսով եմ, վաղ ուշ, գարունը պիտ' գալ:

Թուխպը թո'ղ պատէ երկինքը պաշտառ,
Թանձր մառախուղ երկիր թո'ղ փակէ,
Տարրերք աշխարհիս թո'ղ խառնուին իրար,
Յուսով եմ, վաղ ուշ՝ արև պիտ' ծագէ:

Թո'ղ գալ փորձութիւն, թո'ղ գալ հալածանք,
Խաւար թո'ղ դառնայ անաղօտ լոյսը,
Սարսափելի չեն Հալին տառապանք,
Միայն . . . չը հատնէր խեղճուկի չոցը:

ԳԱՄԱՌ-ԲԱԹԻՊԱ

ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՉ

ԺԱՄ է Հայեր, արիք ձեր բաղդն ողջունել,
Լուսոյ դարուն վերածնութեան դրօշի տակ.
Հայրենիք ձեզ հրաւէր կարդայ գալ խմբել
Ուր ապագան ձեր գրուած կայ փառունակ:
Բայ են ասպարէզը ազատ քաջերու,
Եւ երկինք լըցող զգաստ ուխտերու.
Մի՛ ապա, ճարակ մատնէք կոյր մրցմանց,
Քիրան, արտասուք և տենչ ձեր Հայ դիւցազանց:

Յառա՛ջ, չառա՛ջ,
Մեծ է ձեր կոշու՛մ,
Բաջի ծնունդ քաջեր.
Մասեաց տարերէն
Ալեւոր դարեր
Լուռ ձեր կը դիտեն,
Քաջերու շարժում,
Յառա՛ջ, չառա՛ջ:

Մալր ձեր սիրուն, մալր դարերու Հայաստան
Ձեր է կարօտ, ձեր ժիր ու ազատ ջանքերու.
Անոր լուսոյն խամրած դարաստ միաբան
Ելէք պճնել, Հայեր ժամ է քրտնելու:
Ձեր ճակտին ցօղով ջինջ պիտի ցոլան,
Սիւն, կոթող փոշոտ լուսոյ Հայութեան.
Բաւ է ձեր զոհեր, բաւ, ալ միացէք,
Դար նոր ձեզ բանան Աստուած և օրէնք:
Յառա՛ջ, չառա՛ջ, են:

ԵՐԳ ՇՂԹԱՅԱԿԱՊ ՀԱՅՈՑ

Ի ԶՈՒՐ են ի զուր, բըռնաւոր,
Ըսպառնալիք քո ամենայն,
Ո՛չ, քո շղթայք չեն զօրաւոր,
Ընկճել զողիս մեր Հայկական:
Ըզմարմին միայն — զայս մարմին
Կարես դերել քեզ ի նախատ,
Սակայն ոգիք մեր երկնային՝
Սիրտք Հայկազանց են միշտ ազատ:

Աղա՛տ են, աղա՛տ մեր լեզուք,
Մաղթել ըզշանթս Արդարութեան
Ի գլուխ ձեր, ո՛վ արիւնարբուք,
Որ աւերէք զՀայաստան:

Ի դըժոխս անկցին թըշնամիք,
ԱնՀետացին մինչ չաւիտեան.
Կեցցե՛ն ազգ և Հայրենիք,
Կեցցէ՛ անմահ մերս Հայաստան:

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍ. ՆԱՐ-ՊԷՅ

ԻՆՁ ՀԱՄԱՐ ԶԷ

ԻՆՁ Համար չէ գարնան գալը,
Ինձ Համար չէ ծառի ծաղկիլը,
Ուրախութեան սրտի գրգիռը,
Ոչ մի բերկրանք չեն ինձ Համար:

Ինձ Համար չէ կենաց բաղդը,
Ինձ Համար չէ երջանկութիւնը,
Եւ մրաշօն կուսին աչերը,
Նոցա արցունք չեն ինձ Համար:

Ինձ Համար չէ փալլուն լուսնի
Սնտառ ու սար լուսաւորելը,
Գարնան վարդի երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չեն ինձ Համար:

Ինձ Համար չէ բարեկամաց
Մէկտեղ սիրով տօն կատարելը.
Զատիկի օրուայ ուրախ ասելը
«Բրիտանոս չարեաւ» չէ ինձ Համար:

Ինձ Համար չէ ծնողաց լացը,
Ինձ Համար չէ աղջկայ տխրիլը.
Գերեզմանիս վրայ արտասուելը
Բարեկամացս չեն ինձ Համար:

Բաց ինձ Համար կուգայ ժամը
Կ'երթամ թշնամեաց պատերազմը.
Եւ մահառիթ սպանիչ զնդակը՝
Անդ պատրաստուած է ինձ Համար:

(Թարգ.)

Ք. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԱՆՆ

ՎԵՐՁԱԲԱՆ

ՂԻՆՑ — Ամպերը եկան ծածկեցին
Երկինքն ու լուսինն աչքս խեցին.
Մնացի մինակ Հողիս վրդովուած,
Ձեռներս ծոցիս, գլուխս քարշ արած:
Եւ աշնուհետեւ ամեն իրիկուն,
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն,
Նրա տխրամած դէմքը նայելիս,
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս:
Ա՛խ, ցոլա՛, փալլէ՛, տխրադէմ լուսին,
Գուցէ քու փալլից փալլ տաս և Հային:
Պատմէ շատերուն Վարդանի մահը
Կամ ի՞նչպէս կորաւ Հայ ազգի գահը.
Կամ ի՞նչ վեհ սիրով սիրում էր Վարդան,
Հայրենի Հողը — Աշխարհն Հայաստան:
ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ՀԱՅ ԱՊՐԻՆՔ

ՀԱՅ ԱՊՐԻՆՔ եղբարք, մարդկութեան մէջը.
Հայ կնքեր է մեզ պատմութեան էջը.
Հայ անուամբ զմեզ կ'ողջունէ երկինք:

Եղբարք, Հայ ապրինք:
Հայ ապրինք. մեր Հայն է ան դիւցազուն,
Որ ազատութիւն սովբեցուց մարդուն.
Ու մեզ վեհ անուն մը տուաւ բաժինք.

Եղբարք, Հայ ապրինք:
Մեր աշխարհն է սուրբ, մեր Հողին վրայ
Աստուած է քալեր, օրհնելով զԱդամ.
Մեր լեզուն ստեղծեր ու խօսեր նախ Ինք.

Եղբարք, Հայ ապրինք:
Հայն ու մարդկութիւն նոյնն ունին օրրան,
Երկիր փրկութեան է մերս Հայաստան.
Կրօնից նախկին սեղանն է Մասիք.

Եղբարք, Հայ ապրինք:
Հայու պերճ անուն՝ ոչ միայն չերկիր,
Այլ և եթերց մէջ շողայ լուսալիւր.
Քաջ Հայկին աստեղը անմահ են երկինք.

Եղբարք, Հայ ապրինք:

Հայ ապրիլներ, որ ազգ կայ Հայուն նման
Որ ունենայ Հին պարծանքներ աչքան,
Որ ազգ Հայուն պէս շքեղ Հայրենիք.

Եղբարք, Հայ ապրիլներ:

Ըսէ՛ք, որ ազգին չորս առաքեալներ
Երկնից թագաւորն է դեպալան զրկեր,
Որ թագաւորին Հետ թղթակցեր է Ինք.

Եղբարք, Հայ ապրիլներ:

Ո՞վ կրնայ Համբել սրբոց մեր զանուանք,
Մեր պատմութիւնն է նահատակաց ցանկ,
Մեր եկեղեցին չերկրի է երկինք.

Եղբարք, Հայ ապրիլներ:

Քրիստոսի ունինք անդբանիկ օրհներդ,
Հաւատոյ եղանք միշտ ախոյեան մենք,
Հայր զարմացուց զերկիր և զերկինք.

Եղբարք, Հայ ապրիլներ:

Մեր ազգն Հեռեւոյ է ճիշդ Յիսուսի,
Որ խաչն աչքան դար առած է յուսի,
Ո՛չ, չ'իտնարհիր, չ'ըլլար դասալիք.

Եղբարք, Հայ ապրիլներ:

Այո, խաչին կեանք, կեանք է վշտալից,
Այո, Հայուն կեանք, կեանք է ցաւալից,
Բայց խաչն չաղթութեան ունի վեհ կնիք.

Եղբարք, Հայ ապրիլներ:

Մեր քաղցր Հայրենիք, մեր թնգ, գաւազան,
Ամպերն են ծածկեր արևի նման,
Յուսացէ՛ք արև կուտայ մեզ երկինք.

Եղբարք, Հայ ապրիլներ:

Ո՛չ, ճակատագիր մեր, է՛ն միշտ տըխուր,
Զթշուառութեան ուտել Հացն ու ջուր,
Նոր երջանկութեան ապագայ մը ունինք.

Եղբարք, Հայ ապրիլներ:

Հայ ապրիլներ որ մեր որդիք ալ, եղբարք,
Կարենան պարծիլ որ զմեզ ունին Հարք,
Զըլլանք Հայ անուան, չըլլանք նախատինք.

Եղբարք, Հայ ապրիլներ:

Խ. ԵՊ. ՆԱՐ-ՊԷՅ

ՀԱՅԵՐ, ԱՆ ՀԵՐԻՔ

Հա՛յեր, ալ Հերի՛ք այնչափ լուսթիւն,
Մեծ մեծ Հայերի ըրած բռնութիւն,
Ձեզ ի՞նչ վայել է շրջիլ լուրտի պէս,
Ազգատեա՛ց սրտեր, Հերի՛ք ալ Հերի՛ք:

Հայե՛ր, պարծենանք ինչերնո՞ւս վրայ,
Աղքատ, մուրացկան խեղճերնո՞ւս վրայ,
Ձեզ ի՞նչ վայել է ապրիլ Հայուն պէս,
Եղբա՛յր ատողներ, Հերի՛ք ալ Հերի՛ք:

Հայե՛ր, ալ բա՛ւ է, ազգը կեղեքել,
Ձեր եղբայրներուն ի՞նչ կը կողոպտէք,
Այսպէ՞ս վայել է ապրիլ Հայուն մը,
Մատնիչք Հայրենեաց, Հերի՛ք ալ Հերի՛ք:

Հայե՛ր, ի՞նչ խնդաք փրկեալ ազգի պէս,
Իշխան և իշխող գիտուն մարդու պէս,
Ձեզ ի՞նչ վայել է շրջիլ լուրտի պէս,
Եղբայր ատողներ, Հերի՛ք ալ Հերի՛ք:

Գործէ անդադար Հայրի՛կ սրբազան,
Գլուխ մեր դնենք դահլիճ պատուանդան,
Թո՛ղ օրէնք արէ՛ք փրկութիւն Ազգիս,
Կամապաշտ Հայեր, Հերի՛ք ալ Հերի՛ք:

Կասեցէ՛ք, ո՛վ դուք Հայ միապետներ,
Ալ բաւ սեպեցէ՛ք Ազգիս պետութիւն,
Ձեզ ի՞նչ վայել է Հանգչիլ այժմ անդորր,
Եթէ ալ չընկճիք Հերի՛ք ալ Հերի՛ք:

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆ ԵՒ ՄԱՆՈՒԿ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայկ ու Լեռնին մոռանանք, եղբարք,
Թափ տանք մեղանից փոշին Հնութեան.
Վերածնենք մեր մէջ նոր կեանք ու նոր բարք
Կեցցէ՛ շատ օրեր մանուկ-Հայաստան:
Կեցցէ՛ շատ օրեր մանուկ-Հայաստան,
Նա՛ որ դեռ միայն մեր սրտի խորքում
Ունի իր Հիմքը. ոչ տուն, ոչ կայան,
Չունի տակաւին բուն Հայաստանում:

Եղբարք, բանը դեռ անշօշափելի
Այժմուս մեր մտքի ցնորք չկարծենք.
Բանը կը մարմնանայ ու տեսանելի
Կը լինի շուտ. միայն մենք վստահ լինինք.

Մեր չոչսը միայն մեր վրայ լինի,
Ձեն պէտք մեզ նպաստ մեծատուններին.
Ողորմութեամբ թող մուրացիկն ապրի,
Մուրացողն է միշտ ստրուկ օտարին:

Կեցցէ՛ Հայաստան, որ երազական
Կարծում են ծերերն, իրօք չէ աղբալէս.
Մեր Հայրենիք դեռ չէ չուառական
Քանի ունի քաջ որդիք մեզ պէս:

Բա՛ւ է, օտարին շատ ծառայեցինք,
Ստրկի վիճակ չէ չաւերժական.
Ազատութեան գինն մենք քաջ սերտեցինք
Էլ չենք Հաւատալ օտարին խոստման:

Օտարի շահը թոյն է մահաբեր՝
Աչք է կուրացնում, միտք է պղտորում
Գերի է դարձնում մարդ ազատասէր,
Ոսկի չղթալով ձեռք ոտք է կապում:

Կը փշրեն չղթաս կ'երթամ Հայաստան,
Կը պաղեն նրա հողը անարատ.
Կ'ասեն «Եկել եմ որդիդ չուառական,
Գրկիդ մէջ ինձ առ, մալք իմ Հարազատ:

Չունիմ ես ոսկի, ալ ոսկու մատան,
Ջրոտ ձեռք ջուխտակ ու սիրտ անվեհեր.
Ձեռքումըս ունիմ բա՛շ ու հրացան,
Սրտումըս ունիմ ազնիւ խորհուրդներ:

Քո հողն արգաւանդ, ես մշակ արի,
Մենք Հաշտ կու ապրենք շատ ու շատ տարի.
Ուրջուններէդ քեզ ոչինչ չա՛հ չկայ,
Թող տուր որ բռնի Հալածեն նոցա:

Դու որդիք ունիս չորս միլիոն ու կէս,
Թէ չանկարծ գաղթեն նոցա տեղ ունե՞ս.
Ստինքիդ կաթը խնայէ օտարին,
Դալու որդիքդ քաղցած ծարաւ են:»

Հարաւ, Հիւսիսէն փոշի վերացաւ . . .
Ձախ, տրոփ, խօսք, շրշուկ զիլ զիլ լսուեցաւ.
Մասսայ ճակատէն մէզը հեռացաւ,
Մանուկ-Հայաստան ոտքի կանգնեցաւ . . .

ԳԱՄԱՌ-ԳԱԹԻՊԱ
(Ռ. Տ. Գ. Պատկանեան)

ԽՐԱԽՈՅՍ ՀԱՅՈՑ

ՀԱՅ չէ՞ք մի, մի՛ թուլանաք, քուէք ձեր վաճան,
Շողջողուն ճշմարիտ սուր, մի՛ դնէք պատեան,
Ձեզի նման քաջ Հայեր զո՛հ եղան դացին,
Երկնից մէջ վեհ քաջութեան անուն կնքեցին:
Չկա՞ն մի ճշմարիտ Հայք ձեզ ըլլան ընկեր,
Երկհոտ ու թուլասիրտ Հայք թող չըլլան ընկեր.
Ձեզի նման, Լն.

Չէ՞ք ճանչնար աչն դառնուկը — անկէ սովրեցէք,
Թափեցէք ձեր արիւնը, սիրէք, սիրուեցէք.
Ձեզի նման, Լն.

Յորդորակ

Ո՛հ, Հայ ենք, Հայ եղբայրներ, սիրտ սրտի կապենք
Ձեռք ձեռքի տանք, առաջ երթանք, շուտ երկինք Հասնինք:
Կ. ԱՐԵՒԵԱՆ

ՅԱՒՈՒՐ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ
21 Օգոստոս 1860

ՀԱՅՐԵՆԵԱՑ սիրով վառուած վեհ սրտեր,
Ի՞նչ կը չապաղէք ելլել ի Հանդէս.
Ի՞նչ կը չապաղէք — սիրտ կը դիմանա՞ց,
Սիրտ՝ որ ազգասէր ըլլալ կը ցանկայ:
Տեսնել Հայրենեաց աչքան բիւր աղէտ,
Եւ դեռ անտարբեր ցարդ մնալ չաւէտ:
Խեղ ատելութեան և չար նախանձու
Սերմերն ու հողին հեռու մղենք, հեռո՛ւ,
Սիրտ սրտի կապուած, թե թեի տուած,

ՈՐՍՈՐԴՔ

Հապա քաջազունք, Հայոց զաւակունք,
Առէ՛ք աղեղունք ի մահ երազունք.
Անտառք ըսպասեն, կենդանիք սարսեն,
Զինուցդ ի ձայնէն կենդանիք սարսեն.

Շեշտակի նետեր
Թափեցէ՛ք, քաջեր,
Յերես անվեհեր:

Վազենք ուր վտանդ՝ այս մեր ըզրօսանք,
Որսոց արշաւանք՝ մարտից են կըրթանք.
Երթանք զունդ ի զունդ յաղեղ եւ մըկունդ,
Յուսով սրբաթաթունդ՝ յաղեղ եւ մըկունդ.
Շամփրեմք զկենդանիս
Իբր ըզթշնամիս
Ի մեր Հայրենիս:

Զի օր մ'ալ նոյնպէս մարտին ի Հանդէս
Զարնենք մահազդեաց զոսոխս Հայրենեաց,
Եւ յաղթանակաւ լըցեալ աւարաւ
Դառնանք քաջարշաւ լըցեալ աւարաւ.

Եւ ի մեր գափնիք
Ծափ տան սիրելիք,
Պանծան Հայրենիք:

Վ. ԳԱԼՖԱՅԱՆ (Խ. Ե. ՆԱՐ-ՊԵՅ)

Հայրենեաց սիրոյ ասպարէզն բացուած,
Օ՛ն վազենք չառաջ, ի սուրբ խաչ վստահ
Օ՛ն երթանք չառաջ, և անձնանուէր,
Հայրենեաց օգտին ըլլանք ուխտանուէր:

Հա՛յ, մի վհատիր, սիրտ առ և սիրտ տուր.
Տրկարք զօրանան, քաջք խրախուսին.
Վատերը բացուին, վատերը զատուին,
Ճշմարիտ Հայերն չառաջ թող անցնին,
Խաչ, սէր են նշան ճշմարիտ Հայուն.
Խաչ, սէր են պարծանք ճշմարիտ Հայուն:

Սիրոյ հրօշներ
Թող արդ պարզուին,
Հաշտութեան ձայներ
Թող արդ հնչուին,
Հայն մէկ սիրտ եղաւ,
Սիրով միացաւ,
Սուտ են որ ըսեն,

«Հաչք զիրար կ'ատեն»:

Սուրբ Արարատեան մայր աթոռին գիրկը
Եկէք Հայկազունք եկէք միանանք,
Եւ սիրովնք մեր վշտացած մօր սիրտը,
Օրհնելով Տէրը որ մեզ պարգեւեց,
Մեր ազգին կապն ու հողին
Ազգային սահմանադրութիւն,
Յաւերժացիր արդիւնաւէտ:

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՎԱՆԵՑԻՈՑ ՀԱՅՐ ՄԵՐԸ

ՀԱՅՐ մեր երկնաւոր, սուրբ լա քու անուն.
Հային երկրաւոր տուր արքայութիւն.
Ամեն բանի մէջ քու կամքը ըլլայ.
Միայն թէ Հայը լուծի տակ չըլլայ.
Ո՛չ չոր, ոչ կակուղ հացդ մենք կ'ուզենք,
Միայն տուր ամեն Հայի ձեռքը զէնք.
Ձենք խնդրիլ թողնել մեր անձանց պարտքը,
Թէ՛ք վերցուր թուրքի խաչտառակ Հարկը.
Գորէ մեզ Աստուած մարտի փորձութեան,
Որ չուտ ազատի ազգը քո Հայկեան:

ԳԱՄԱՌ-ԻՐԱԹԻՊԱ

ԵՐԳ ԿԱՐԵՆՑ ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵՆՈՑ

ՀԵՐԻ՛Ք, եղբարք այսքան տարուան տառապանք,
ՀԵՐԻ՛Ք, դաժան թուրքին Բիւրտին ոտն ինկանք,
Բանի խոնարհ գլուխ տուինք գալլերին,
Այնքան ծանր բեռներ դրին մեր վզին:
ՀԵՐԻ՛Ք, ելլենք ցոյց տանք թէ՛ մենք Հարազատ
Հին քաջերի արիւնիցն ենք և ազատ.
Թէ՛ն չունինք ոչ սուր, ոչ թուր, ոչ նիզակ,
Մեր բազէրն ալ կ'անեն նրանց շան սատակ:
Ինչո՞վ են նրանք մեզ տիրելու արժանի,
Նրանք մարդ չեն, ալ գազան են վաչրենի.

Մերն է ձերքը, մերն է ուսումն ու հանճար:

Մերն է հողը, մենք ենք նրա տէրն արդար:

Հերի՛ք, ելլենք ցոյց տանք թէ՛ մենք. ևն:

Նրանցն է մեր կոչս աղջիկներ, հարսուներ,

Նրանցն է մեր ճակտի քրտանց արդիւնը

Նրանց սրի ծաշըն է կարծես մեր հոգին:

Նրանց զամբու մեղնից շատ է թանկագին:

Հերի՛ք, ելլենք ցոյց տանք թէ՛ մենք. ևն:

Մենք եղբայրներ ունինք հեռու տեղերում,

Որոնք մեր վրայ լռիկ արցունք են թափում,

Չեն խնայեր թե ու թիկունք, կը հասնին,

Շուտով կուգան, կը միանան սուր գործին:

Հերի՛ք, ելլենք ցոյց տանք թէ՛ մենք. ևն:

ՄՆԱԿԵԱՆ

ՀԻՄԻ Է՞Լ ԼՈՒՆԵՔ

Հիմի է՞լ լուենք, եղբարք, հիմի է՞լ,

Երբ մեր թշնամին իր սուրն է գրել,

Իր օրհասական սուրը մեր կրծքին,

Ականջ չի դնում մեր լաց ու կոծին:

Ասացէ՛ք, եղբարք, Հայեր, ի՞նչ անենք:

Հիմի է՞լ լուենք:

Հիմի է՞լ լուենք, երբ մեր թշնամին

Դաւով, հրապուրելով տիրեց մեր երկրին,

Ձնջեց աշխարհից Հայկաչ անունը,

Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,

Խլեց մեղանից թագ, և՛ խօսք, և՛ գէնք:

Հիմի է՞լ լուենք:

Հիմի է՞լ լուենք, երբ մեր թշնամին

Խլելեց մեր սուրը — պաշտպան մեր անձին,

Մշակի ձեռքից էլ խօփը խլեց,

Այդ սուր ու խօփից մեր շղթան կըռեց:

Վա՛յ մեզ, շղթայով կապած գերի ենք,

Հիմի է՞լ լուենք:

Հիմի է՞լ լուենք, երբ մեր թշնամին

Սոսկալի գէնքը բռնած մեր գլխին՝

Կուլ տալ է տալիս արտասուք առատ՝

Աղէխարչ բողոք վարուց ապիրատ:

Մեր գլուխ լալու Եփրատ ո՞ւր փնտռենք,

Հիմի է՞լ լուենք:

Հիմի է՞լ լուենք, երբ մեր թշնամին

Լիրբ գոռողութեամբ լցրած իր հոգին՝

Արդարութեան ձայնն հանած իր սրտից՝

Արտաքսում է մեզ մեր բնիկ երկրից:

Պանդո՛ւխտ, հալածեա՛լ, եղբարք, ո՞ւր գիմենք

Հիմի է՞լ լուենք:

Հիմի է՞լ լուենք երբ մեր թշնամին

Անգոհ մեր բերած ծանր զոհերին,

Իւր լիրբ, նզոված ձեռքը կարկառեց,

Ազգութեան վերջին կապը պատառեց:

Հայի կորուստը մօտ է, ի՞նչ անենք,

Հիմի է՞լ լուենք:

Հիմի է՞լ լուենք երբ մեր թշնամին

Արհամարհելով մեր փառքն ազգային՝

Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,

Գալազդեատ գառին մեր գլուխ դրաւ:

Սուրբ խոբան չունինք, արդ ո՞ւր աղօթենք,

Հիմի է՞լ լուենք:

Հիմի է՞լ լուենք, մարդիկ ի՞նչ կասեն,

Երբ մեր տեղ քարինք, ապառաժ բօսեն,

Չե՞ն ասի որ Հայք արժանի էին

Այդ ստրկական անարգ վիճակին:

Մեր աւերք քաջ նախնեաց գործերը գիտենք,

Մինչև ե՞րբ լուենք:

Թո՛ղ լռէ մունջը, անդամալուծը,

Կամ որոնց քաղցր է թշնամու լուծը:

Բաց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ՝

Ե՛կ, անվախ եղենք թշնամու առաջ,

Գոնէ մեր փառքը մահով չեա խլենք,

Ու աշնպէս լուենք:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ԿԱՐՆՈՅ ՇԱՐԺՈՒՄԸ

ՁԱՅՆԸ Հնչեց էրգրուծի Հայոց լեռներէն,
Թունդ թունդ ելան Հայոց սրտեր զէնքի շաչիւնէն:

Հայ գիւղացին դարուց ի վեր սուր, զէնք չէր տեսած,
Դաշար թողուց, սուր, Հրացան բաժի տեղն առաւ:

Հայ ծերուկը ցուսն ի ձեռն լալով խնդրում է,
Հայրենիքի ազատութիւն տեսնել ու ձեռնիլ:

Հայ տիկինը ստիպում է ամուսնուն գնալ,
Պատերազմի դաշտին վրայ վէրք տալ, ստանալ:

Քընքուչ կեանքը ծանր է թուում Հայ օրիորդին,
Ձէն ի ձեռն սիրտ է տալիս Հայոց քաջերին:

Երիտասարդը թոթով լեզուով նամակ ցրուել են,
Արարատայ գաշտին վրայ գինուոր խմբել են:

Ա' լաւ լացիր Մայր Հայաստան, երկիրդ փառաց,
Քու գինուորներդ միշտ կտրիճ են, որչափ ալ քաղցած:

Ա' ու ու գգուէ՛ աչք քաջերը քու սրտիդ վրայ,
Որք կը թափեն իւրեանց արիւն սուրբ հողիդ վրայ:

Անմիութիւն տունը քանդող Հայոց խեղճ ազգին,
Հրաժարեցաւ տեղի տուաւ միութեան ձայնին:

Լսեց Քիւրան ու սառեցաւ արիւնը խեղճին,
Ձէր երազել Հային տեսնել նա աչք վիճակին:

Եւրոպայի լուրը Հասաւ շարժման Հայ գեղջիկին,
Ուրախական ողջոյն տուաւ Հայրենասիրին:

Յնծա՛, մայր մեր, ո՛վ Հայաստան, որդիքդ միացան,
Ութը դարու սուգ ու թախիժ քեզնից վերացան:

Ուսումն ու լոյս-ազատութիւն արդ քեզ են ընկեր,
Սուր, Հրացան, եռանդ ուղղի պաշտպան անվէհեր:

Ուրախացաւ Մայր Հայաստան, ելաւ կանգնեցաւ,
Հինգ դարերի սուգ, տառապանք մի քիչ մեղմացաւ:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓԱՓԱԿ

ՄԱՅՐԻ՛կ ինձ Հրաման տուր, վարժուելու երթամ

Անալի Հրացանը ձեռքիս ունենամ,

Պատերազմից արձնիմ, ազատ տուն դառնամ:

Էս ինչ խարար ճանապարհ է գնալ գալ չի վնում,

Վերան ըլլի կարծիր օրը ջիւան չը մնամ:

Ալատաղի գլխին աղբիւր է բղխում,

Ի՞նչ մայրը լալիս է, ճամբէս է պագում,

Սիրած նշանածս ինձ է սպասում:

Էս ի՞նչ խարար, Լն.:

Մայրիկիս ասացէք իմ ձին թող ծախի,

Փուսկուլաւոր Ֆէսս սնտկում դնի,

Նշանածս սիրուն է, եղբայրս թող առնի,

Թող տունը մնայ, թէ եղբայրս գան չի առնի:

Էս ի՞նչ խարար, Լն.:

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ օրերս, երազի նման,

Անցաք գնացիք, էլ չէք դառնալու:

Ո՛հ, դուք երջանիկ, ո՛հ անհող օրեր,

Ընդունակ միայն ուրախացնելու:

Ձեզանից չետոյ եկաւ գիտութիւն,

Իր ծանր Հայեացքով աշխարհի վրայ:

Ամեն բան ընկաւ մտածութեան տակ,

Բոպէ չը մնաց ազատ կամ ունայն:

Գիտակցութիւնը չաջորդեց սրբան,

Ազգի վիճակը ծանրացաւ սրտիս:

Ապոլոն տուեց ինձ իր քընարը,

Ուրպէս փարատիչ տրտում ցաւերիս:

Աւա՛ղ, աչք քընար, իմ ձեռքում Հնչեց,

Նոյնպէս լալադին, նոյնպէս վըշտահար:

Ինչպէս իմ սիրտն էր, իմ զգացմունքը,

Ուրախացուցիչ չը գտայ մի լար:

Ես աչք Ժամանակ միայն զգացի,

Որ աչք ցաւերից ազատուելու չեմ:

Որչափ իմ ազգս կը մնայ ստրուկ,
Օտարների ձեռք, անխօս, տխրադէմ:

Մանկութեան օրեր, ի՞նչու աչքս չուտ, —
Թուք գնացիք, անդարձ լաւիտեան.
Ես այն ժամանակ անհոգ ու աղատ,
Կարծում էի ինձ աշխարհի իշխան:

Գերութեան շղթան ինձ զգալի չէր,
Եւ ոչ բռնութեան անդուծ ճանկերը.
Ձեզանից չետոյ ծանրացան նրանք,
Ո՛հ, անիծում եմ ես այն օրերը:

Լո՛ւռ կաց դու, քնար, այլ մի Հնչեր ինձ,
Ապողո՛ն, չեա առ դարձեալ դու նրան.
Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է,
Զո՛հ բերել կեանքը սիրած աղջկան:

Ես պիտի դուրս գամ դէպի Հրապարակ,
Առանց քնարի, անդարդ խօսքերով,
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Պաւարի ընդդէմ պատերազմելով:

Ներկայ օրերում այլ ի՞նչ սե քնար,
Սուր է Հարկաւոր կտրիճի ձեռքին.
Արիւն ու կրա՛կ թշնամու վրայ,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կեանքին:

Թո՛ղ պատգամախօսը՝ Հնացած Դերիի,
Իր եռոտանու վրայ փրփրէրի.
Թո՛ղ վերջին դարու գաղափարներով,
Ամբոխը խաբել ճգնի, աշխատի:

Թո՛ղ նա թարգմանէ զրպարտութիւնը,
Թո՛ղ մխիթարուի ծովի ափերում.
Մենք աղատութեան ենք միայն թարգման,
Միայն այս խօսքս ունինք բերանում:

Ո՛վ Հայր, ո՛վ դու Հայր, որ երկնքումն ես,
Խնայի՛ր թշուառ մեր անտէր ազգին,
Մի՛ տար դո՛հ գնալ թշնամիների,
Նա այլ չէ՛ լսում Դերիեան Հարցուկին:

(Կոմս Էմմանուէլ) Մ. ՆԱԼԲԱՆԳԵԱՆՆ

ՀԱՅԻ ԳԱՆԳԱՏԸ

ՄԵԶԻ ՄՈՌՅԱԻ Հաչոց ազգը,
Ձի լըսիլ մեր պաղատանքը,
Տեսնել չուղէ մեր տանջանքը,
Ապա որի՞ն մենք դանդաղութիւնք:
Աստուած սրտով որ բարի ես,
Մենք վար, Դուն վեր — շատ Հեռի ես,
Այժմ ալ խոշոր դործերի ես.
Ապա որի՞ն մենք դանդաղութիւնք:

Յայնը մեզի ասլը կ'ատէ,
Նէմցէն մեզմէ կրօնքով դատ է,
Ֆրանկի բանը, կ'ասեն, վատ է.
Ապա որի՞ն մենք դանդաղութիւնք:

Թուրքին միտքը դէպի Պալքան,
Իսպառ մոռցաւ նա Հայաստան,
Նըրան պէտք է լուի մեր փարան.
Ապա որի՞ն մենք դանդաղութիւնք:

Մեր տեղը քաջ կտրիճներ կայ,
Պէտք որ եղաւ՝ ստակ էլ կուգայ,
Մենակ՝ ճամբայ ցուցնող չի կայ.
Ապա որի՞ն մենք դանդաղութիւնք:

Հաչի դաշտե՛ր, արեա՛ն դաշտեր,
Շատ կուլ տուիք Հաչի քաջեր,
Թէ որ ձեզնէ մէկը ելլէր,
Մեր գանգատին վերջ կը դնէր:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ՄԵՌԻՔ ԱԼ ՄԵՌԻՔ

ՄԵՌԻՔ ԱԼ ՄԵՌԻՔ անդուծ 'ւ անողոր,
Թշնամիք, անտէր կարծէք զազգն անոր.
Ձէք կարող զայն ձեր ձեռքն ընել գործիք,
Մեռիք ալ մեռիք, (կրկ.):

Ինչ Հարկ է ապրիլ անխեղձ 'ւ անզգայ,
Հեռացէ՛ք, բացուին դռներն Թորդոմայ.
Պալլան մեր աստղեր, ծաղկին մեր դափնիք,
Մեռիք ալ մեռիք:

Փառաց աղանին գտաւ իւր իջեան,
Գերութեան շղթան փրցուց Հայաստան.
Աւա՛ղ, վատ քաջերդ եղան խօլ գերիք,

Մեռիք ալ մեռիք:

Ազատութեան դարն մեզ տուաւ արև,
Ձեռուքնիդ գեռ չուք թողո՞ւք մեր վերև.
Մենք Հայ ենք և մարդ մերն է Հայրենիք,

Մեռիք ալ մեռիք:

Վարժ են աչա ազգի պատմագրած էջեր,
Ձեր Համար շարել սրտաշարժ տողեր.
Ձձեզ պատկերել սեռադէմ ոգիք,

Մեռիք ալ մեռիք:

Թէ մեր փառքն ու սէր ձեր բռունք կորուսին,
Մատնի՛չք ի՞նչ մնաց ձեզ և մեզ բաժին.
Աչդ ողորմելի թշուառ տնեցիք,

Մեռիք ալ մեռիք:

Չէ՛ր չարգել ազգի սուրբ խօսքն ու սուրբ կամք,
Ձէ՛ր ձերն կանգնում, ալլ անկումն, անդգամք.
Վասակք, Մերութանք, Սարգիսք, դասալիք,

Մեռիք ալ մեռիք:

ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿ

ՅԱՌԱ՛Ջ Հայութիւն, չառա՛ջ ազգութիւն,
Լուսաւոր դարուս գաղափարներով.
Ատի՛ր, ո՛վ իմ Ազգ, խաւար տգիտութիւն,
Մի՛ տար քեզ խաբել խարդախ խօսքերով:

Կորէ՛ք դուք, խաւար և տգիտութիւն,
Կորէ՛ք դարչելիք ձեր ծնունդներով,
Մինչ ե՞րբ մեր վրայ աչա վայրենութիւն
Պիտի բռնանայ կռպիտ ճանկերով:

Եղբա՛ւրք է նա մեզ, որ ճշմարտութեան
Զինուորված այսօր զօրաւոր սրով.
Կամի քայքայել կապանք գերութեան
Սաւարի բանալի փխտակելով:

Բաւակա՛ն է մեզ, որքան փթացած
Ս. ՀամարՀեցինք մարդկութեան բարիք,
Այն՝ բաւական, որքան կուրացած,
Կորեցին կեանքից մեզ անկեանք մարդիկ:

Այսուհետև «Սէ՛ր» դէպի գիտութիւն,
Որ առհաւատչեալ է բարօրութեան.
Այսուհետև «Կամք» և «Աշխատութիւն»
Որ մի ծնունդ է տաքինութեան:

Հանդիսացէ՛ք լուս և ճշմարտութիւն,
Թող փախչի գիշեր մռայլուած սրտերի.
Յաղթի՛ր, խորտակի՛ր, բանականութիւն,
Մոլոր կարծիքներ, որդիք խաւարի:

Ազգ բազմաշարժար, դու ազգ թորդոմեան,
Թող անշարժութիւն այդ քո մաշարեր,
Դէ՛պ ի ասպարէզ առաքինութեան,
Դէ՛պ ի նոր կեանք փրկութիւնաբեր:

Աստուածեղէն ոչ մարդկութիւն փրկչին,
Լինելու է քեզ առաջնորդ Հօր,
Դէպի կրթութիւն չանուն Ս. Սաչին,
Աչք է պաշանջում մեր դար շուսաւոր:

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ

(Սոյն երգը կրճատուած է. տարունակութիւնը
տեսնել սոյն երգարանի թիւ 3ին մէջ:)

ՀԱՅ ՄԵՌՆԻՆՔ

Ո՛ւ, ե՛րբԱՐՔ, ո՛չ, օտարներէն չկայ յուս.
Մի՛ աչուրնիդ, մի՛ դարձնէք չալս չալն կոյս
Օտարն զձեզ թէև օրէ՛կ Հիւրաբար,
Օտարն, ա՞հ, միշտ է օտար:

Օտարը ձեր վիշտ կը դիտէ անդորով,
Ի՞նչ փոյթ որ դուք թափէք արցունք արխնով:
Ով որ Հայ չէ՝ Հայուն ցաւերն նա չզգար.
Ի՞նչ կը խաբուիք անդադար:

Մի՛ դուք ձեր չոյան մի՛ աւանդէք օտարին ,
Մի՛ խոր վէճքերդ ցուցանէք անդուծին .

Արդաւատանս կը չուսա՞նք օգնութիւն ,
Ձեր կը ծաղրեն մերկութիւն :

Գիտե՛մ՝ ձեր բեռը ծանր է , ծանր , ո՛վ Հայեր ,
Բայց կը կարծէ՞ք զայն վերցնեն օտարներ .

Թողէ՛ք զօտար , տուէ՛ք եղբայր եղբոր թե ,
Եւ զօրացէ՛ք անդեղն :

Բաղդը դարձեր է ձեզի դէմ թշնամի ,
Մի՛ վհատիք , ցուցուցէ՛ք սիրտ Հայեցի ,
Չէ՛ կարող բաղդ չաղթել ազդին այն քաջի ,
Որ բաղդին դէմ կը կռուի :

Ձեր Հայրերուն ո՛չ շղթայք , ո՛չ սուսերներ
Չկարեցին ընկճել ո՛չ միտք , ոչ սրտեր :
Ինչո՞ւ ձեր սիրտ այսօր դողայ տկար , Հէ՞ք ,
Ի՞նչ , այն քաջաց որդիք չէ՞ք :

Չէ՞ք դուք որդիք այն դիւցազանց աննման ,
Որ Հայրենեաց ճենճերեցան ի սեղան . . .
Չէ՞ք դուք որդիք այն մեծ Հայոց , որոց կեանք
Են մարդկութեան իսկ պարծանք :

Դուք , որ ունիք ձեզ պատմութիւն մ'ազդալին ,
Որոջ վրայ մեծ ազդեր իսկ նախանձին ,
Ինչո՞ւ այսօր մոռցած զանցեալ ձեր փառաց՝
Երանի տաք օտարաց :

Օ՛ն , ո՛վ կը զգայ ի սիրտ եռանդ ե ոգի ,
Թողու զօտար ե իւր նախնեաց Հետեի .
Մեր կեանքը Հոն է , ուր կրօնից մեր սեղան
Այն է Հայոց վառարան :

Եղբա՛րք , Հայուն կեանքը երբէք չի մարիր ,
Երկինք լեցուն են այն բոցով կենսաձիր .
Որչափ տիրէ մշտապաղթ Սաչ Քրիստոսի .
Հայն ալ անոր Հետ կ'ապրի :

Ի՞նչ կը վախնայք . . . գլուխնուդ վրայ չէ՞ք տեսներ
Քառաթեւին դիւրասարսուռ վեհ ստուէր .
Ձայն սուրբ փայտին բուն շաղկեղն ձեր Հարբը՝
Իրենց վսեմ արեամբը :

Դուք ալ խաչին խարսխեցէ՛ք ձեր չոյսը ,
Եւ , Հաւատացէ՛ք , պիտի ծագի ձեր շոյսը .
Նա ազգութեանդ եղաւ պարիսպ ամրափակ .
Նա ձեր ըլլայ զէնք , դրօշակ :

Ո՛հ , Հնար չէ , որ կորսուի այն ազգը ,
Որ Հաւատարիմ մնաց Սաչին միշտ ոտքը ,
Նորա կեանքը պիտի տեւէ այնչափ դար ,
Որչափ կրօնից կեանք՝ չաչխարհ :

Այն վեհ կրօնից եւ ազգութեան անունով ,
Հա՛յ եղբարք , ձեռք ձեռքի տուէ՛ք նոյն Հուր սիրով .
Ատելութիւն , քէն մերժուին , օ՛ն , ի բաց .
Անիծեցէ՛ք զազգատեաց :

Ամենուդ սիրտ՝ զգայ սէրն Հայրենեաց ,
Ամենուդ միտք թռչի յօգուտ Համազդեաց ,
Ու ձեր լստին եղբոր արցունք ու ցաւ միշտ ,
Ըզգացէ՛ք իրրն ձեր վիշտ :

Օտարին Հաց մեղի սնունդ չէ բնաւ ,
Օտարին ջուր , ո՛չ չմարեր մեր ծառաւ .
Մեզի կենաց տուող ե մեր պաշտպան .
Է՛ աւազանն Հայկական :

Այն Աւազանն , այն Հայութեան կնքատուն ,
Ո՛հ , չուրանանք , եղբա՛րք , չուսով շաղիաղփուն ,
Եւ թէ մեր շունջ պիտի մարի վելջապէս՝
Թո՛ղ մարի այն սուրբ կրկէս :

Թող ամենքս ալ ընդունի նոյն գերեզման ,
Վասն զի նոյն էր ամենուս ալ որրան . . .
Հայ ծնանք մենք , Հայ ապրինք , Հայ ե մեռնինք ,
Օ՛ն , Հայ մտնեք ե լերկինք :
Խ . Վ . ԳԱԼՖԱՅԵԱՆ (ՆԱՐ-ՊԵՅ)

ՋԻՆԻՈՐԵԱՆ ՀԱՅ ԱՂՁԻՆ

Ո՞վ ես որ գաս առանձին,
Ձեռքդ կուրծքիդ խաչապէս,
Ծուկն դրած ի գետին՝
Լօրիկ առ ո՞ր բողոքես:

Ասա՛ թէ Աստուած կը սիրես,
Ո՞վ ես և ո՞ւր, ո՞ր աշխարհ,
Եռանդադին խնդրում ես՝
Մատաղ տիօքդ տկար:

Ամբիճ ճակատդ է կնճոռս,
Յօնքերդ ի ծուկի ալիկոճ.
Կոչս սիրտդ ինչի՞նչ է կարօտ,
Որ հրաշունչ հանէ բոց:

Երթալ կ'ուզես, կը չուզիս,
Արդեօք սիրո՞վը մարդու.
Կամ սուրբ սիրո՞վն կրօնի,
Որ Աստուածն է սրտերու:

— «Ես Հայ աղջիկ մ'եմ զինուոր,
Տղմուտի մէջ մկրտուած.
Պատմութեաններս են բոսոր,
Ձէնքս է խաչն չաղթապանծ:
Ձինուոր կ'երթամ Հայաստան,
Օրօրոցիս օրօրով.
Ի՞նչ հայրենեաց կարօտով:»

«Իրաւ աղջիկ մ'եմ տկար,
Սակաչն խաչի եմ զինուոր.
Ազատութեան սիրահար՝
Չափեմ գաղիարհ ես բոլոր:
Կաճակ ու շանթ ի՞նչ են որ
Գլխուս թափին բոցալիր.
Գնդակ ու ուժճ բիւրաւոր,
Վարդիչ թերթեր են կարծիր:

ԱՂԱԽՆԻ ՖԵԼԵԿՏԱՆ

ՎԱՆԵՑԻ ՄՕՐ ԵՐԳԸ

ՊԸԶՏԻ՝ ՏԸՂԱՅ, չեմ օրօրիլ օրօրանքդ որ քուն լաս,
Հայ աղրարքդ ոտքի ելան, մինակ դո՞ւ ես պիտ' մնաս.
Չարթէ՛, Հոգիս, անուշ բունէդ, թող աչքերդ լոյս տեսնին,
Արեմուտքէն արեւ ծագեց, բաղդը բանեց Հայ ազգին:

Չար սուլթանին ոսկի թախտը ջարդուեցաւ, վար ինկաւ.
Թախտի տակէն Հազար աղկաց ազատութիւն ծագեցաւ.
Ով որ չուտով ոտքի ելլէ, ազատութիւն կը գտնէ,
Սիրուն որդի՞ս միթէ մինակ չար լուծի տակ պիտ' մտնէ:

Մենք սուլթանին շատ խնդրեցինք կողկողադին ու լացինք,
Աղի—աղի արատաւորով ձեռք ու ոտքը շուացինք.
Բացց նա շանսաց պաղատանքին ողորմելի Հաչերուն,
Այժմ, նաչենք, նա կը չըսէ՞ շառաշիւնը սուրբերուն:

Տո՛ւր, սիրական, քակեմ ձեռքիդ պալուշները, արձակեմ
Ու այդ թուշիկ ամիդ մէջը մի պողպատէ սուր դընեմ.
Հստորուկ գընա՛ արեան դաշտը, վերադարձիր ազատուած.
Արդեօք մի օր պիտի լրտէ՞ս մեր խնդիրքը, ո՞վ Աստուած:

ԳԱՄԱՌ-ԲԱԹԻՊԱ

ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ՌՈՒՍԱԿԱՆ պետութիւնն, Հայեր, ըսաւ աշխարհի,
Բաւ է Քրիստոնեայք, ո՛հ Հայեր, մնա՛ք խեղճ գերի.
Բացեց պատերազմ, Հայեր, ընդդէմ Թուրք ազգին:
Ափսոս այն ազգակից խեղճ Հայեր ի զուր զո՛հ գացին:
Ահա ամեն կարեկից Հայ սրտեր վառեցան գացին:
Ռուսական բանակն, Հայեր, մտաւ Հայաստան,
Օսմանեան բանակը, ո՛հ, Հայեր, դէմ դէմի ելան:
Հրացան թնդանթներ, Հայեր, գոռալ սկսան,
Ափսոս այն ազգակից խեղճ Հայեր ի զուր զո՛հ գացին:
Ահա ամեն կարեկից Հայ սրտեր վառեցան գացին:
Հաչկաղն Մելիքով, Հայեր, գեներալ Ռուսաց,
Կարսը չըջապատեց ո՛հ, Հայեր, վրան ուժճ տեղաց.
Ռուսներն այրեցին, Հայեր, մզկիթներն թրքաց,
Ափսոս այն ազգակից խեղճ Հայեր ի զուր զո՛հ գացին:
Ահա ամեն կարեկից Հայ սրտեր վառեցան գացին:

ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ

ՎԵՐՅՈՒՐ ԳԼՈՒԽԴ, ո՛վ Հայի ուրդի,
Տես թէ ինչպէ՞ս քեզ նկատեն.
Մեծ և փոքր ամեն ազգերից,
Որ մի քիչ զգացմունք կը կրեն
Կը զարմանան խիստ քո վրայ,
Որ ունեցար անցեալ չքեղ
Վարդանի սէս մարդ մեծ և հսկայ՝
Ու չունի՞ս դեռ սուր և աղեղ:

Հաւատացէ՛ք թէ ամօթ ենք,
Նախատինք ենք մենք մեր նախնեաց:

Ահա կ'անցնի Հինգ Հարիւր տարի
Որ կորուսեր ենք մենք մեր իշխան.
Կորուսինք նաև տուն և տեղի,
Սիրտ, ուղի, խելք և միտք բանական:
Չենք մտածեր իսկ թէ ո՞ւր ենք,
Ո՞վ են եղեր մեր նախահարք.
Տաճատ, Խորէն մենք մոռցեր ենք,
Անզգացեր ենք որպէս քարք:

Հաւատացէ՛ք թէ ամօթ ենք,
Նախատինք ենք մենք մեր նախնեաց:

Մեզ վիճակակից բոլոր ազգեր,
Յոյն, Վալախ, Սերպ ու Գարատաղ,
Պուլկարն խեղճուկ, և այլն օտարք,
Անցուցին իրենց օրերն աւաղ.
Ի՞նչ ըրինք մենք, կամ ի՞նչ կ'ընենք.
Խորհեցա՞նք գէթ մի օր մէկտեղ.
Մի ճամբայ, միջոց որոշեցի՞նք,
Ազգ, Հայրենիք փրկել մի Հեղ:
Հաւատացէ՛ք թէ, ևն.:

Եղբարք և քորք ալ բաւ Համարենք,
Տարօրինակ մեր ընթացքը.
Աստուած ի մեզ ալ օգնէ չ'ըսենք,
Չգնենք օտար ոտք մեր լացքը.

Վարդան առնենք մեզ օրինակ,
Հմայեալ, Արսէն մեզ խրախոս,
Յառա՛ջ, չառա՛ջ, նետուինք քաջանակ,
Թէ ոչ զէնքն առնելով միտք մեր չոյս:

Հայեր, կեղտ ենք, անզգայ ենք,
Նախատինք ենք և մեր նախնեաց:
ՏԱՃԱՏ ՊԵՅԼԷՐԵԱՆ

ՔԱԶ ՎԱՐԴԱՆ

ԻՄ ՀԱՅՐԵՆԵԱՅ Հոգի Վարդան
Հոգիս Հոգւոյդ եղնի զուրպան.
Որ Տղմուտի ամերի մօտ,
Վաթսուն Հազար կտրիճներով,
Զարկիր, դարկուար, ինկար քաջ քաջ
Պարսիկ սփռած ի ձախ ու չաջ.
Իմ Հայրենեաց արև Վարդան,
Արևս ար'ուող եղնի զուրպան:

Աւետարանն ու խաչն առիր,
Տարիք երկինք բարձրացուցիր,
Եւ դուն ալ Հետ թողիր դացիր,
Անուշ արեղ Հողին տուիր,
Որ Հայրենեաց շողաչ արև
Շաւարչանայ դաշտին վերև.
Իմ Հայրենեաց արև Վարդան,
Հոգիս Հոգւոյդ եղնի զուրպան:

Արիւնդ կարմիր կարմիր թափուաւ,
Դաշտ ու ծաղիկ ներկուեցաւ.
Լուսնակն ելաւ ամպի տակից,
Պաղ պաղ թափեց ցօղիկն աչից,
Որ Հայրենեաց վարդեր բացուին,
Պլպուլն երգէ դրախտի սարին.
Իմ Հայրենեաց արև Վարդան,
Արևս ար'ուող եղնի զուրպան:
Ս. Հ. ՖԵԼԷԿԵԱՆ

Թէ ԹԵԽ ունէի

Ո՛հ կը թռչէի

Աղատ Մասեաց սարերն ի վեր ես ուժգին ք

Անկէ ձեզ, Հացեր ք

Կարգացի Հրաւէր

Թ՛ էկէք Հացեր, ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին ք

Սիրեմք ընկեր զընկեր՝ սիրեմք կաթողին ք

Թէ դեռ չիմ արիւն,

Ձի խառնուել թոյն,

Դեռ երակացս մէջ աշխոյժ խաղային ք

Ո՛հ, քանի՛ հըպարտ

Կանչէի ազատ

Թ՛ էկէք Հացեր, ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին, Են ք

Թէ կեանք ունէի

Ո՛հ կը լարէի

Թեւ ընարի բաղդին Հացոց անկենդան

Որ նա ձեզ խօսեր,

Ձեզ պանդուխտ Հացեր

Թ՛ էկէք Հացեր, ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին, Են ք

Թէ սէր ըլլայի

Կամ անմահ հոգի ք

Կը կապէի Հացոց սրտերն անմեկին ք

Յաջմամ և նորա

Մի որդիք Հացկալ

Կ'ըլլան 'ի մի անշուշտ մէկ սիրտ մէկ մարմին ք

Սիրեմք ընկեր զընկեր սիրեմք կաթողին ք

Ա. Հ. ՖԵԼԵԿՍԱՆ

ՁԱԽՈՐԴ ՕՐԵՐ

ՁԱԽՈՐԴ օրերը ձրմուտ նրման կուգան ու կերթան ք

Վհատելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան ք

Դառն ցաւերը մարդու վերայ չեն մնալ երկար ք

Որպէս յաճախորդ շարուէ չարան կուգան ու կերթան

Փորձանք հալածանք և նեղութիւն ազգերի գլխի ք

Ինչպէս ճանապարհի կարաւան՝ կուգան ու կերթան ք

Աշխարհը բուրաստան է լատուկ, մարդիկը՝ ծաղիկ,
Որքան մանիչակ վարդ պալատան կուգան ու կերթան ք

Ոչ ուժեղը թող պարծենալ, ոչ էլ տկարը թող տխրի,
Փոփոխակի անցքերը դանազան՝ կուգան ու կերթան ք

Արեւ առանց վախնալու ցայտում է լոյսը ք

Ամպերը դէպի աղօթարան կուգան ու կերթան ք

Երկիրը ուսեալ դաւակին է փայփայում մօր պէս ք

Անկիրթ ցեղերը թափառական՝ կուգան ու կերթան ք

Աշխարհը հիւրանոց է, Ջիւիւն, և ազգերը հիւր ք

Այսպէս է կանոնը բնական — կուգան ու կերթան ք

ՍԻՐԷ ՀԱՅՐ

ՍԻՐԷ Հայր Թէ ըլլայ

Աղքատ, տնանկ, անկարող ք

Վրան գլուխն Հին ու մին ք

Դռնէ ի դռն մուրացող ք

Անունն է Հայ պարտ է քեզ ք

Սիրել զնա Հայու պէս ք

Սիրէ Հայր Թէ ըլլայ

Հարուստ, փարթամ, մեծանուն ք

Եւ ունենայ պէյ, էֆէնտի ք

Կամ Ամիրայ պատուանուն ք

Անունն է Հայ, Են ք

Սիրէ Հայր Թէ ըլլայ

Հայր սուրբ, տէրտէր, վարդապետ ք

Վրան փիլոն, ծոցը թաշ ք

Կաթողիկոս, Հայրապետ ք

Անունն է Հայ, Են ք

Սիրէ Հայր Թէ ըլլայ

Լուսաւորիչ, Բողոքական ք

Ըստ քո կարծեաց սընապաշտ ք

Հերիտիկոս պապական ք

Անունն է Հայ, Են ք

(Վերապատուելի) ՄԱՐՏԻՐՈՍ ՇՄԱԽՈՆԵԱՆ

ՀԱՄՈՋՄՈՒՆՔ

ՕՏԱՐԻՔ քնական գիտութիւնիցը, ո՛հ, աւա՛ղ աւա՛ղ,
ի՞նչ հալը սրապի տուած խըրատը լաւ է, ո՛հ լաւ է:
Փալիզու զարդարուած քառանկիւնիցը,
ի՞նչ համար Անուշ մէկ պատը լաւ է, ո՛հ, լաւ է:

Ուրիշ բան չունի՞մ թարակեանքիս մահիցը,
ի՞նչ ի՞նչ կուտան օտարք իւրեանց չափիցը,
ի՞նչ համար Լոնտոնու վեհ կաշաւը պահիցը,
Աշոտի քանդուած պալատը լաւ է, ո՛հ, լաւ է:

Ի՞նչ հասկնամ անհոտ բուրաստանիցը,
Ո՛վ է գոհ անհոգ աչքեպանիցը,
Անգուլթ անողորմ Թուրքաստանիցը,
Ազգասէր ողորմածը լաւ է:

ԶԻԻԱՆՄ զատ չեմ Հայ անունիցը,
Թէ որ ունի՞մ քաջ Արամայ արիւնիցը,
Օտար ազգի կողմնապաշտութիւնիցը,
Հայ եղբորս տուած գանգատը լաւ է, ո՛հ, լաւ է:

ՃՇՄԱՐԻՏ ՀԱՅԸ

(«Ո՛վ որ իւր ազգն ուրանայ»ի եղանակով)

ՀԱՅԸ որը ժողովուրդ է, Ազգուրացը Վասակն է,
Օտարաց մէջ խառնուրդ է, Ազգասէրը Վարդանը:
Ազգուրաց Աստուածուրաց, Թէ կը չիշուի Վասակը,
Երկուսը մէկ խորհուրդ է: Բացք վատ է նպատակը,
Երբ որ Հայը գումարուի, Պիտի խօսի միշտ բարի,
Հային չի հաւատարուի, Վարդանայ չիշատակը:
Հայերէն չգիտցողը, Պատմութիւնը բարեւէ,
Կիսատ Հայ կը համարուի: Մէկ ժամ նորան նուիրէ,
Ո՛վ գու Հայ մարդ, զօրացի՛ր, Ահա երկու ճանապարհ,
Լուսնի նման նորացիր, Որին կուգես հետեւէ:
Ոչ այլ ազգին անարդէ, Որոնէ Հաշտտանը,
Ոչ քո ազգը անարդիր: Հայրենիքիդ նշանը,
Աստուած տուեց նմանը, Ինչպէս Հայ ծնար մօրից,
Ամենին իւր արժանը, Հայ մօրի գերեզմանը:

Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՏՐԴԱՏԱՅ

ՅԱԶԱՏՆ ի վեր ի Մասիս,
Արի՛ք, որդիք Հայկեան,
Յրուեալքդ ՚ի մի խումբ պարու,
Քառից հողմոց փող ազգու,
Յաստուածախրախոյս ձայն:

Նախնի կամար բազմերկեան,
Ահա պատի զնովաւ.
Յամպրոպացոյց մըրբերկաց,
Հաշտարան պատերազմաց,
Տարիալին ցոլացաւ:

Ձայն որոտաց, ձայն ահեղ,
Խորանաձև չարկէն,
Արիագունդ տուն Հայկաց
Ձտապալեալ գահիդ արքայ,
Վերականգնեմ անդրէն:

Երգուեալ չաղեզն երկնածիր,
Բարձր զբազդ ձեր ի մէտս,
Թաթ ձեր լեթեր սկսցաւ,
Հակառակորդն սուղաւ
Վայր ի սանդարմետս:

Դիւցազանց պար Թորդոմեան,
Տըխրազգեաց լեզլուեանս,
Ըզլըրթագոյն դիմաց մէդ,
Յաստեղաց բոց վառին չէկ,
Յուետեաց հրաւիրանս:

Արդ, ի՞նչ արի սպառազէնք,
Տուք կալթիս հսկայաքալ:
Դաշտք ի պղինձ բոցասցին,
Լերինք ի նշույ շլասցին,
Ձոկատիցն ի գետալ:

Ահա ձեզ Հայկ երկնածեմ,
Հայր ձերում բանակի,
Ասպարափակ հովանեաւ,
Ձձեօք ի բարձանց փարեցաւ,
Անթափանց նիղակի:

Շուրջ սար առեալ զտրքայիւ,
 Զօրավարք Արամայ,
 Բոլորեցէք Համերամ,
 Պսակ փառաց անթառամ,
 Կեցցէ՛ Տրդատ մեր արքայ:
 Հ. Ա. Վ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅՈՑ

ԿԱՐ ԺԱՄԱՆԱԿ որ և Հայերն,
 Արքայ իշխող ունէին -
 Եւ զինալառ անթիւ զօրքեր,
 Իրենց երկրում պաշէին

Կար ժամանակ որ և անոնք,
 Նման ծագկած աղգերի -
 Զարդարելով աշխարհ Հաշկայ,
 Փաշլում էին անուանի:

Բայց աջժմ անտէր, անթաղաւոր,
 Դերի, ծառաց ցաւազին -
 Այստեղ, այնտեղ խիստ չքաւոր,
 Զարչարուում են գլխովին:

Այժմ նոքա անմխիթար,
 Հաչրենիքից զրկուելով,
 Վա՛յ են կանչում թշուառաբար,
 Հալածանքներ կրելով:

Յ. Մ. ՎԱՐԱՆԴԵՅԻ



Գ. ՄԱՍ

ՀԵՅՐԵՆԵՍՈՒՐԵԿՆԵՆ ԵՐԳԵՐ

✠

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Ան, ՀԱՅԱՍՏԱՆ, Հայաստան,
 Ընդէ՞ր կորուսէր տէրրդ -
 Եղեր այլոց ապաստան,
 Թառամեց վարդ պատկերդ:

Ո՛չ քեզ պէս բարեպաշտ կար,
 Ո՛չ վանքերիդ պէս վանքեր -
 Ո՛չ դաշտերիդ պէս դաշտ կար,
 Ո՛չ Հանքերիդ պէս Հանքեր:

Հողդդ պըտղաբեր՝ ագնիւ,
 Քարերդ ողջ ափունք էին -
 Գետերդդ լիքըն անթիւ,
 Կարմրախաչո ձրկունք էին:

Լերինքդ ծաղիկ Հագած՝
 Իբր Հարոնացեալ օրիորդ,
 Եղջերուքդ վաստակած,
 Ի՞նչ շահ որ չունիս որսորդ:

Այգեացրդ ամեն մէկըն,
 Էր դըրախտ Եղեմական -
 Բայց անբաղդութեան տէգըն,
 Խըլեաց լարդդ կենսական:

Թո՛ղ թըշնամիք բերկըրին,
 Մեր աչաց արտասուներով -
 Յուսամ՝ երկար չի մընան
 Նըրանք էլ ուրախ հոգւով:

Աստուած ամենագէտ է,
 Անսահման արդարադատ -
 Անաչառութեամբ գիտէ,
 Լաւին լաւ տալ, վատին վատ:

Ես եմ Մէլեաթի կինըն,
Մատաթեան տոհմի Ոսկին.
Հալրենեաց կաթողինըն,
Հաւատացէ՛ք իմ խօսքին:
Տիկին Ոսկի Մաղաթեանց, ամուսին Սէլեաթի.

ԱՐ. ՀԱՅՐԵՆԻՔ

Ա՛հ, ՀԱՅՐԵՆԻՔ, երբ կը տեսնեմ քեզի լաւ,
Ուրախ զուարթ ապահովուած առանց ցաւ.
Երբ կ'ստանաս քաղաքական մեծ համբաւ,
Որ դու հազնիս արքայական նոր հալաւ,
Չը մեռնէի մէկ տեսնէի անգրաւ,
Քո թշնամու կաշքը լինէր քեզ գրաւ:
Ա՛խ, տեսնէի Կարին նստած Հայ իշխան.
Հայ տառերով գրէր Հայոց հրաման.
Տիգրանակերտ, Մուշ, Պաշազիտ դէպի Վան,
Ուղարկուէին Հայոց զօրքեր պաշտպան.
Քիւրդ և Տաճիկ գլուխ ծռած Հայութեան,
Ճանաչէին թէ սա՛ է քաջ ազգ իրաւ:
Փառք աչն աւուր, ո՛հ, հաղար փառք աչն ժամին,
Հայաստանը երբ Հայոց տալ կը կամին,
Թո՛ղ նկատեն չաչնժամ Հայկաջ երամին,
Տեսնեն ինչպէս շուտ կը չաղթեն թշնամին.
Ապերախտ չեն քաջ թողները Արամին,
Միշտ կը պաշեն իրենց ցեղն անպարտաւ:
Պիտի տեսնե՞մ արդեօք մի Հայ դատաւոր,
Տաճկահայաստանում նստած փառաւոր.
Պիտի վերնայ լուսինը կիսաբոլոր,
Անոր տեղը խաչը փայլի լուսաւոր.
Աչն տեղ իշխէ Հայոց ազգի թագաւոր,
Ժպտի մէկ օր Հայաստանի բաղդ բոլոր:
Կուգայ արդեօք աչն օրը մեզի համար,
Ազատութեան հոգս քաշեմ անդադար.
Աշխարհումը մի բան չկայ անհնար,
Աշխատելով մարդ չի գտէ նրան ճար,
Եթէ Աստուած մէկուն լինի բարերար,
Աչնպէս ազգը չի վնասուիր ոչ բնաւ:

ՋԻԻԱՆ

Ի ՆՈՐ ՏԱՐԻ

Ա.ՀԱ՛ տարի մ'ալ սահեցաւ,
Հալուն նորէն մնաց ցաւ.
Մեր տուն տեղը դարձեալ թողած,
Շատերը ջտարս լքած.
Կը հեծեն ու կը հառաչեն,
Իրենց սրափ խոր խորերէն,
Ա՛խ Հալրենիք, իմ Հալրենիք,
Երբ պիտի տեսնեմ քեզ մօտիկ,
Մի քիչ ազատ,
Թրքին ձեռքէն ապիրատ,
Քրդին ձեռքէն ապիրատ:

ՏԱՃԱՏ ՊԵՅԼԵՐԱՆ

(Շարունակութիւն)

Թէպէտ այսօր խինդ ի սրտի,
Կ'ողջունուի նոր տարի,
Բայց զի Հայերս դեռ չենք կրցել,
Նպատակնու հասնիլ.
Ո՛չ չենք ուրախ և չենք զուարթ,
Այլ կ'սպասենք մենք անհանգարտ
Նախ Հայաստան մեր Հալրենիք
Տեսնել ազատ և երջանիկ.
Նոր տարի է վաչել,
Ապա տօնել
Նոր տարի է վաչել:
Պանդուխտ Հայերն կը հառաչեն,
Առ Հալրենիք հեռուէն.
Իսկ մենք որ .աստ ի Հայաստան,
Ունինք տեղ բնակութեան.
Դեռ միեւնոյն խեղճ ու թշուառ,
Վիճակն ունիմք անմխիթար.
Աչերս արցունք ու հեկեկանք,
Չեզան ու չեն մեզի փրկանք.
Այսպէս կ'անցնի,
Թող անցնի աչս տարի,
Թող անցնի աչս տարի:

Բայց ոչ երբէք չենք չուսաճաւ ,
Այլ ճիշդ ու ջանք անընդհատ .
Պիտի թափենք , պէտք է թափենք ,
Մինչ Հաշատանը փրկենք .
Ռւխտենք աչա բան բոլոր սրտով ,
Գլուխ Հանել մեծ ու փոքրով ,
Արիւն քրտինք , ինչ որ ունինք ,
Ձուհենք մինչ մեր իղձ պսակենք .

Եթէ ոչ մենք ,

Բնաւ երբէք ազատ չենք ,

Բնաւ երբէք ազատ չենք :

Երբ աչա ուխտով ողւով երնենք ,
Նոր տարւոյս դիմաց մենք ,
Հէզ Հաշատան քանի մ'ամսէն ,
Փառօք կանգնի անդրէն .

Ոչ ապաքէն զի կալ չաշխարհ ,
Գերեաց փրկիչ Ձարն վեհափառ ,
Որ թշուառներն ազատելու ,
Ունի վեհ սիրտ և ձայն ազգու :

Ուրեմն խրախոյս

Առնենք սիրտ նաև չոյս ,

Առնենք սիրտ նաև չոյս :

Վան, 1881, Յունի. 1.

ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ

ԻՂՁ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՌ ԸՆԿԱԼ ի գիրկդ , Մայր Հայաստան ,
Ձորգիս քո սիրուն ցրուեալ աստ և անդ ,
Տե՛ս ի՛նչպէս սիրովդ և քու կարօտով ,
Վառուած բորբոքած քո տեսողդ ցանկան :

Յորդորակ

Արի՛ , կաց ուրեմն , ո՛վ Մայր Հայաստան ,
Նոր ոգի զգեցիր փառօք անվախճան :

Օ՛ն , զրահաւորիմք , ո՛վ որդիք Հալկեան ,
Մեր մօր արցունքներն ջնջել չաւխտեան .
Ձօրանանք սիրով և սուրբ միութեամբ ,
Ընդդէմ թշնամեաց բլլանք ախոյեան :

Յորդորակ

Հաղա գործելու ժամանակն Հասաւ
Հայրենասիրին կալ փառք անդրբաւ :

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՈՒՐ Է ՀԱՅԱՍՏԱՆ

ԳԱՐՆԱՆ խիստ անուշ պաշտառ ատենն էր ,
Անկալ ես ի դիրի աշխարհի աւեր ,
Գեղեցիկ ծաղիկունք բուրէին Հոտեր ,
Բայց սիրտն իմ ունէր ջերաջերմ տրոփմունք :

Ոգիս զգայուն իւր մտօք անհուն ,
Կը տեսնէր ցաւէր Հայաստան անտէր ,
Հայաստան անտէր ո՛վ էր իւր զաւակ ,
Երթար տարածեր չուսող նշույններ :

Իւր օրեր վսեմ մատնեալ մթութեան ,
Չունէր իւր վսեմ , որ կայրն Հայաստան ,
Մայրիկ , իմ մայրիկ ո՛ւր է Հայաստան ,
Ո՛ւր է իմ նախնեաց փառաւոր տապան :

Սիրտ իմ աղեկէզ կ'ընէր Հարցումներ ,
Ոգիս կը տանջէր Հայրենեաց աւեր ,
Սիրուն Հայաստան չունէր իւր զարդեր ,
Մեռան իւր օրերն իջան գերեզման :

Ո՛ւր մեր Հայրենիք որոնք կը գթան ,
Այսօր թշուառիկ տուաւ պատասխան ,
Վշտացեր է սիրտ Հայրենեաց , Աւա՛ղ ,
Չորնայ իմ ժպիտս ուր չըթանց ծիծաղ :

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

ԴՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ , մայր սիրական ,
Ինչո՞ւ աչգպէս խեղճ դերի ես .

Բոլոր փառքերդ դու կորուսեր
Այժմ լալկան կին ես դարձեր :

Հերիք սրբես դառն արցունքներդ
Եկ իմ սիրտս Հանդարտեցուր ,

Օտար ազգաց մէջ ես թաղուեր ,
Բոլոր որդիքդ քո են գերուեր :

Բոլորովին օտար ազգեր,
Զքեզ կատեն կը նախատեն:

Թ. ԶԱԻԶԱԻԱԹՃԵԱՆ

ԽՐԱԽՈՅՍ Ի ՄԻՈՒԹԻՒՆ

Դեմ նոր Հայրենիք, դեմ նոր ազգութիւն,
Դարուս շնորհիւ պարտք և իրաւունք.
Սահման և կշիռ թոթովել գիտցանք,
Ո՞վ Հայաստանի պանդուխտ գաւակունքս:

Կրնա՞նք արդ զոհել, կրնա՞նք ամեն բան,
Անձնական կրից մատնել անխնայ,
Եւ օտարին շահն ազգին վնասող,
Ո՞վ կրնայ խնդրել, ո՞ր ացն եղեռն Հայ:

Զգուշ, ո՞վ Հայեր, զգուշ կենանք միշտ,
Քանզի ազգադաւ սլանան նետեր,
Մեր խոցուած սրտերն կրկին խոցելու,
Պահենք զսոցն ամուր սիրոյ վաճանաւ:

Միութիւնն ըլլայ զրա՛հ անվտանգ,
Եւ անհամաձայն թէ գտնուինք մեր մէջ
Այլոց միջամուտ ներքեք ոչ երբէք,
Ազատ ու հաւասար, ամենքս ալ եղբայր:

Հեռատես, զգուշ և գործօն անդուլ,
Ազգային կամաց հպատակ անխօս.
Այսպէս կրթուի Հայ մանկութիւնը,
Այսպէս պատրաստուի պատանեկութիւնը:

Ու երիտասարդութիւնն ըլլայ անըկուն,
Անտէր ախոյեան Ազգին իրաւանց.
Ու թող ծերութիւնն հսկէ լըջամիտ,
Հայոց բաղդն ու արեւ չուսով ողջունել:

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՅԵՐՈՒՍ ԹՈՒՔԸ

ԴՈՒՆ ԽԵԼՕՔ Հաշուով վաճառական ես,
Միւլք, փող ու ապրանք կտան շատ ունեւ,
Բայց թէ փողէդ շահ չունի Հայաստան՝
Թըքել ենք քո՛ւ ալ, փողիդ ալ վրան:

Քաջ ես չսեղ եմ, ինքդ մեծաւոր,
Անուն չաղթողի ունիս փառաւոր.
Բայց թէ թըրէդ շահ չունի Հայաստան՝
Թըքել ենք քո՛ւ ալ, թըրիդ ալ վրան:

Ի վերուստ քանքար քեզի տրուած է,
Հեղինակ անունդ աշխարհ փռուած է.
Բայց թէ դըրէդ շահ չունի Հայաստան՝
Թըքել ենք քո՛ւ ալ, դըրիդ ալ վրան:

Հեռատես մըտքով դուն դարդարեցար,
Հըզօր իշխանի սիրելին դարձար.
Բայց թէ մըտքէդ շահ չունի Հայաստան՝
Թըքել ենք քո՛ւ ալ, մըտքիդ ալ վրան:

Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,
Շատ կը չօրինես թանկագին բաներ,
Բայց թէ ձեռքէդ շահ չունի Հայաստան՝
Թըքել ենք քո՛ւ ալ, ձեռքիդ ալ վրան:

Երկինք շնորհեցին քեզ լեզու ճարտար,
Քարոզչի ստացար Հրոջակ ու հանձար,
Բայց թէ լեզուէդ շահ չունի Հայաստան՝
Թըքել ենք քո՛ւ ալ, լեզուիդ ալ վրան:

Մեծ ուսումն առիր, եղար գիտնական,
Գովքովդ լցուած է մարդոց բերան.
Բայց թէ ուսումէդ շահ չունի Հայաստան՝
Թըքել ենք քո՛ւ ալ, ուսմանդ ալ վրան:

ԳԱՄԱՌ-ԳԱԹԻՊԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՌ

ԵՍ մէկ ծառ եմ ծիրանի,
Հին արմատ եմ անուանի,
Պրտուղներըս քաղցրահամ,
Բոլոր մարդկանց պիտանի:
Արեւելքում ինձ տընկեց,
Երբ որ Աստուած ստեղծեց,
Ասաց՝ «աճէ՛, բազմացի՛ր»,
Մի աչգի էլ ինձ տուեց:

Հին ծառ եմ Արեւելան,
Չունիմ որոշ աչգեպան,
Տունկերըս ամեն երկիր
Ընկած են բաժան-բաժան:
Ուղարկեց մի աչգեպան —
Հարաւից Հըսկայ իշխան,
Աչդ Հըսկայի անունով
Կոչուեցայ ծառ Հայկական:

Տունկերըս ուր էլ գընան,
Թէպէտ նոյնը կը մնան,
Բայց օտարի Հողի վրայ
Չեն աճի, կը չորանան:
Չորս Հազար տարւայ ծառ եմ
Արմատըս պիտո՞ւ կայտառ եմ,
Թէպէտ ոչժըս պակաս է,
Բայց անունով պաշտառ եմ:

ԶԻՒԱՆԻ

Կ Ի Լ Ի Կ Ի Ա

ԵՐԲՈՐ բացուին դռներն յուսոյ
Եւ մեր երկրէն փախ տալ ձըմեռ,
Չըքնաղ երկիրս մերս Արմենիոյ
Երբ փալէ իւր քաղցրիկ օդեր,
Երբոր ծիծառն ի բոցն դառնայ
Երբ որ ծառերն Հագնին տերեւ՝
Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Տեսի դաշտերըն Սիւրբիոյ,
Լեռոն Լիբանան և իւր մայրեր,
Տեսի գերկիրն Խաւրիոյ,
Վենետիկ և իւր Կոնստանդուպոլս,
Կըզդի նման չիք մեր Կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայր է արդարեւ
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,
Աշխարհն որ ինձ ետուր արեւ:

Հասակ մը կալ մեր կենաց մէջ,
Ուր անենայն իղձ կ'աւարտի.
Հասակ մը ուր Հողին 'ի տենչ՝
Յիշատակաց իւր կարօտի,
Յորժամ քընարս իմ ցըրտանայ,
Սիրոյն տալով վերջին բարեւ՝
Եւ թամ նընջել չիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ

ՇՈՒՇԱՆԻԿ

ԷՐ ՀԵՌԱՆԱՍ քո մայրենի աշխարհից,
Կարօտ թողուս սեբա բաբեկամք քեզանից.
Մեր ամենուս դու մայր էիր գըթառատ,
Արդ Հեռանաս՝ մեզ մութ պատէ անփարատ:

Քո սուրբ ձեռք մեր վէրքերը շատ անգամ
Լուանայիր, դեզ դնէիր ամեն ժամ.
Քո մաղերից ոլորէիր վիրակապ,
Քո բոլոր կեանք ազգիդ Համար է, անկապ:

Արդ Հայոց զօրքն իրեն մօրից սրբանայ,
Վրաց ազգը քու խնամօք պերճանայ.
Հայաստանը զրկուի իր սուրբ շուշանից,
Վրաստանը բուրէ Հոտով քաղցրալից:

Ուր որ երթաս, ուր որ լինիս, տիրուհի,
Մեր սիրտ, Հողին, քեզ Հետ տանիս, Մաքրուհի,
Գնաս բարեաւ միշտ չոյս Հաւատ քեզ ընկեր,
Այն ու խաչը քեզ պահապան զօր, գիշեր:

Ազգդ ու Հաւատդ պիտո՞ւ պահպանէ մէջ Վրաց,
Հայ անունդ միշտ պահէ անմոռաց.
Լոյս Հաւատիդ Հաստատ կացիր յաւիտեան՝
Լոյս Հաւատդ քեզ միշտ պահէ անսասան:

Յ. ԿԱՐԻՆԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔ

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔՍ զիս կը կանչէ,
Հեռու եմ Հայաստանէն,
Հայու որդուն կը վաչելէ՞
Հեռանալ Հայաստանէն:

Միթէ՞ արծաթ, ոսկի, գոհար
Կը սփռի՞ Հայաստանը.

Ան որ կ'ողբայ որդւոց համար՝
Խղճալի Հայաստանը:

Խոր տխրութեան մէջ է թաղուեր
Թաղուհի Հայաստանը:
Բորիկ ոտքով, արձակ մաղով:
Կ'արտասուէ Հայաստանը:

Անգութ երկինք ալ չի չիշեր,

Մոռցեր է Հայաստանը.

Անտիրտ Հայեր ալ չեն չիշեր

Անուշիկ Հայաստանը:

Ո՛հ, թողէ՛ք զիս՝ խօսիմ ազատ,
Երգեմ միշտ Հայաստանը.
Անո՛ւշ երկիր, կոչս անարատ,
Աննձան Հայաստանը:

Արեւ ծածկեր է իւր գէճքը՝

Խաւար է Հայաստանը:

Հայոց արեն ալ մարեր է,

Սև է հազեր Հայաստանը:

Թըշուառ սըրտիս ձայն կը կըտրէ,
Ողբալով Հայաստանը,
Ո՛հ, չի կայ Հայ որ սփռիէ
Նուաղեալ Հայաստանը:

Մինչև կըտրի իմ վերջին շունչս,

Պիտի կանչեմ Հայաստան,

Պըլլուիմ մէջ մ'իմ Հայրենեացս,

Ապա մտնեմ իմ գերեզման:

Անգորրութիւն ես կը խնդրեմ
Սիրելի Հայաստանին.
Կտրել աչս ձայն չէ՛, չէ՛ կարող
Սոսկումը գերեզմանին:

Ա. ՀԱՅԿՈՒՆԻ

ԳԱՆԳԱՏ

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ Թշուառ, անտէր,
Քու հողն ու ջուրն ինձ սիրուն,
Վոչադ, բոչադ և օդդ ընտիր,
Բայց կեանք չը տան Հայերուն:

Հայ երկրագործ միշտ կ'աշխատի,

Օտարին է իւր վաստակ.

Հայն սովածա՛հ կը կորնչի,

Չկայ իրեն յոյս փրկանք:

Հալի ստացուածք թէ ճոխ լինի
Կը կողոպտէ զայն օտար.
Հայն միշտ բոկոտն թող պըտըտի,
Ո՞վ է իրեն հոգատար:

Հալի կաշուածք թէ ճոխ լինի

Կ'ըլլայ աւար օտարին,

Հայ չինութիւնք, տուն և աչգի

Յափշտակէ թշնամին:

Օտարն կ'անուռ բռնի իւր ծոց
Հայ Օրիորդ և Տիկին.
Կը թողու լափել կրակ ու բոց
Զհայր, տուն, զաւակ, աչք և կին:

Հալի արեամբ ներկուեցաւ

Հայաստանի շեն ու ձոր.

Հալի փրկիչ վերէն տեսաւ՝

Բայց լուռ կեցաւ անսովոր:

Աստուա՛ծ, միթէ դուն գութ չունի՞ս,
Թշուառ Հալի սերնդին.
Հայ արիւնէն չա՞տ կ'ախորժիս,
Կ'ուզես իսպառ կորնչի՞ն:

Թէպէտ Հալի մեղքը շատ է,

Նոյնպէս շատ է իր տանջանք.

Շուտով ելիր զինքն ազատէ՝

Գործ մը գործէ ընդունակ:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Երկիր դրախտավայր,

Դու մարդկայնոց ցեղիս որրան,

Դու և բնիկ իմ Հայրենիք,

Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Ի վեհ անունդ սիրտ իմ, ո՛հ, չոյժ

Ողևորի 'ի նոր խրախույս.

Եւ անձկացրեաց 'ի քեզ չուսած,

Ի քեզ, 'ի քեզ չոյս իմ միայն,

Հայաստան, Հայաստան, Հայաստան.

Հայաստան անուն փարեցի,

Ի քեզ Հանդիստ Նուբան տապան

Եզիտ և քե ապրեցաւ Նոյ,

Հայաստան, Հայաստան, Հայաստան.

Գետք քառառաջը աղենարուղի,

Ձհողըդ բարի առնեն չուսթի.

Քե ապրիմ ես, քե միշտ ցընծամ.

Քե, քե պանծամ փառք իմ միայն,

Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Հայաստան ծընող դիւցազանց

Եւ Հրաշալեաց Հանդիսարան.

Քո զեփիւռին քաղցր է շրնչիւն,

Հայաստան, Հայաստան, Հայաստան,

Ձոր շրնչեցին և զօրացան,

Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,

Տըրդատ, Սըմբատ, Վարդան, Վահան.

Ըզբեզ լիչեմ, ըզբեզ սիրեմ,

Ըզբեզ, ըզբեզ սէր իմ միայն,

Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Յ. Մ. ՎԱՆԱԴԵՑԻ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՅ ԵՐԳ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՔ մեռանիմք

Այն ինչ մեք մեր ազգին

Վշտակոծ սե կեանքին

Հողի տալ կը ճգնիմք.

Ո՛հ, երբէք չմեռնիմք,

Այլ այնչափ մենք ապրինք.

Մինչ զի մեր Հայրենիք,

Ըսէ մեզ իմ վիշտ չիք:

Հայրենասէրք մեռանիմք,

Այն ինչ դաւ ու թակարդ

Ընդ ոտիւքս մեր կայ արդ.

Եւ թիկունք մենք չուսինք:

Ո՛հ, երբէք չի մեռնիմք,

Այլ Եղբարքս միշտ ապրինք

Ձի Տէր է մեր թիկունք

Թէ փշրին մկանունք:

Հայրենասէրք մեռանիմք

Այն ինչ դեռ նոր կենաց

Առաւօտ է ծագած,

Մութի մէջ ընկղմի՞մք:

Ո՛հ, երբէք չը մեռնիմք,

Միշտ լուսոյ մէջ մենք ապրինք

Խարսերդ Հոկտ. 1, 1877

Թող մեռնին անոնք որք,

Ազգիս վրայ չուսին Հոգ:

Հայրենասէրք մեռանիմք,

Մինչ ահա Հայրենեաց

Կարմիր դրօշն սիգապանծ

Ծածանի ի Մասիք:

Ո՛հ ես ալ ոչ չապրինք,

Օն եկէք գրկուինք

Եւ իջնենք ցուրտ դամբաձ

Թող ապրի Հայաստան:

Ո՛հ, այո, ալ մեռնիմք,

Ձի տեսանք Հայրենիք,

Ազատուած, փրկուած,

ԲԱՐԹՈՂ ԹԱԹԱՌԵԱՆ

ՄԻ ԶԱՅՆ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ

(Նուէր Տիգրանակերտի Հայոց Հայրենասիրաց Միութեան Անդամներին)

ՀԱՅՐԵՆԻՔԷՆ ողբի ձայներ կը շուրին,

Որք ապառաժ սիրտերն անգամ կը չուզեն,

Մի՞թէ դուք չէք լսեր այդ ձայն տիրադին,

Ձոր ձեր թշուառ մայր կարճակէ իւր սրբոյն:

«Հայեր, մինչև ե՞րբ զիս պիտի մոռնաք,

«Ձեր Հայրենիք ցե՞րբ մնայ աւերակ:»

Ա՛հ, անգութներ, որ Հայ անուն կը կրէք,

Բայց այս ձայնին անկարեկիր սիրտ ունիք.

Ձեր մէջ չկայ Հայկի արիւն, դուք Հայ չէ՛ք.

Ճշմարիտ Հայն կը սիրէ իւր Հայրենիք:

Կեցցէ՛ չաւիտեան մեր Հայ ազգութիւն,

Եւ «Հայրենասէր Հայոց Միութիւն»:

Հնա՞ր է որ մարդ չսիրէ Հայրենիք,

Մինչ դադանն խկ կզգայ իւր որջ պաշտպանել.

Ի՞նչ անուն տանք այն Հային որ է գործիք,

Օտարին ձեռք՝ իր Հայրենեաց դաւ լարել:

Կեցցէ՛ չաւիտեան մեր Հայ ազգութիւն,

Եւ «Հայրենասէր Հայոց Միութիւն»:

Չէ՛, ա՛լ մենք չենք կարող մնալ անտարբեր
Հայրենիքի երբ ձայնն զմեզ կը կանչէ,
Մենք բարձրագոյ ձայն տանք, չառա՛ջ, ո՛վ Հայեր,
Եւ թո՛ղ տեսնեն Տիգրանակերտն ալ վատ չէ:

Կեցցէ՛ չաւտեան, մեր Հայ ազգութիւն

Եւ «Հայրենասէր Հայոց Միութիւն»:

Հայկի թոռներ, տեսէք, Մասիս սարերէն,
Քառասուն դարեր կը դիտեն ձեր շարժումներ.
Յառա՛ջ անվախ այն դրօշակի ետեէն,
Ուր կ'ամփոփուին Հայրենասէր քաջ Հայեր:

Կեցցէ՛ չաւտեան մեր քաջ ազգութիւն

Եւ «Հայրենասէր Հայոց Միութիւն»:

1875, Տիգրանակերտ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ԳԵՐԻ ՅՈՅՆԸ ԲԱՆՏՈՒԹԸ

ՀԱՅՐԵՆԻՔ սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թռչում եմ դէպի քեզ հոգւովս անդադար.
Բայց առա՛ղ, այս բանտում փակուած եմ անտես,
Պատերազմի դաշտում կուռում և ես:

Հանապազ տանջուեցայ քո ճակատագրով,
Սրտումս չղթաների ձայներ կրելով.
Թող այս տեղ չարչարուիմ, անծանօթ կապուած,
Միայն քեզ Հայրենիք տեսնեմ ազատուած

Ա՛խ, քո ազատութիւն փոթորկի մէջ է,

Եւ վառ արշալոյսը քո խաւարում է:

Ձգիտեմ, ի՞նչպէս է կռիւն հրդեհում,

Ես չունիմ ոչինչ լուր, բայց լուրն է թռչուն:

Ստանում եմ միշտ համբաւ բռնութեան ահեղ,

Թափում է ազն արիւն, բայց ես չեմ այնտեղ:

Կը փշրեմ իր չղթան, կ'եղնեմ այս բանտից,

Սրբել դառն արտասուք, քո սէգ աչերից:

Քաջ ընկեներովս Հեշտ է ինձ կռուել,

Եւ սուրբ դործի համար քաղցր է մեռանել,

Բայց առա՛ղ, այս բանտում փակուած եմ անտես,

Պատերազմի դաշտում չեմ կուռում և ես:

Յ. ՔՈՒԶՈՒԲԵԿԵԱՆ

ԽԱՐԲԵՐԴՅԻ ՊԱՆԴԵՏԻ ԵՐԳԸ

ՀՆՌՈՒ ևմ քեզմէ օտար երկրի մէջ,
Եղած եմ պանդուխտ, սիրուն Հայրենիք.
Ի լեռն և ի դաշտ կ'ընեմ ելեէջ,
Քեզ չեմ մոռնար ես, սիրուն Հայրենիք:

Տեղեմաքայ պէս կրեմ արկածներ,
Եւ պատահին ինձ ձախորդ դիպուածներ,
Քեզ մոռնալով եմ, երբէք, չեմ կարծեր,
Ծնած եմ քու մէջ, սիրուն Հայրենիք:

Մելտոնի մը պէս ճարտար գրիչ չեմ,
Որ դրախտի մը նմանցընեմ քեզ
Ոչ ալ Եունկի պէս ճարտարամիտ եմ,
Որ գովաբանեմ սիրուն Հայրենիք:

Երբ կուգայ միտքս իմ մանկութիւնս,
Ճեմելով քու մէջ վայելած սէրս,
Շուտ մ'արցունքս կ'առնու աչերս,
Յուշաթափ կ'ըլլամ սիրուն Հայրենիք:

Ո՛հ, այս ինչ մեծ վիշտ և ինչ մեծ արկած,
Իբր տարագիր եմ քեզմէ դատուած,
Մեծամեծ լերինք մինչդեռ բարձրացած,
Քեզ չեմ տեսներ ես սիրուն Հայրենիք:

Երբ կուգայ դարուն, կը բացուին վարդեր.
Խմբակ կը կազմեն երիտասարդներ,
Պար առեալ ցնծան քու օրիորդներ,
Երգելով բերկրեն սիրուն Հայրենիք:

Կը բուժին ցաւերս երբ լսեմ սէրդ,
Գիտութիւն ըրած քու մեծ ընկերդ,
Սիրել՝ Աստուածդ և ընկերներդ,
Պանդուխտ ալ ըլլամ սիրուն Հայրենիք:

Ձեռք ձեռքի տուէք քորք և եղբայրներ,
Անխնայ բացէք ուսումնարաններ,
Տարագրեցէ՛ք տղիտութիւններ,
Թող չառաջանայ սիրուն Հայրենիք:

Որպէս Մովսէսին պատգամին Սինայ,
Ի քեզ չաշտնեցան տառն Մեսրոպայ,
Ի պարծանս ի տան Արամայ Հայկայ,
Հայոցս պարծանք, սիրուն Հայրենիք:

Դաշտերդ ծաղկածբ, լեռներդ չուշանով՝
լեցուն ես միշտ դու սիրուն Հայրենիք:

Թէ Հանէիր ինձ խառն գոյներով,

Կը Հոտոտէի սիրուն Հայրենիք:

Ձարդարուն դաշտերդ փարելի ծաղկով,

Առ ափն Եփրատաց պատուական դիրքով,

Քեզ գովարանել կուզեմ աստ երգով,

Խարբերդ քաղաքդ իմ սիրուն Հայրենիք:

ԳՐԻԳՈՐ ՄՈՒՄՃԵԱՆ

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

ՄԱՅՐ—ԱՐԱՔՍԻ ափերով

Քաջամուրը գընում եմ.

Հին-Հին դարուց չիշատակ

Ալեաց մէջը պըտորում եմ:

Բաց նոքա միշտ չեղչեղուկ՝

Պղտոր ջրով եզերքին

Դարիւ-դարիւ խփելով՝

Փախչում էին լալադին:

— «Արա՛քս, ինչո՞ւ ձկանց Հեա

«Պար չես բռնում մանկական,

«Դու դեռ ծովը չը Հասած՝

«Սըգաւոր ես ինձ նման:

«Ինչո՞ւ արցունք ցալտում են

«Քո սէգ, հըպարտ աչերից,

«Ինչո՞ւ արագ փախչում ես

«Այդ Հարազատ ափերից:

«Մի՛ պղտորիլ չատակդ,

«Հանդարտ հոսէ խալտալով,

«Մանկութիւնը քո կարճ է,

«Շուտ կը Հասնիս դէպ ի ծով:

«Վարդի թփեր թող բուսնին

«Քո հիւրընկալ ափի մօտ,

«Սոխակները նոցա մէջ

«Երգեն մինչև առաւօտ:

«Մշտադալար ուռիներ

«Սառ ծոցի մէջ քո ջրին

«Ճըկուն ոստն ու տերև

«Թող թաց անեն տապ օրին:

«Ափերիդ մօտ երգելու

«Հովիւք թող գան Համարձակ,

«Գառն ու ուլը քո վըճիտ

«Ձուրը մըտնեն միշտ արձակ»:

Մէջը ուռցուց Արաքսը,

Փըրփուր Հանեց իր տակից,

Ամպի նման գոռալով՝

Այսպէս խօսեց չատակից. —

— «Խիղա՛խ, անմի՛տ պատանի,

«ՆիրՀես ինչո՞ւ դարեոր՝

«Վրդովում ես, նորոգում

«Ի՞մ ցաւերը բիւրաւոր:

«Սիրելիի մահից չեա՝

«Ե՛րբ ես տեսել որ ալին

«Ոտքից գըլուխ պըճնուի

«Իր զարդերով թանկագին:

«Որի՞ Համար զարդարուեմ,

«Որի՞ աչքը հրապուրեմ,

«Շատերն ինձ են ատելի,

«Շատերին ես օտար եմ:

«Կար ժամանակ որ ես էլ

«Շքեղազարդ Հարսի պէս՝

«Հազար ու բիւր պըչրանքով

«Փախչում էի ափերէս:

«Յատակըս պարզ ու վըճիտ,

«Կոհակներըս ոյրուն,

«Լուսաբերը մինչև ալց

«Ջըրիս միջին էր՝ լողում:

«Ի՞նչըս մընաց աչն օրից,

«Ո՞ր ջըրամօտ գեղերըս,

«Ո՞րը իմ չէն քաղաքից,

«Ո՞ր բերկրալի տեղերըս:

«Տուրքը ջրբի ամեն օր
«Իր սուրբ ծոցէն Արարատ
«Մայրախնամ ինձ սնունդ
«Պարգևում է լիառատ :

«Բայց ես աչն սուրբ ջրերով,
«Սուրբ Յակոբայ աղբիւրին
«Պիտի ցօղեն արտօրա՞յքն
«Ինձ ատելի օտարին :

«Կամ կենսատու իմ ջրով
«Ափերիս մօտ կըկըզած,
«Իւր ձեռնե՞րը լուսնայ
«Գողն՝ աւազակը հոտած :

«Մինչ իմ ուղիք, ո՞վ գիտէ,
«Ծարաւ, նօթի, անտէրունչ
«Օտար աշխարհ չածում են,
«Թող ոտքերով կիսաշունչ :

«Հեռո՛ւ, Հեռո՛ւ քշեցին
«Բընիկ աղբն իմ Հաչկեան,
«Նորա տեղը ինձ տուին
«Ազգ անկրօն, մոլեկան :

«Դոցա՞ Համար դարգարեմ
«Իմ հիւրընկալ ափերը,
«Եւ կամ դոցա՞ հրապուրեմ
«Ճըպոտ, պըլշած աչերը :

«Քանի որ իմ զաւակունք
«Էսպէս կու մնան պանդուխտ՝
«Ինձ միշտ սգաւոր կը տեսնէք,
«Այս է անխար իմ սուրբ ուխտ :

«Իմ ազգակից գիթ Կուրը
«Թէեւ աչրի ինձ նման,
«Ստրկօրէն տանում է
«Գայթակղիչի կուռ շղթան :

«Բայց նա ինձ չէ օրինակ,
«Ես Հաչ՝ Հաչիս կը ճանչնամ,
«Օտար փեսայ չուզելով՝
«Ես միշտ աչրի կը մնամ :»

Էլ չը խօսեց Արաքսը,
Յորձանք տուեց աՀագին,
Օղակ-օղակ օձի պէս՝
Առաջ սողաց մոլեգին :

Ռ. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ
ԳԱՄԱՌ-ԳԱԹԻՊԱ

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԻ ՀՐԱԺԵՇՏԸ

ՄԵՐ Հայրենեաց փափուկ հողեր
Արեան դետակ են դարձուցեր .
Եւ աչն դաշտերն աղաւթեան,
Թշնամեաց սուրբ կը շողշողան :

Քանաւորին սե թևոց տակ,
Կանի՞ դարեր Հեծենք թշուառք .
Արին արցունք գիշերն ամեն,
Հերիք իջան մեր աչերէն :

Քաշած աղէտքս ալ կը բաւեն,
Վրէժխնդրութեան հրաւէրք հնչեն .
Ալ չեմ կրնար շղթայից տակ,
Գերի տեսնել իմ քորք՝ Է եղբարք :

Այսօր ինձի թող օր մ'ըլլայ,
Յաղթանակի և կամ մահուան .
Գերի մնալէն քաղցր է ինձ, ո՞հ,
Հանգչիլ փառօք նախնեացս ի հող :

Զի ո՞րն արդեօք իմ Հայրերէն
Հանգիստ մահուամբ լուռ ննջած են
Այլ պատերազմ և լաղթանակ,
Միշտ թողուցին մեզ լիշտակ :

Օ՞րն խաչանիչ, դրօշովս փութամ,
Հայրենավրէժ ի պատերազմ .
Վատ ազգերուն դա՛հն կործանեմ,
Եւ լաղթական նուաղս երգեմ :

Զի խրախուսեն իմ Հարց ստուերք,
Ազգիս շղթայք ալ խորտակել .
Իմ Հայրենեաց քաղցր ապագան,
Սրտիս կուտայ ոչժ քաջութեան :

Այո՛, Հոն տեղ մաՀն ինձ քաղցր է,
Աղատութեան երբ փողն Հնչէ.
Հոն զոՀուեցան շատ մեծ քաջեր,
Պարզել չեթերս աղատ դրօշներ:
Հոն թշնամուցն արիւններով,
Դիակաց վրայ անջինջ դրով.
Իմ Հայրենի փառքն դրօշմեմ,
Եւ իմ ճակատս անոնց ցուցնեմ:
Բայց Աստուծմէ աչս էլ խնդրեմ,
Որ օր մ'ուրախ սրտով տեսնեմ.
Աղատութեան չաղթանակով,
Վերադարձն իմ սուրբ Հարցս քով:

ԻՏԱԼԱՅԻ ԱՂԶԱՆ ԵՐԳԷ

«ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԹՆՈՒՄ անտէր,
Մեր թշնամեաց ոտնակոխ.
Իր որդիքը արդ կանչում է,
Հանել իր վրէժ, քէն ու ոխ:
«Մեր Հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
Իր քաջ որդւոց սուրբ արիւնով
Պիտի լինի աղատուած:
«ԱՀԱ՛ եղբայր, քեզ մի դրօշ
Զոր իմ ձեռքովս գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքովս լուացի:
«Նայիր նրան, երեք գոյնով,
Նուիրական մեր նշան.
Թող փողփողի թշնամուցն դէմ,
Թող կործանուի սէդ Հսկան:
«Ինչքան կին մարդ մի թուլ էակ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իւր եղբորը,
Չանց չարեցի քո սիրուն:

«ԱՀԱ՛ իմ դործ, աՀա՛ դրօշ,
Ծուռ ձի Հեծիր քաջի պէս,
Գնա՛ փրկել մեր Հայրենիք
Պատերազմի վառ Հանդէս:

«Ամենայն տեղ մաՀը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի՛, որ իր ազգին
Աղատութեան կը զոՀուի:

«Գնա՛ եղբայր, Աստուած քեզ յոչս,
Ազգի սէրը քաջալեր.
Գնա՛, թէ և չեմ կարող դալ,
Բայց իմ Հոգիս քեզ ընկեր:

«Գնա՛, մեռիր դու քաջի պէս,
Թող չտեսնէ թշնամին,
Բո թիկունքը, թող նա չասէ
Թէ վատ է Իտալացին:»

— Ասաց, տուեց օրիորդը
Իր եղբորը մի դրօշ.
Մետաքսից էր, աղնիւ դործած,
Ուր երեք գոյն կար տրու:
Եղբայրն առաւ և ողջունեց
Իր սիրական քնքուշ քոյր.
Առաւ զէնքը, սուր, Հրացան,
Հեծաւ իր ձին սեւթուր:

«Բույրի՛կ, — կանչեց քաջ պատանին —
Մնա՛ս բարեաւ, սիրական:
Այս դրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակն Իտալեան:

«Նա սուրբ է ինձ, երբ մկրտուած
Արտասուքով ու կնքուած,
Դու չանձնեցիր ինձ վշատակ,
Հայրենիքի նուիրուած:

«Թէ մեռանիմ, դու մի սղար,
Իմացիր որ տարեցի
Դէպի մաՀու արքայութիւն
Իմ Հետ քանի թշնամի:»

Ասաց, վաղեց դէպի հանդէս
Աւստրիացուոց չանդիման,
Իւր արիւնով դնել չաւէրժ
Ազատութիւն Իտալեան:

Ո՛հ, իմ սիրտը կարատուում է,
Տեսանելով աչսպէս սէր
Դէպի թշուառ մի հաչրենիք,
Որ ոտնակոխ եղած էր:

Սորա կէսը, կէսի կէսը,
Գէթ երեւէր մեր աղբուծ:
Բաց մեր կանաչը . . . ո՛ւր, Եղիշ,
Ո՛ւր մեր «տիկնաչք փափկասուն»:

Ո՛հ . . . արտասուք ինձ խեղդում են,
Այլ չեմ կարող բան խօսել.
Ձէ՛ . . . թշուառ չէ՛ Իտալիան,
Եթէ կանաչք աչսպէս են:
(Թարգ.) Մ. ՆԱԼԲԱՆԻՆՍԿԻ

ԱՌ ԱՍՏՂՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ

ՄԵՐ ՍԻՐՈՒՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ
Բեւեռը շողշողող,
Մեր սիրուն քաջազանց
Աճիւններն ցարդ հսկող,
Պայծառ աստղ որ աչժմիկ
Լոյս կ'ընես թափանցիկ:
Մինչև Հայ պանդխտոց
Սրտերուն կուտաս բոց:

Ո՛վ քաղցր Յոյս դու մխիթար
Տարագիր Հայոցս թշուառ,
Ի՞նչ աշխոյժ նորինոր,
Ի՞նչ աշխոյժ ոգևոր,
Կ'արծարծես սրտերնուս,
Ո՛վ Հայոցս միակ Յոյս:

Ձէ՛, ալ չը վհատինք բնաւ, ո՛վ Հայեր,
Մեզ քաջալեր են յոյս և ժամանակ:
Ձէ՛, ալ չը վհատինք բնաւ, ո՛վ Հայեր,
Ժամանակին հետ առաջ ընթանանք.
Յառաջ ընթանանք հոն, ուր հրաւէր
Հրաւէր կարգան մեզ նախահարց աստղեր:

Թէ Հայկաչ որդիք եմք,
Թէ Հայկաչ արիւն կրեմք.
Ամենքս ալ ի սուրբ սէր
Հայրենեաց ինուէր,
Քաջ որդիք պանծալի
Ըլլանք միշտ արժանի:

Ս. Պ. Պ. ՓԱՓԱՋԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԵՐ ՍԻՐՈՒՆ վաչելչական տեղերն օտարները առան,
Արի գնամք ի միասին, ա՛խ Հայաստան, ո՛ւր տեղ ես:
Քո փափաքով վառվում եմ աղնիւ սիրական, ո՛ւր տեղ ես.
Երկնալին ամպերու մէջ նստող ծիածան, ո՛ւր տեղ ես:
Ի՞նչ պատահեց որ դու աչդալէս շուտ հեռացար ինձանից,
Քաղցրախօս, անուշ լեզու, անուամբ դովական ո՛ւր տեղ ես:
Ճանապարհդ նայելով աչքերուս մէջ լոյս չը մնաց.
Արի գնամք ի միասին, ա՛խ, Հայաստան, ո՛ւր տեղ ես:

Յորդորակ

Ով որ իր ազգ ուրանաչ, Կրծին դպի գեղարդը,
Երկու աչքը կուրանաչ, Փորիցըն թափի լեարդը.
Յետեալ աղքատի նման, Գետինն անցնի Եօթն անգամ
Դռնէ ի դուռ մուրանաչ: Ազգ ուրացող վատ մարդը:

ԱԻԵՏԱԲԵՐ ԱՌ ՄԱՅՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՄՌԱՅԼ կողեր թողէ՛ք զիս,
Ձայն մի լսուի փրկարար,
Ձեռք մի քակէ իմ պատանք,
Ելի՛ր մայրիկ, բա՛ւ նիրհես,
Յարութեան դար է այս դար:

Պատանեակ մ'է աչն առօրէ,
Վարդանի դէմքն է իւր դէմք,
Գորով ցալտէ աչերէն,
Ես Վոսիորէն թռչիմ հոս,
Ելի՛ր մաշրիկ, բա՛ւ նիրհես :

Մի ձեռքին մէջ կալ օրէնք,
Ճակտին գրուած հաջրենիք,
Իւր քաջերուն հետքն է լոյս.
Շղթաներդ թող մէկդի,
Ելի՛ր մաշրիկ, բա՛ւ նիրհես :

Խաւար թափի աչերէս.
Աչն ի՞նչ աչդ է լուսածին.
Աչն ի՞նչ աչդ է վարդածին.
Լոյսն ապաղան է Հալուն,
Վարդերն չոյս կեանք են Հալուն :

Երեսն ապա պարեմ դուարթ.
Բերէ՛ք զարդերս սմնուիմ.
Ոսկի զարդերս բերէք ինձ.
Անոնք աւերց տակ կորան,
Յուսոյ վարդ մը բաւ է ինձ :

ՄԱՆՆԻԿ ԷԼՄԱՍԵԱՆ

ՊԼՊՈՒԼՆ ԱԻԱՐԱՅՐԻ

Ո՛չ դու բարեկամ աչրած սըրտեղու,
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ՛ պըլպուլիկդ, երգէ՛ ի սարէդ,
Ձանձա՛կ քաջքն Հալոց երգէ՛ հոգւոյս հետ :

Թաղէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,
Սըրտիկս՝ որ ի խաչն էր կիսի՝ թուած առաւ.
Ի խաչին թեւէն թըռալ ու հասալ,
Գըտալ զքեզ ի դաշտ քաջին Վարդանալ :

Պըլպուլ քեզ համար մեր հարքն ասացին
Թէ չէ հաւ՝ պըլպուլ մեր Աւարաչին,
Եղիշեալ հոգեակն է քաղցրազրուցիկ
Որ զՎարդան ի վարդըն տեսնու կարծրիկ :

Ձըմեռն լանապատ կու գնալ կալ ի լաց,
Պարունն յԱրտաղ գալ ի թուփ վարդենեաց,
Երգել ու կանչել Եղիշէին ձայն
Թէ պատասխանիկ մ'արդեօք տա՞լ Վարդան :
Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆ

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

ՈՂՋՈՅՆ ընդ քեզ, Հայաստան,
Մեր գիւցազանց գերեզման.
Ողջո՞յն Հալոց թագուհի,
Պսակեալ փառքն հալրենի :

Երկինք զրկէ քեզ հրեշտակ,
Բիւր վարդ ծլին ոտքիդ տակ.
Իր մէկ նաչուածքն երկնադեղ,
Քու արտասուացդ ըլլան դեղ :

Ո՛հ, ինչ անուշ նուագներ,
Պիտի Հնչեն սոխակներ,
Երբ քու ճակատդ պսակէ
Ծաղկէոնեան դափնիէ :

Մանուկն չօրրոց կը խալտալ,
Եւ ծերունուոյն սիրտ ցնծալ.
Երբոր նշույլք կը ժպտին
Հալ աստեղաց նորածին :

Ո՛հ, շիրմացդ քով ալ հանդէի
Անձա՛հուրթեան վեհ հոգի՞
Մինչ զուարթունք ի բարձանց
Պսակս սփռեն հալիազանց :

Փափուկ մատունք թող դրոշմեն
Հալ տառերով ոսկեղէն,
Մեր սրտին մէջ՝ սէր և լոյս,
Մեր հոգւոյն մէջ՝ կեանք և չոյս :

Քու վիշտերուդ փոխանակ
Երկինք կանգնէ չաղթանակ.
Քու վէրքերուդ ալ դարման,
Քեզի օրէնք շնորհեցան :

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

ԵՐԳ ԱՐՁԱՍԳ ՆԻԱԶՈՎ ԺԵՆԵՐԱԼԻՆ

ՈՂՁՈՅՆ տուէք իմ Հայրենեաց կիսակործան տա-
հարներուն ,
Ողջոյն տուէք աւերակաց Արարատեան դաւառներուն
Ողջոյն տուէք, դժբաղդ Հայուն, թշուառ Հայուն ,
չուառ Հայուն ,
Ո՛հ, ձեռք տուէք, ո՛հ, սիրտ տուէք, ողի տուէք ան-
կեալ Հայուն :
Ողջոյն տուէք, Աւարաչրի արիւնքներէ սուրբ վաչ-
րներուն ,
Ողջոյն տուէք ախուր լուսնին, որ լոյս տալ սև շի-
րիմներուն :
Ողջոյն տուէք իհող իջած արքայական սպառառներուն
Ողջոյն տուէք գեանատարած սրբոց անբիծ մասունք-
ներուն :
Ողջոյն տուէք ոլոր, կլոր, մոլոր վազող դետակ-
ներուն ,
Ողջոյն տուէք բոլոր պղտոր, աղի, լեղի աղբիւրնե-
րուն ,
Ողջոյն ծաղկանց տո՛ւք խումբ ի խումբ որք կան
թոշնած մէջ Հովտերուն ,
Ուր Հայ սոխակն թումբէ ի թումբ կեանք կը խնդրէ
դեռ վարդերուն :
Ողջոյն տուէք Հայ Մուսաչին որ լայ գիտաս իւր
Հայրենին .
Ողջոյն տուէք իմ քնարին որ Հայկազ տանս է ողբեր-
գուն :
Ողջոյն տուէք Հայաստանի լեռալ, բեկեալ ողբինե-
րուն .
Ողջոյն տուէք գոռ և հոսիկու, առոյգահաս քաջի-
րուն :
Ողջոյն տուէք նոցա խամբած, աչրած մրկած սև
սրտերուն
Ողջոյն տուէք քրտնալաստակ ու բաղնատուտ Հա-
րուստներուն ,

Ողջոյն տուէք մերկ և նոթի տարաթափառ աղքատ-
ներուն ,
Ողջոյն տուէք իմ սիրելի քաղցրաբառառ գիտուննե-
րուն :
Ո՛հ չեմ մոռար և ողջոյնս տալ արիւն գերի գեղ-
ջուկներուն ,
Որոնց արդար վաստակն կուլ եղած է վատ քիւրդե-
րուն ,
Ողջոյն տուէք Հայկեան մանկուոյն որ մրմնջէ փառքն
անցելոյն ,
Թո՛ղ մրմնջէ, թո՛ղ հառաչէ, մինչև տեսնէ կենաց
գարուն :

houf — Ս . Հ . Մ . ՖէլէկեԱն
Եղանակ — Ն . ԹԱՇՃԵԱՆ

ԱՇԽԱՐՀ ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՞րն է աշխարհ Հայաստան .
Միթէ սա՞ է Ռուսաստան ,
Որ իր բռնութեամբ դէրել է զաշխարհ ,
Աղբին կեանք, Կրօնք յաւիտեան կորան :
Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, սխալ է ,
Մեր աշխարհն այլ է :
Ո՞րն է աշխարհ Հայաստան ,
Միթէ սա՞ է Պարսկաստան ,
Որի պատկերն է Սողոմ ու Գոմոր ,
Ընտանի կեանքն է Բաբելոնեան խմոր :
Չէ, չէ, ևն :
Ո՞րն է աշխարհ Հայաստան .
Միթէ սա՞ է Տաճկաստան .
Որ իր փառքերէն բնաւին զրկուած ,
Կանանոցի մէջ կեղանի թաղուած :
Չէ, չէ, ևն :
Ո՞րն է աշխարհ Հայաստան ,
Միթէ սա՞ է Ֆրանկիստան ,

Որ իր ճոխ զգեստիւք տիրել է աշխարհ,
Լուսաւորութեամբ առաջինն է այն:

Զէ, չէ, ևն:

Ո՞րն է աշխարհ Հաջատան,
Ահա սա է Հաջատան,
Որ իր քաջութեամբ Հաւատն ու կրօն
Պաշտպաներ է իսկ, մինչև ի ցալսօր:
Հա', Հա', Հա', Հա', ճիշդ է,
Մեր աշխարհն այս է:

ԶԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ

ՕՏԱՐ արունք ցըրուած 'ի սիրւոյ,
Ո՛վ սիրասուն իմ զաւակունքս,
Ձեր Հայրենիք տըրտում տըխուր՝
Ձեզ կը դիտէ արցունք լաչկունս:
Իմ տաճարներս սէր կը կանգնէ,
Իմ նախատինքս արիւն սըրբէ:

Ո՛հ այս քանի՛ տարի անցաւ,
Ուխտեցիք ինձ սէր, չոյս և կեանք:
Ամուլ մըրցում, Հեռ վիշտ և ցաւ,
Ա՞յս իմ բաժին, ա՞յս է ձեր ջանք:
Իմ տաճարներս սէր կը կանգնէ,
Իմ նախատինքս արիւն սըրբէ:

Հընո՛ց՝ ո՛վ դուք որ օտարին,
Փառաց պատուոյ էք խընկարկու:
Անձաւորութեան դըրձմ, սէր ազգին,
Նախնեաց քրտինք ծախած չըքոյ:
Իմ տաճարներս դուք չէք կանգնէր:
Իմ նախատինքս դուք չէք սըրբէր:

Կ'անցնին աչսպէս անթիւ օրեր,
Եւ չաւերակս նստած չերեր,
Իբրեւ աչրի Հրոյ մատնուած,
Կոյս ոչր օժիտն է անարգուած,

Գոչեմ, տաճարս ո՛վ կը կանգնէ,
Իմ նախատինքս ո՛վ կը սըրբէ:

Ե. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԱՌ ՍԵՐ ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՏԱՐ երկիր թափառած,
Անքուն աչօք կամ ցաւած,
Իմ սիրելւոյս կարօտցած:
Չըկայ մէկն որ կարեկից
Ըլլայ ցաւած իմ սըրտիս:

Ո՛վ Հայրենիք իմ սիրուն,
Ա՛հ, տոչորէ զիս անունդ,
Արդեօք պիտի չը տեսնե՞մ,
Քու լուսավազ դուարթ դէմքդ:

Հառաչանք բիւր 'ի սըրտէս,
Արտօսը Հեղուն աչերէս,
Չեն ինձ երբէք մըխիթար,
Ոսկի, պատիւ, սէր օտար:

Այլ ես անոր սիրոյն զոհ
Կ'ընեմ զամենքն սըրտով դոհ,
Միայն թէ չոյս մ'ունենամ,
Իմ սէրս տեսնել միտնդամ:

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՐԱԻՐ

Ի ԶԵ՛ն Հայե՛ր, ի սուր և ի Հրացա՛ն,
ՏաճկաՀայաստանէն կոչում է մի ձայն:
Աեռից չեռ թնդում է ահեղ Հրաման,
Թոհէք Հայեր, թոհէ՛ք դէպի Հայաստան:

Արեւելք, արեւմուտք, Հարառ ու Հիւսիս,
Դղրդաց ու թնդաց քաղցր աւետիս:
Հալկայ քաջ զաւակաց առողջ կըծքերից
Ազատութիւն Հնչեց, ամեն կողմերից:

Ումը խումը Հայեր դէպի ՏաճկաՀայաստան
— Փրկութեան աւետիս առած ի բերան —
Դիմում են ցնծութեամբ իբրեւ Հարսանիք,
Ուխտած սուրբ արիւնով փրկել Հայրենիք:

ՏաճկաՀայաստանը ոտքի է կանգնում
Արիւնածարաւ վրէժ, վրէժ է կոչում .
Արիւնով ներկուում են բոլոր դաշտերը ,
Լոկ արիւն են հոսում բոլոր գետերը :

Թշնամին զարհուրած փախուստ է գիմում ,
Անթիւ աւար ու գանձ Հալեբին թողնում .
Յաղթութիւն, չաղթութիւն գոչենք միաձայն ,
Թշնամին չաղթուած է . կեցցէ՛ Հայաստան :

ՎԱՆԱՅ ԾՈՎԱԿ

ՁԱՅՆ ՏՈՒՐ , ո՛վ ծովակ , ինչո՞ւ բուժ ես ,
Ողբակից լինել չկամի՞ս գրգռախտիս .
Շարժեցէ՛ք , զեփիւռք , ալիքը վէ՛տ—վէ՛տ ,
Խառնեցէ՛ք արտասուքս այս ջրերի հետ :

Հայաստանի մէջ անցքերին վրկաչ ,
Սկզբից մինչև աշտ խնդրեմ ինձ ասա՛ .
Մի՞թէ միշտ այգւպէս կը մնայ Հայաստան ,
Փըշալից անապատ , երբեմն բուրաստան :

Մի՞թէ միշտ այգւպէս աղբը խղճալի ,
Կը մնայ ըստրուկ օտար իշխանի ,
Մի՞թէ Աստուծոյ աթոռին մօտին
Անարժան են Հայն ու Հայի որդին :

Արդեօք գալո՞ւ է մի օր , ժամանակ՝
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ ,
Եւ ամեն կողմից պանդուխտ Հայազգիք
Դիմեն դէպ իրենց սիրուն Հայրենիք :

ՌԱՖՖԻ



Դ. ՄԱՍ

ՅԵՂԱՓՈԽԿԱՆ ԵՐԳԵՐ



ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԷՆՔ

(Բացատրութիւն Հայ Տառերու իբր
Յեղափոխական հորհրդանունի)

ԱՅԲՆ աւետիս ազատութեան ,
Բէնն է բողոք դէմ բռնութեան .
Դիմը գաղտնի գործել փաստէ ,
Դան ալ՝ «Դատին դրամով նպաստէ՛» ,
Ենն երգէ եղբայրութիւն .
Ձան թէ զէնքով ազատութիւն .
Էն էրզրումն մեզ կը վիշէ ,
Ընկերութեան Ըթը նիշ է .
Թօն թնդանօթ նշանակէ ,
Ժէին միտքն ալ ուժանակ է .
Ինին ցուցիչ իրաւունքի ,
Լիւնը լուսի և ուսմունքի ,
Խէն խորհրդով գործել խրատէ ,
Ծան ծայրահեղ ծրագիր կատէ ,
Կէն կը կռիւ կիրքն ու կեղծիք ,
Հօն հրաւիրէ Հայն Հայրենիք .
Ձեզ անձնուէրք կը ձայնէ Ձան ,
Ղատն ընենք զեկ մեր ուղղութեան ,
Ճէն ալ ճշգրիտ ճանչցնէ ճամբան ,
Մէն միութիւն մեզ կը մաղթէ ,
Յին չուսադրէ թէ Հայն չաղթէ .
Նուն նոր կեանքի է նշանակ ,
Շան չարժուծի է զըսպանակ .
Ոն որոնէ ուժ և ուսում ,
Ձան չարերուն ոչնչացում .
Պէն պարտք ճանչնալ կը պահանջէ .
Ջէն ջոջերուն ջանք ներշնչէ .

Ռան պահէ ունենն լարմար կէտին -
 Սէն աէր կըսէ սուրն ալ հետին -
 Վէլին ալ վրէժ ու վաչ վատին ,
 Տիւնը սիրտ տաչ տըկար վհատին -
 Բէն բախական օրն բարեւէ ,
 Յօն ցուցածուր ու ցեցը ցրուէ -
 Իրենն հիւժեւոց հիւսէ սիւտիանը ,
 Փիւրն՝ մեր հին փառք և նոր փրկանք -
 Բէն քարոզէ՝ «բէնն է քակտիչ» ,
 Եւն՝ «Եւրոպան չէ՛ աղատիչ» ,
 Օն չորդորէ՝ «Օգնէ Հային» -
 Ֆէն Ֆրանկը չէ՛ , աչ Ֆէտային :
 Իննսուն և ութ Փրկչի թուին
 Երգեց Լոնտոն ՊԵՐՃ Մ'չեցին :

ՖԻԳԱՅԻ ԵՐԳԸ

ԴԱՇՆԱԿՅԱԿԱՆ խումբը գընանք մենք Մասուն -
 Մեր Հայ եղբայրներ մեզ են ըստաւում -
 Անգլիանիկը քաջ իւր ընկերներով
 Կ'ուզէ պատերազմ , կ'սպասէ գարնան :
 Մօտ է գարունը , չուտով կը բացուի ,
 Հայի խօսքն է քաջ , գարուն թո՛ղ բացուի ,
 Հայերը բոլոր հոգով միացած՝
 Հրացան ուսերին մերն է «Նոր—Տարին» . . .
 Խմբապետները հոգւով են երգում ,
 Ֆիդայի ուժով գնում են առաջ -
 Առաջն է կանգնած Անգլիանիկը քաջ ,
 Գոռում է գոչում , կ'ուզէ պատերազմ :

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԴՐՕՇԱԿԸ

ԴԱՐՁԵԱԼ փայլեց Մասնոյ գլխին
 Ազատութեան Դրօշակ -
 Կեցցէ՛ Հայրենիք գոչելով ,
 Բարձրացրին աղաղակ :

Թնդաց , որոտաց ձայներից
 Ողջ աշխարհքը Հայկական ,
 Խումբ խումբ կարգած Հայ զաւակներ
 Հասնում էին օդնութեան :

Գուրգէն , Վահան , Հրայր (Դժոխք) ,
 Քաջ Անգլիանիկ ղեկավար ,
 Տալուրիկի լեռներում
 Շրջում էին անդադար :

Սարսափեցան Քիւրդ ցեղերը
 Մինչ պալատը Սուլթանին ,
 Հրամայեց չուտ կործանել
 Դիրքերը Հայուկներին :

Ահա՛ անդուծ Քիւրդ ու Տաճիկ ,
 Սարսափելի տեսարան -
 Ժամանակ է վրէժ լուծել ,
 Գոչեց ձայնը Հայկական :

Կրակ տեղաց Հայ քաջերի
 Բնակավայր դիրքերից ,
 Ալալուեցան Քիւրդ խուժաններ ,
 Ահռելի գնդակներից :

ԱՐԽԱՆԵԱՆԻ ԵՐԳԸ

ԵՍ ԵՄ ազատ Հայ պատանի ,
 Աշխարհս են այս լեռները ,
 Սուրս է միակ իմ սիրելին ,
 Եւ ընկերքս՝ պէրտանը :
 Իմ զարդերս են իմ գէնքերս ,
 Ոսկի են իմ փամփուռներս ,
 Անկողինս կանաչ մարդեր ,
 Փափուկ , մաքուր , պատուական :
 Ապաստանը՝ Ժայռ քարերը ,
 Եւ Հայելիս՝ ջինջ վտակ ,
 Բնակարանը՝ անտառները ,
 Եւ լապտերս՝ վառ լուսնակ :

Ես պարծենալ բնաւ կարող չեմ
Որեւիցէ ուսումով,
Միայն գողտրիկ երգել գիտեմ,
Եւ գէնք շարժել սուրբ սիրով:
Խմբաստեա եմ մէկ Հայ խումբի,
Ձարդարուած լազի պետտով,
Յանուն ազգի կուռն եմ ես
Քաջարի բնկերներով:

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳ

ԵՍ ՀԱՆՅՅԻ սուրս պատեանից,
Արտասուքով օծեցի,
Տըրտմաւ անուշ սիրականս,
Երբ վճիռս կարգացի:
Նա երգուեցաւ իմ սիրովս,
Ձը խնայել թիւրքերին,
Այս պայմանով աշխոյժ քաջին,
Սուր և հրացան չանձնեցին:
Աստուած սիրէք, Հայ աղջիկներ,
Եկէ՛ք, ուխտենք միասին,
Այսուհետեւ էլ չը սիրենք
Կռուից փախչող վատերին:
Խիստ զգուշիկ կերպով նայենք
Ոսկու սիրուն մեռնողին,
Համբոյրի տեղ թոյն կամենանք
Թիւրքից վրէժ հառնողին:
Ողևորուած կրկնեց քաջը,
Ո՞ւ՞ր կը սպասենք, վա՛յ մեզի.
Նա հեռացաւ մըռնչելով
Ինչպէս կորին առիւծի:
Բարկէնիկս օրրեմ ոտքովս,
Վառօք մաղեմ ձեռքովս
Ձար սուլթանին հետ գործ ունինք,
Դեռ Զէյթուն չէ ապահով:
Տիրանի պէս քաջեր ունինք,
Արժանի են մեր սիրուն

Որոնք գիտեն սիրով պահել
Կին չը չանձնել թիւրքերուն:
Կուգայ դարուն մենք կ'սկսենք,
Նոր բաղլ, նոր կեանք թուրքի հետ,
Մեր ժայռերից արին չորդենք
Ինչպէս չորդէ ձիւհան դետ:
Ես քեզ մեռնիմ Տիրան, Տիրան,
Փառք Զէյթունի սիրական.
Հազար ելնէկ ամեն Հայ կին,
Մարդ ունենայ քեզ նման:
Ձարդեց եկաւ գերիներով
Իմ պաշտօնի սիրունը. . . .
Սև մաղերովս սրբեմ փալլուն
Սուրէն կաթած արիւնը:
Սրտիս վրայ հանգստացնեմ
Ձի խանգարեմ իւր քունը.
Մեղմ համբոյրով, կեցցէ՛ կրկնեմ,
Ազատուած է Զէյթունը:

ԹՈՂ ԵՐԳԻ ԲԸԼԻՈՒԼ

ԹՈՂ ԵՐԳԻ ԲԸԼԻՈՒԼ, Մըշոյ դաշտերում,
Թո՛ղ վարդեր բացուեն Սասնոյ լեռներում,
Թո՛ղ մեր թշնամիք սարսեն, սարսափեն,
Գազան ռսոյներ ճաքեն, տըրաքուեն:

Մշու դաշտեր ծաղկունքով բացուած,
Հայու սերունդը կը պահէ Աստուած,
Ինչքան որ կ'ուզեն թշնամիք թող գան,
Սասնոյ լեռներէն ի՞նչ պիտի ստանան:

Ինչո՞ւ չը ծաղկէ ծաղիկն անխնայ,
Այդ թշնամուցը ո՛վ կը վախենայ.
Թող Հայ աղջիկը երգէ վառվռուն,
Սուր գէնքը ձեռին ջարդ տայ քիւրդերուն:

Վ Ր Է Ժ

ԹՈՂ Կորնչին Տաճիկները

Հաշատանի սուրբ Հոգից,

Իսլամական անարգ լուծը

Ձընջուի Հաշրենիքից:

Բաւական է որքան նրանք

Հաշի արիւն ծըծեցին,

Հաշի ջանքով, աշխատանքով,

Պետութիւն Հաստատեցին:

Հաշի Հացը, Հաշի փողը,

Մինչև ե՞րբ Տաճիկն ուտէ.

Իր դարչելի պիղծ բերանով

Հաշութիւնը անարգէ:

Վրիժուց կալծակ թող բորբոքուի

Հաշ առիւծների սրտում,

Թաղենք թշնամուցն գլուխներ

Դիւցազների երկրում:

Սրով սրի դէմ մարտնչիլ

Արեան դէմ արիւն Հանել,

Իւր մէկ Հաւը դողացողին

Ամբողջ տունը թալանել:

Աչքերու տեղ աչքեր Հանել

Ատածի տեղ ատամներ,

Միակ Հարուածի փոխարէն

Ամբողջ ազգը կոտորել:

Այս անօրէն՝ անխիղճ դարում

Այլոց վրայ չոյս գնել,

Նշանակում է չաւիտեան

Կեանքիցը Հրաժարուել:

Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ

ԻԲԻՆԻ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,

Թնդացնում ես երկինք գետին տենչալաւ:

Սուրբ անունդ պիտի չիչուի դարէ դար,

Հսկայ լեռինք քեզ ապաստան, Անդրանիկ:

Քիւրդ ու տաճիկ երբ լսեն քո անունը,

Օձերու պէս պիտի սողան իրենց բռնը.

Երակներիդ ազնիւ քաջի արիւնը

Ձը ցածքէ մինչև չաւիտեան, Անդրանիկ:

Հաշոց կուսանք, դափնեալ պտակ թո՛ղ Հիւսեն,

Քնքոյշ ձեռամբ քո ճակատը պսակեն.

Գոհարներով անվախ կուծքդ զարդարեն,

Կեցցես ջուէտ դու անսասան, Անդրանիկ:

Հաշատանի սոխակները քեզ Համար,

Թող դաշլալեն գիշեր ցորեկ անդադար.

Անշաղթ մնառ դու քաջ կուռի սիրահար,

Հաշրենիքի տէր ու պաշտպան, Անդրանիկ:

ՍՍՍՈՒՆ

ԻՍԼԱՄԱԿԱՆ դոռ վաշտերը կատաղի

Պաշարեցին մեր շեռները սոսկալի.

Մի վհատիւր քաջ Սասուն,

Քեզ Համար չէ նորութիւն.

Մեր պապերից սովորել ենք

Մեռնիլ տղամարդի պէս,

Ձոր մեզ թողին չիշատակ:

Շէնիկ, Սէմալ պաշարուած են քիւրդերով,

Տալուրիկի անցքն է փակուած թիւրքերով.

Ձքեզ տեսնեմ քաջ Մուրատ,

Սուրդ շարժիւր անվհատ.

Մեր Հեռաւոր եղբայրներ

Չեն կենար միշտ անտարբեր

Շուտով կըզան օգնութեան:

Թնդանթի դէմ դրել ենք քաջ սրտով,

Սովի գիմադրել ենք կաթով, բանջարով,

Ի սէր Աստուծոյ դժուար է

Հպատակիլ իսլամին.

Լաւ է մեռնիլ առանց Հաց,

Քան լանձնուիլ վատ թուրքին

Անդուր և անառտուածին:

Հաշ աղջիկներ, առէք վառօդ ու կապար,

Լցէք դատարկ փամփուշտները չարաչար.

Իսկ զուր կանայք անվհատ,
Առէք սուր և հրացան,
Խրախուսեցէք Հայ քաջեր,
Ազատենք մեր Հայրենիք
Ձեր կանայցի արխնով:

ԽԱՆԻ ԵՐԳԸ

ԼՈՒՍԻՆ չկար մութ գիշեր էր,
Մի խումբ կերթար արագ արագ,
Տեսանք որ քաջ Խանի խումբն էր,
Ձինուած էին բոլոր նրանք:
Կեանքերը ազդին նուիրած,
Կտրիճ Խանի քաջ անունը:
Գնում էին տաճկաց սաՀման.
Թըռչում էին որպէս կրակ:

Հրացանները ուսերին՝
Դրօշակը պարզել էին,
Գնում էին ուրախ զուարթ,
Ազատութիւն երգում էին:
Մութ անտառից անցնում էին.
Ամեն մէկը առիւծ էին.
Նժուղ ձիանց վրայ նստած,
Մերկ սըրերը քաշել էին:

Երբ քաջ Խանը ելաւ Բասեն,
Թնդանօղներ արձակեցին,
Հայ քաջերի մօտիններից
Գնդակները դողդողացին:
Ահեղ կռիւն ահա սկսեց,
Երկու անշաղթ թշնամեաց մէջ.
Թուրք զօրքերին դիմազրեցին.
Փառաց պսակ վաստակեցին:

Երբ քաջ Խանը հրահանգ կուտար,
Իւր Հայ առիւծները քաջ,
Մտան թշնամուն խիտ չարքեր,
Կոտորեցին ձախն ու աջ:
Երբ քաջ Խանը «ուռա՛» գոռաց,
Թշնամիքը մոլորուեցան,

Հազարաւոր տաճիկների
Գլուխները ջախջախուեցան:
Ձերմ եռանդով կուռւմ էին,
Սրտերումը կար շատ պահանջ,
Փախչում էին տաճկաց զօրքեր,
Ձէին կարող կանգնել առաջ:
Կեցցէ՛ Խանը իւր խմբովը,
Սարսափ թողեց Բասենումը,
Երեք օր ու գիշեր կռուեց,
Աչքերիցը քունը կտրեց:
Հալաստանի Հողի վրայ,
Դաջը թափեց իւր արիւնը,
Յիշենք Հայեր, չը մոռանանք,
Կտրիճ Խանն առաջ ինկած:

ՍԻՓԱՆԱՅ ԿՈՒԻ

ԼՕ՛, ԼՕ՛, ԼՕ՛, Սիփանայ սէգ սարի վրայ,
Կտրիճներ շտապով դալիւ են միանում.
Այն տեղ անվախ որդիք, անշաղթ Հսկայ լերան,
Ձէնք ու զրահի են ընթանում:

Ի՞նչու վառուում են, զինուում,
Սանձակոճ ձի հեծնում անհամբեր.
Արիւնը նոցա բորբոք սրտի մէջ եռում,
Փայլում, անցնում անհամբեր:
Դանց Սիփանայ պինդ քամին.
Սըլանում է դէպի ցած, դաշտի մէջ է թշնամին.
Նա վառում է նորանց վրէժ անմոռաց.
Ահեղ կռուի մէջ վատ թշնամին:

Հատու սուսեր է Հանել, ցեղապետին սպաննել,
Նա վարում է քաջերին.
Բոլոր ցեղն աչժմ ոտքի կանգնած,
Թշնամու ընդդէմ, մահու մարտի է կանչում:
Արեան մեծ վրէժ է թշնամուց պահանջում.
Ու թշնամին պարտուած թողնում փախչում սարէսար
Յետ է ձըգում մեծ աւար:
Արիւն թափեցին արիւնի փոխան,
Արիւն խմեցին ծարաւի սուսեր.

Նորան չափեցած դրեցին պատեան,
Ենուն էն Հիմա սէդ Սիփանն ի վեր:
Սէդ Սիփանայ կանաչ դլխին,
Յաղթող ցեղն անում է մեծ խնդում,
Եւ ամպերի բարձրութեան միջից,
Հսկայ Սիփանն է երևում.
Էլ չի գայ մեզ մօտ թշնամին,
Սուր տեսաւ մեր պողովատին:

ՀԱՅԻ ԽԱՂԱՂ ՈՐԴԻՈՑ

ԽԱՂԱՂ դաշտի որդիք, լեռները երնենք,
Արօր, գութան մոռնանք, Հըրացան առնենք,
Ճընշուած մեր բողոքը ցացունենք գէնքերով,
Եւ մեր արդար դատը վարենք արիւնով:

Մեր կեանք, մեր մա՛հ թող լինի ազատ,
Ճընշուած Հայու որդիք հարազատ:

Ազատութիւն փնտռենք և ազատ կռուենք,
Քան ամեն վաշրկեան կենդանի մեռնենք,
Հինգ դարով մեռեալ ստրուկ Հայ ազգը
Աչսպէս պիտ' գտնէ իր ազատ կեանքը:

Մեր կեանք, մեր մա՛հ և ալլին:

Ստրկութեան շղթան խուլ շառաչում է,
Ազատութեան ճնշուած ձայնը գոչում է.
Ազատ լեռներ լինին թող մեր ապաստան,
Եւ ընդարձակ ձորեր ազատ գերեզման:

Մեր կեանք, մեր մա՛հ և ալլին:

Յառաջ դիմենք անվախ, զարնենք անգութին,
Փրկենք Հայ գիւղացւոց, Հանենք ոխ ու քէն,
Իմաց տանք փաշալին Սօգրաթ բռնաւոր,
Ծագեց Հայ հերոսաց ազատ, պաշտօն օր:

Մեր կեանք, մեր մա՛հ և ալլին:

Յըրուած խուճրեր Հասնին Զէջթուն և ի Վան
Շտապենք, միանանք, կազմենք գունդ Հայկեան,
Հայի ազատութեան պարզենք դըրօջակ.
Կեանքը մա՛հով գնենք, ալլէ է մեր պըսակ:

Մեր կեանք, մեր մա՛հ և ալլին:

ԽԱՆԱՍՈՐԱՅ ԱՐՇԱԽԱՆՔԻ ԱՌԹԻԻ

ԿԱՐԿՈՒՏ տեղաց Խանասօրայ դաշտումը,
Ֆէտալներ դաշնակցական, վրէժխնդիր գոռում են.
Սոսկաց Քիւբտը, լեղապատառ Մաղրիկցին,
Զէր սպասում խաղառ ջնջուիլ Ֆէտալի գնդակից:

«Եամա՛ն Աստուած Ֆէտան եկաւ ո՞ւր փախչիմ»,
Ասաց որդուն կուրծքին սեղմած լեղապատառ քրդուհին:
«Մի վախենար, Հանգիստ եղիր, բաջի ջան,
Կանանց երբէք ձեռք տալու չէ վրէժառու քաջ Ֆէտան»:

Մի ժամուայ մէջ Մաղրիկ ցեղը ջնջուեցաւ,
Խանասօրայ կանաչ դաշտը կարմիր արեամբ ներկուեցաւ:
Հայեր չլչեցէք նուիրական աչս օրը.
Յուլիս ամսոյ քսանհինգին կատարեցէք մեր տօնը:

ԱՌ ԿՈՎԿԱՍԻ ՔԱԶԵՐ

ԿՈՎԿԱՍԻ քաջե՛ր, խըմբեր կազմեցէ՛ք,
Քաջ Անդրանիկին օգնութեան հասէք.
Առած իր շուրջը զինուորներ ութսուն՝
Մաքրէ ճանապարհ նա դէպի Սասուն.
Սուլթանն սարսափած, ճարը կըտրուած՝
Հազար ոսկի է գըլխին խոստացած:

Հայ պատանիներ՝, շուտով շարժուեցէ՛ք,
Երբէք մի՛ վախէք, սուրեր շարժեցէ՛ք.
Հասել է ժամը սուրբ ազատութեան,
Սպասելու ժամ չէ, առաջ քաջեցէ՛ք.
Սիրենք միութիւն, Հանենք վատութիւն,
Զեռք բերենք, Հայե՛ր, մեր անկախութիւն:

Օտար Հոդի մէջ էլ չը մնանք, Հայե՛ր
Հերիք է Հային աչս պանդըխտութիւն,
Թո՛ղ չը ծաղրէ մեզ անգութ թշնամին,
Մինչև մենք Հասնենք մեր նպատակին.
Սիրենք միութիւն, Հանենք վատութիւն,
Զեռք բերենք, Հայե՛ր, մեր անկախութիւն:

Բաջ Անդրանիկը անմախ, սուր առած,
Հաջատան գնալ վաղուց էր ուխտած.
Այլ ու ձախ ջարդել Տաճկաց զինուորին,
Քիւրդերից մատաղ բերել վանքերին:
Դէ՛հ, Շաքիր փաշայ, մտածիր Հնար,
Հազար ոսկիքով անես գլխիդ ձար:

Կովկասի քաջէ՛ր, առիւծի ճուտեր,
Սրբէ՛ք սուսերներ, առէ՛ք Հրացաններ,
Հաջ օրիորդներ՝, պրճնեալ տիկիներ,
Ծախէ՛ք ձեր զարդեր, առէ՛ք զընդակներ,
Հարուստք, ձեր ոսկին տուէ՛ք մեր աղգին,
Սերունդներ չիչենք ձեր անունն անգին:

Դէ՛հ, Հաջ եղբայրներ՝, հեծէ՛ք ձեր ձիեր,
Բաց թողէ՛ք սանձեր, անցէ՛ք սար ու ձոր,
Ահա՛ կռուի դաշտ, ահա՛ թշնամին,
Մեր ձաջն թող Հնչէ բռնութեան անհաշտ —
Ասաց քաջ Մուրատ մեզ լինի խրատ,
Կամ կռուել ազատ, կամ մահ անարատ:

ԵՐԳ ՆՈՐ ԱՒԱՐԱՅՐԻ

ԿՈՒՈՒԵՑԷ՛Ք տղերք, կռուեցէ՛ք քաջ քաջ
Անվեհեր կանգնած թշնամուն առաջ.
Յանկալի է մեզ միշտ աղնիւ մաշը,
Հեռու մեզանից ոտխին աշը,
Յառաջ խիզախներ իբրեւ նահատակ,
Իզուր թող չանցնի մեզնից մի զնդակ:

Մեզ տօնախմբեն մեր նախնի քաջեր,
Մեզի կ'սպասեն մեր հէզ եղբայրներ,
Զի ծնանք ազատ, գէթ մեռնինք ազատ,
Մեր սիրտն ու հոգին պաշենք անարատ.

Այս անդամին ալ ցոյց տանք թշնամուն,
Թէ ինչ է Հայու ուժն ու քաջութիւն:

Ահա քիւրդերը փախան սարսափած
Ահա զիակներ արեամբ շաղախւած.
Կրակ տեղացէ՛ք, անդադար կրա՛կ,
Փառք ժողովրդին, առատ է զնդակ.
Օ՛ն, կռուենք, տղերք, մինչև շունչ վերջին.
Արժանի լինենք փառաց պոսակին:

Մեռնինք շուռաշով, մերն է ապագան,
Մեռնինք, բաց կեցցէ՛ք, կեցցէ՛ Հաջատան.
Այսպէս յորդորեց ու ընկաւ արին,
Թողլով մեզ անուն լիշատակ բարին,
Ահեղ կռուի մէջ մի փոքրիկ Հերոս,
Անմոռանալի կարիճ Մարտիրոս:

Մ. Ե.

ԱՆՎԱՆ ՀԱՅՐ

ՀԱՅՐ բանտէն չի վախնար, Արարատ դաշտին վրայ,
Հաջը մահէն չի վախնար. Հալի քաջ խումբ պատրաստենք.
Միշտ կ'ուզէ պատերազմիլ, Զէնք, սուր ձեռքերնիս առած,
Հաջկական հոգին Համար: Կռուինք վասն Հայրենեաց:

Գացէ՛ք, ըսէ՛ք վատ Թուրքին, Արի՛ք, Հաջկական քաջեր,
Թող հեռանայ մեր հոգէն. Առէ՛ք մեզ հետ ձեր սուրեր.
Հաջը վարժութիւն ունի, Շուտով վաղեցէ՛ք Կարին,
Պատերազմը մօտեցաւ: Որ չաղթենք վատ Թուրք ցեղին

Հինգ հարիւր տարւան մեռեալն Արիւնձաքաւ Հալեր,
Այսօր ոտքի կանգնեցաւ. Զնջեցէ՛ք Կարնոյ զօրքեր.
Գացէ՛ք, ըսէ՛ք վատ Թուրքին, Հաջուն վերջին ժամն է.
Դատաստանը վերջացաւ: Պէտք է թուրքին խնայել:

Հերիք աշխարհ տառապանք, Ո՛հ, Հաջն ա՛լ ազատուած է,
Հերիք աշխարհ գերութիւն. Բանդի առիւծ կտրած է.
Փչրենք մեր շղթաները, Պէտք է որ ջնջենք Թուրքեր,
Շուտով երթանք Հաջատան: Վերականգնենք մեր Հայեր:

ՀՐԱԽԻՐ ԱՌ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐ, չուտ ըշտապեցէ՛ք,
Րոպէն շատ թանկ է, առաջ քալեցէ՛ք.
Օտարն Հայերի կասէ վախկոտ են,
Քաջութեան կարմիր դրօշը պարզեցէ՛ք:
Մի՞թէ մենք Վարդանի ցեղիցը չենք.
Մէկս Հազարի դէմ կը կռուենք.
Մի ժամանակ մենք չղթացուած էինք,
Այժմ ազատ ենք և ունինք շատ դէնք:
Օգնութեան Հասան քաջ Խանն ու Մուրադ,
Ճիշդ Հայու գաւակ — ծնունդ Հարազատ.
Մոկացի Գրիգոր և Երկու Արշակ՝
Գնդակ էին թափում կարկուտից արագ:
Քաջ Թումանեանցը, որսորդ Գէորգը,
Կազմել պատրաստել են իրանց խմբերը,
Ղաջնակցութեան դրօշակի ահից,
Սարսափահար փախչում էին Քրդերը:

ԵՐԳ ՆԵՎՐՈՒՋԻ

ՀԱՅՐԵՆԵԱՅ սիրոյ Համար
Խմբեր պատրաստեր են քաջ,
Հրացանները ուսերին,
Փամփուշտները աջ ու ձախ:
Հընազանդ կարգով շարուած,
Իրանք առիւծի պէս քաջ.
Խմբապետը Հրահանգ տուեց
Գնալ դէպի չառաջ չառաջ:
Ոսկեզօծ բաշլուղներով,
Լազի շորեր թանկագին,
Գընում էին դէպի Սասուն
Օգնելու Անդրանիկին:
Հայ քաջերը դիրք մտան,
Թշնամուն պաշարեցին,
«Ամեն կողմից կրակ տուէ՛ք.
Կոտորեցէ՛ք», — գոռացին:

Շաման Եկաւ ջան Ֆիդան,
Սարսափ տիրեց բանակին,
Փախչում էին դէպի լեռներ,
Վախկոտները խրմբովին:
Խմբապետը Նէվրուզն էր,
Օգնականը խիստ քաջ էր,
Խաչօն չառաջ կանգնած էր,
Պատերազմի կը սպասէր:
Խաւարից լոյս ծագեցաւ,
Երևում էին չոյսեր.
Ղաջնակցութեան ցանած սերմեր
Տալիս էին նոր - նոր բոյսեր:
Մեր ապագայ սերունդից,
Հսպասում ենք մեծ չոյսեր.
Կերդենք միշտ ազատ կրծքից
Խրախուսալից վեհ երգեր:

ԱՌ ՖԻԴԱ

ՉԱՅՆ տուր, ո՛վ Ֆիդա, ինչո՞ւ ևս տրտում,
Լուռ ու մունջ նստած երկար մտածում.
Աւա՛ղ երկար մտածում,
Տխուր երկար մտածում:
Շարժեցէ՛ք շուտով սուսեր շողշողուն,
Թափեցէ՛ք կրակ թշնամեաց զլխուն.
Գազան թշնամեաց զլխուն,
Դաժան թշնամեաց զլխուն:
Պարզեցէ՛ք դրօշ վեհ Ղաջնակցութեան,
Լինի առաջնորդ մեր ազատութեան.
Միրուն մեր ազատութեան,
Անուշ մեր ազատութեան.
Քանի աչսպէս է ազգը խղճալի,
Ձինեալ կը մնան ամբողջ Ֆիդայիք:
Միրուն ամբողջ Ֆիդայիք,
Կտրիճ ամբողջ Ֆիդայիք:

Շտապենք, Ֆիդայք, խմբուենք մի տեղ,
Դաշնակցութեան դրօշը ծածանուի աչնտեղ -

Թող միշտ ծածանի աչնտեղ,
Մերուն ծածանի աչնտեղ:

Թափենք մեր արիւն իբրև ախոյեան,
Լինինք առաջնորդ մեր ազատութեան:

Մերուն մեր ազատութեան,
Անուշ մեր ազատութեան:

Եկէ՛ք միանանք, ո՛վ քաջ Հայդուկներ,
Վրէժ են դոչում մեր նաՀատակներ:

Աւա՛ղ, մեր նաՀատակներ,
Հերոս մեր նաՀատակներ:

Մ'օտին Հրացանը ձեռքերնիս բռնած՝
Թունաւոր փամփուշտ կուրծքերնիս ձգած -

Հապա կուրծքերնիս ձգած,
Մերուն կուրծքերնիս ձգած:

Հաջ դինուոր եմ ես, անձնագոՀ Ֆիդայ,
Դժբաղդ Հայրենեացս անցեալին տեղեակ -

Դժբաղդ անցեալին տեղեակ,
Թշուառ անցեալին տեղեակ:

Մենք ենք սերունդը բնիկ վեՀ Հայկեան,
Տոհմէն դիւցադանց, որդիք Թորդոմեան -

Մերուն որդիք Թորդոմեան,
Կտրիճ որդիք Թորդոմեան:

ԱՆԿԵՂԾ ԶԻՆԻՈՐՆԵՐ

ՄԵՆՔ անկեղծ գինուոր ենք առանց իվիճակ,
Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ -
Պարսկաստանի խորքից եկել է նամակ,
Գնում ենք բարով, կ'ուշանանք տարով,
Արիւն, սուր ու Հուր պատերազմի դաշտ կոսրասեն մեզի:

Դուժմանը մեզ տուեց «Ջան Ֆիդայ» անուն,
Այդ անուան Համաձայն տեսաւ զօրութիւն -
Մենք չենք ուզեր ազատ կամքի բռնութիւն,

Ուխտել ենք կռուել, այդ սիրով մեռնել,
Համոզուած ենք որ ասով միայն կայ Հայոց փրկութիւն:

Ստամբուլը պիտի լինի արեան ծով,
Ամեն կողմից կռիւ կըսկսի շուտով -
Կոտորենք Բաշկադաշ, անցնենք Հեշտ կերպով,
Աջից Վարդանը, ձախից Իշխանը,
Գրաւենք Աղբաղ, տարածենք սարսափ,
Փառք Դաշնակցութեան:

Բաշկադաշ դաւառում, աչն պատերազմին,
Աւելի մեծ սարսափ տիրեց թշնամուին -
Դաջ Զէյթունը չաղթեց վատ, Հար դադանին,
Կեցե՛ք Զէյթունը, խրոխտ Սասունը, կուսակցութիւնը,
Բաղդաւոր օրեր, պարծանք Հայերուն:

Հ Ն Զ Ա Կ

Հ Լուաւոր երկիր նըստած դու նրժգե Հ
Հայրենեաց բաղդին մօտուստ ես տեղեակ -
Դարող քաջարի նոր սկզբանց վեՀ,
Յեղափոխութեան ձայնատու Հնչակ:

Ն որ դադարիարի քո ցանած սերմա Ն
Ազնիւ պտուղներ Հասուննան արադ -
Կարին և Պօլիս որւսման նման՝
Անդրանիկ շարժմունք ծնան քեւ, Հնչակ:

Զ ար բըռնակալը, Հայոց կեղեքի Զ
Վախէն պաՀուեցաւ ոսկէ դաՀին տակ,
Խուլ Եւրոպայի թրնդաց մէն դաՀիւծ,
Հաջը ցնցուեցաւ, կարմրեցաւ Հնչակ:

Ա չսօր քո սերմանց նոր պըտուղը աՀ Ա
Հասած կարմըրին՝ արեան նըմանակ -
Կենաց և մաՀու սուրբ ժամ մերձենալ,
Կարմիր Հրաւերիդ ակն ունինք, Հնչակ:

Կ ոչնակդ Հընչեցո՛ւր, Հընչեցո՛ւր արեւ Կ
Թո՛ղ Հայք ոտք ելնեն - ծաղէ մինչև ծաղ -
Փըշըրի՛ ժանտ չըղթան, ծաղի՛ նոր արեղ,
«Աղա՛տ ենք», Հնչէ՛, ոսկեղօծ Հնչակ:

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԿՈՌԻՆԵՆՔ

ՄԵՆՔ պէտք է կուուենք և ոչ լաց լինենք,
Ազգի կորուստը գէնքով չեա խլենք,
Այսքան դար լացինք, ո՞վ է լսողը,
Մեզ Բ՞նչ չա՛հ բերեց արցունքի ծովը:

Էլ չը գանգատուենք և ոչ լաց լինենք,
Կրակուած սրտով մեր դործը վարենք.
Անվեհեր քաջին աչք է սրտականում —
Միշտ ազատ մեռնել կուուի լացն դաշտում:

Մոլի և երկչոտ թշնամին թող լաց,
Երբ Հա՛ջ քաջի գէ՛մ կուուի դուրս կուգայ.
Մենք վախեցող չենք սովից, տանջանքից,
Ոչ էլ մահառիթ դաժան գնդակից:

Անէ՛ծք աչն հօրը՝ որ ազգի սիրուն
Ձի մղում որդուն թափելու արիւն.
Ամօ՛թ աչն Հալին և բիւր նախատինք,
Որ ազգի սիրուն չի դործում բարիք:

ԱՐԽԱՆԵԱՆԻ ԵՐԳԸ

ՄԻՈՒԹԵԱՆ ԹԵՐՈՒԹԻՆԸ,
Հանեցին մեզ լեռները.
Վատ թիւրքին գէ՛մ կուուելու,
Հաչրենիքը փրկելու:

Առաւօտ արշարուցին,
Չորս կողմերնիս պատեցին.
Ամբողջ չորս օր չորս գիշեր,
Չորս հարիւր թշնամիներ:

Թուով հինգ ընկեր էինք,
Քարաչրներու մէջ էինք.
Երբէք չէինք լանձնուեր,
Աւա՛ղ, անօթի էինք:

Մարթինիս տուր, մալրիկս,
Մուրս տուր, եղբայրիկս.
Թէ որ ազգիս չի գոհուիմ,
Հապա ինչո՞ւ ծնած եմ:

Խորէն, սուրդ քաշեցիր,
Վրէժ առնել փորձեցիր.
Երբոր գնդակը եկիր,
Հաչատտանը չիչեցիր:
Հալրենիքս է Արմուտան,
Մականունս է Արխանեան.
Երբոր բանաէն աղատուիմ
Դարձեալ խուճբեր պիտ' կազմեմ:

ՀՐԱԽԵՐ ՍՆՐՈՒ ԱՂԲԻԻՐԻ

ՈՎ ՈՐ քաջ է, Բ՞նչ կը սպասէ,
Արդէն ժամանակն է թող դայ,
Մահ պատերազմի օրհաս է,
Ով որ անվախ քաջ է, թող դայ:

Կամ կուուելով մեռնենք վերջանանք,
Կամ գէնքով փրկուիմք ստանանք.
Կուուելով փրկենք Հաչատտան
Ազնիւ մտածողը թող դայ:

Մերթ Սասնոյ մէջ, մերթ Սիփան,
Միշտ կուի մղենք անխափան,
Կուուելով փրկենք Հաչատտան
Այս չոչս ունեցողը թող դայ:

Այս հինգ դար է՝ մեզ կը սպանեն,
Բռնի մեզ կրօնքէ կը հանեն,
Մեր կին աղջիկներ կը տանեն,
Պատիւ ունեցողը թող դայ:

Քարէ հողի երկաթէ մարդ
Հալածէ թող Քիւրդը նամարտ,
Անվախ քարի տակ չոքողը,
Անխալ խրվողը թող դայ:

Վերջապէս մենք ունինք կուի,
Ձէնքով մաքրենք պիտ մեր Հաչիւ,
Մեր հաչրենեաց փառքն ու պատիւ
Սերորին սիրողը թող դայ:

ՍԵՐԵՄՃԱՆԵԱՆԻ ԵՐԳԸ

ՎԵՐՔԵՐՈՎ լի ջան Թխտայ եմ .

Թափառական տունն չունենեմ .

Եարիս փոխան գէնքս եմ գրկել ,

Մի տեղ Հանգիստ քունն չունենեմ :

Արիւնոտ երկիր , սուգ ու չիւան ,

Ինձ դուրս կանչեց փակ կեանքից .

Տանջուած Հայրենիքի սէրը

Ձը վախեցուց ինձ վտանգից :

Ես կոչուեցայ ջան Թխտայի ,

Դարձայ զինուոր զազափարի .

Թո՛ղ իմ Թափած արեան չիթեր

Օրինակ դառնան Հայ զինուորին :

Մակեդոնիա իմ եղբայրս

Իմ խաչովս պսակուեց .

Եղբայրական սիրուն գէնքով

Դադան խուժանն խորտակուեց :

Ահա՛ Հանգիստ Հող կը մտնեմ ,

Յոչսս դո՛ւք էք , ընկերներ՛ր ,

Շարունակէ՛ք մեր սուրբ գործը ,

Դաշնակցութեան վեհ քաջեր :

Կախաղանից երբոր քամին

Ինձ տարբերեց ճոճալէն ,

Յիշէք Պետրոս Սերեմճեանին ,

Թշնամիէն վրէժ գոռալէն :

ՏԱԼԻՈՐԻԿՑԻ ԿՏՐԻՃԸ

ՏԱԼԻՈՐԻԿՑԻ կըտրիճ եմ խորթ ,

Քաղքեցու պէս չեմ թուլամորթ .

Սարի գաւակ , քարի որդի ,

Հին քաջ Հայոց եմ մընացորդ :

Տալուրիկի գաւակ եմ քաջ-

Ձեմ խոնարհիւր Թուրքին առաջ ,

Քարուտ լերանց ես ազատ լաճ ,

Ձեմ տեսեր ո՛չ արօր ո՛չ մաճ :

Յորդորակ

Հայ աղբըրտիք , վա՛յ աղբըրտիք ,

Տալուրիկի գաւակ եմ քաջ .

Ազատութեան սիրուն Համար

Եկէք դէպ ինձ , չառա՛ջ , չառա՛ջ :

Թող այլք բն չկին Հովիտ ու դաշտ ,

Վատ անգութին Հետ լինին Հաշտ .

Ես պիտ մնամ միշտ աննուաճ ,

Թէեւ վրաս դայ քսան վաշտ :

Իսկի չքաջեմ բանի մ՝ կարօտ ,

Քանի ունիմ գնդակ վառօղ .

Ազատ ազրիմ , մեռնիմ ազատ ,

Սասնոյ որդի մ՛եմ Հարազատ :

Հա՛յ աղբըրտիք , Լեն . :

Յորենի տեղ կ'ուտեմ կորեկ ,

Երկաթ ծեծեմ գիշեր ցորեկ .

Շինեմ փէտատ , խօփ , խաչերկաթ ,

Ծանր է դատուճս , բայց եմ ազատ :

Հարստութիւն , ուսում , Հանճար-

Պատիւ և փառք չեն ինձ Համար .

Բա՛ւ է ունիմ ջէք , թուր , խանջար ,

Բա՛ւ չի խրոխտար վրաս օտար :

Հա՛յ աղբըրտիք , Լեն . :

Տալուրիկն է սե սե քարեր ,

Խոր մութ ծործորք , սեպ սեպ քարեր .

Վերե ջուխտակ ծեր Մարաթուն ,

Հոգիս մատա՛ղ մեր Մարաթուն* :

Մեղնով պարծի աչօր Սասուն ,

Մենք ենք խրախոյս Հայոց նըկուն .

Տալուրիկ սար , Ժեռուտ Զէթուն

Տա՛ն իրարու ազա՛տ ողջուն :

Հա՛յ աղբըրտիք , Լեն . :

(Սոյն երգը կրնատուած է)

Մ . ՏԱՄԱՏԵԱՆ

*Մարուքէի ձգնաւորին

ԿՈԶ ԱՌ ՀԱՅԵՐ

ՏՈՒՐ ԶԵՌԻ, եղբայր, ժամ է զարթելու
 ժամ է ժամ լառաջ ոտքի ելնելու.
 Մօտ է վախճանին Հայերու օրհաս,
 Լինել չլինել մեղինից է կախուած:

ՏՈՒՐ ձեռք, եղբայր, հերիք համբերենք
 Հերիք օգնութիւն ուրիշից հացենք,
 Մենք ենք տանջուողը, մենք չարչարուողը
 Մենք պիտի լինինք մեղի փրկողը:

Մեր վեհ Հայրենիք դարերով ճնշուած
 Դարեր շատուշատ մեր արեամբ ներկուած
 Պահանջէ մեղինից արիւնոյ՜ ներկել
 Թշնամու արեամբ լեռներ ու դաշտեր:

Շտապիր, եղբայր. ա՛ռ, ահա քեզ գէնք
 Սրբանով միայն փրկուելու ենք մենք,
 Այս է գործածում մեր գէ՛մ թշնամին,
 Այս պիտի լինի սլաշտպան մեր անձին:

Շտապիր, եղբայր, ի դաշտ պատերազմ
 Սպասում է քեզ թշնամին մեր կազմ,
 Աշխարհի սկզբից ամբողջ մարդկութիւն
 Այն տեղ է գտել իւր ազատութիւն:

Այն տեղ է քո կեանք, այն տեղ է քո մահ,
 Ելի՛ր ընդ առաջ, ելի՛ր դու անաչ,
 Արդարութիւն է գործին նշանակ,
 Այն տեղ կը կանգնէ նա իւր չաղթանակ:

Շտապիր, քանի դեռ է՛ անաղան
 Քեզ կը հետեի ամբողջ Հայաստան,
 Ազատութիւն է գործին գրաւական
 Այն տեղ կը ստանաս պսակ պատուական:

ԶԷՅԹՈՒՆ

ՔԱՆԻ թըմրինք, բաւ է եղբարք,
 Շրջենք աչեր աջ ու ահեակ.
 Շատ ստրուկներ եղան ազատ,
 Միայն մե՞նք մնանք հչու հնազանդ:

Զէյթունցիներ, մեր դբօսանքն
 Է պատերազմ և արշաւանք.
 Սուր, թուր, դընդակ և հրացան
 Մեր խաղաղիքն են չափտեան:

Կեցցէ՛ Զէյթուն, ապրի՛ Զէյթուն,
 Թող չտեսնէ ըստրկութիւն.
 Քանի ունի մեզ պէս որդիք,
 Ապրի՛ Զէյթուն, կեցցէ՛ Զէյթուն:

ԶԷՅԹՈՒՆ ՅԻՔ

ԶԻՆՈՒԱԾ, պատրաստուած Զէյթունի քաջեր,
 Սուրբ ազատութեան վկայք անվեհեր.
 Վրէժով լցուած առիւծի նման
 Քաջ-քաջ կուռւմ են Թուրքի դէմ դաժան:

Կեցցէ՛ ք դուք միշտ, Զէյթունցիք,
 Որ պիտ՝ փրկէք Հայրենիք.
 Դուք Հայաստանի պարծանք,
 Մեր կեանքիցն էլ ձեզ կտանք:

Մանուկն օրօրոցում հանդիստ է՛ր պառկած,
 Քնդորում էր մօրից՝ «քաղուկներս բա՛ց» . . .
 «Ես չուզեմ մնալ այս օրօրոցում,

Մինչ իմ եղբայրներ լաց կոծ են անում» . . .

Կեցցէ՛ ք դուք միշտ, Զէյթունցիք,
 Որ պիտ՝ փրկէք . . . և այլն (կրկնել):

Ի՞նչ ես կաշկանդել, քանդի՛ր քնձ, մայրիկ,
 Ես կ'ուզեմ կուռել Թուրքի դէմ ճարպիկ,

Տուր ինձ հրացան և մի սուր դաշոյն,

Ես կ'ուզեմ ծծել կաթի տեղ արիւն:

Կեցցէ՛ ք դուք, միշտ Զէյթունցիք, և այլն:

ԵՐԳ ՇՂԹԱՅԱԿԱՊ ՀԱՅՈՅ

Ի ԶՈՒԻՐ ԵՆ Ի զՈՒՐ, ԲՐՈՆԱՆՈՐ,
Ըսպառնայիք քո ամենայն.
Ո՛հ, քո չղթանք չեն զօրաւոր
Յընկճել զոգիս մեր Հաշկական:

Ըզմարմին, միայն զաշտ մարմին
Կարես գերել՝ քեզ ի նախնաւ.
Սակաշն ոգիք մեր երկնային՝
Սիրտք Հաշկազանց են միշտ ազա՛տ:

Ազա՛տ են, ազատ մեր լեզուք,
Մաղթել ըզչանթս Արդարութեան
Ի գլուխ ձեր, ո՛վ արիւնարբուք՝
Որ աւերէք ըզՀաշատան:

Ի դրժո՛խս անկցին թըշնամիք,
Անհետացին մինչ չաւիտեան
Կեցցե՛ն Արքայ և Հայրենիք,
Կեցցէ անմա՛հ մերս Հաշատան:
Խ. Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ (Խ. Ե. Ն.)

ՄԵՌԱՍ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

ԼՈՒՌ գիշերին մըտքիս դիմաց
Շա՛տ ստուերներ ժողովուան
Ընկերներս՝ մեռա՛ծ, կորա՛ծ,
Հողուս խորքով անց կացան:
Նըրանց աչքերն՝ բո՛ց ու վըրէ՛ծ
Սրտիս խորը նայեցին.
Սիրտըս քաց էր խոր վէրքի պէս,
Նըրանք աշտեղ սուզուեցին:
Անհաւասար, գոռ կռուի մէջ
Ընկան, իմ վե՛հ ընկերներ,
Ա՛խ, ձեր չիրիծն իմ սըրտումն է,
Իմ վեհ, իմ սո՛ւրբ ընկերներ . . .

ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

Ե. ՄԱՍ

ՌԱԶՄՆԵՐԳՆԵՐ

✠

ՔԱՅԼԵՐԳ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ԱՐԻՔ զուք Սասանեացն ի ճամբար,
Մեք անցցուք գերկիւղայիցն ամեհաբար,
Ի նա անցցուք արին դոչէ Վարդան յօժար,
Սալլա սմբակ երիւարաց գոռ շփորից
Հրաւէր ի մարտ դոչէր ուժգին:

Գունդադունդ վառեալ ի գէն,
Սպառազէն Հաշկեան զարմէն,
Զիարչաւք հասին անդրէն,
Պատերազմեալք խիզախեցան թշնամուցն դէմ:
Մկունդ ասպար ի լոյս շողան սուր,
Մկունդ ասպար փալատակին հուր,
Ի դբօշ ի դբօշ սպային կառք
Աղեղն ի հուր ծածանին սուսերաց փալին փալք:
Ի շող փալին ջինջն արեգին
Անցցուք դոչէ ձաշն ահեղ,
Ոտն ի կառք դէմք չքեղ.
Հնչեցեն բոմբիւնք սուր թմրկաց,
Այրին շառաշիւնք չեփորից պալթ

և թնթմունք մեծ:

Հ. Ա. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ԼԱ ՄԱՐՍԷՅՅԷ

ԱՐԻՔ որդիք դուք Հայրենեաց,
Հասեալ է արդ մեզ օր փառաց.
Դրօշ բըռնութեան չարիւնթաթաւ
Կանգնի ընդդէմ մեր զիմազրաւ:
Լուա՞ցք ի՞նչ դաշտ սրատերազմաց
Ձահւիղ գոչիւն վաչրազ զօրաց,
Գան խողխողել ի՞նչ գերկըս ձեր
Ձորդիս, կանաչս ձեր ի՞նչ սուսեր:

Հա՛սկ' օ՛հն ի՞նչ գէն, քաղաքացիք,
Կաղմեւ ըզգունդ քաջամարտիկ.
Օ՛հն զիմենացուք տալ ի՞նչ չափուրդ
Դաշտաց մերոց դարիւն անսուրբ:

Ձի՛նչ կամի աղջ Հրոսակ գերեաց,
Մատնիչ, դաւող թագաւորաց.
Ո՞ւմ աղջ անուր ՚լ անարդ շրջթաչ,
Ո՞ւմ ի՞նչ վաղուց պատրաստեալ կալ:
Ձի՛նչ, նախատի՛նք մեզ, Գաղիացիք,
Յո՞րայիսի չոցս վառիլ պարտիմք.
Մատնել ըզմեզ վառք չանդըզին
Ի գերութիւն անդ ի՞նչ նախկին:

Հա՛սկ' օ՛հն ի՞նչ գէն, քաղաքացիք, ևն.:

Ձի՛նչ, ժլտիցի՞ն աղջ վաշտք օտար
Լինել երկրիս Հրամանատար.
Ձի՛նչ, աչն վարձկան փաղանդ անսասար
Ձգու մեր մարտիկս արկցե՞ն տապաւտ:
Այլ աղէ՛, Տէր, ձեռք ըստըրկաց
Արկցե՞ն ըզմեօք ըղլուծ չարաց,
Եւ տիրապետք անարգք անդրէն
Լիցի՞ն բաղդից մեր տընօրէն:

Հա՛սկ' օ՛հն ի՞նչ գէն, քաղաքացիք, ևն.:

Դողացէ՛ք բոռ՛ւնք և դուք դրուժանք,
Կուսակցութեանց մեծ անարգանք,
Ձի՛նչ ձեր խորհուրդք Հայրենասպան
Վարձս ընկալին զիւրեանց արժան:

Համակ զինի ՚նդդէմ ձեր ի՞նչ մարտ.
Թէ՛ զիւցազունք մեր անկցին արդ,
Վերկենցաղէ զալլըս երկիր
Մըղել ճակատ վրէժխընդիր:

Հա՛սկ' օ՛հն ի՞նչ գէն, քաղաքացիք, ևն.:

Նուիրական սէր Հայրենեաց,
Օգնեա՛ ի՞նչ վրէժ՝ մեր կուռ բաղկաց.
Ազատութիւն, մեզ կաթողին,
Ընդ քո պաշտպանս մարտի՛ր ուժգին:
Արդ՝ չաղթութիւն ընդ մեր դրօշու
Հասցէ՛ ի՞նչ ձայն քո քաջազոր.
Եւ թըշնամիք քո ողեսպառք
Տեսցեն զմեր փառս, քո զչաղթանակ:

Հա՛սկ' օ՛հն ի՞նչ գէն, քաղաքացիք, ևն.:

(Թարգմ. Ի Գաղղ.) Պ. Խ. ԹԵՐԶԵԱՆ

Վ Ր Է Ժ Ք

ԲԱՄԲ. որոտան բարձուստ բոմբիւնք յԱլլարատեան դաշտն
ի վաչր,

Արի արանց արիւնք յեռանդն առատանան ի Հրազաւր:

Հրաւէր Հայրենեաց Հրոչակի ՚նդՀանուր,
Ոգիք Հաչկազանց բորբոքին ի Հուր.
Որք երկնաւորին պսակին էք կարօտ,
Որք երկրաւորիս փառաց երկնաչորդ.

Հապ՛ օ՛հն, արի արանց մանկունք,
Հայրենավրէժ Հաչկազունք:

Հապ՛ օ՛հն, ի՞նչ գունդ ի գունդ,
Յեռեալ ի պար թունդ ի թունդ.
Ի գէն ի վրէժ՝ օ՛հն անդր չառաջ,
Ի գէ՛ն ի վրէժ՝ մի՛ ձախ, մի՛ չաջ,

Օ՛հն անդր չառաջ
Մի՛ ձախ, մի՛ չաջ.
Օ՛հն անդր չառաջ
Յառաջ չառաջ
Հապ՛ օ՛հն չառաջ:

Հայկեան փանդոսնց որոտընդոտս գըռնչին բարբառը մարտա-
գոս,

Դառնագոռոչ անդրաձայնէ Պարսիկ կերկերն ի շեփոր-

Շարժեն հրեշտակը թեւ լուսափողփողս,

Ճիւղը ճիւղաց կացոռեն ի դժոխս-

Շոխնթըն շանթառաք զեթերօք փարի,

Մարտափին սանդարք ի խօլ խաւարի:

Հապ' օ՛ն, արի արանց մանկունք, են:

Մամիկոնեան սաւառնեցաւ դրօշն չաչերս գող ծալ ի ծալ,

Ի ճակատուց ի թըշնամեաց սա ո՛չ դիտաց չուրաստ կալ-

Հեծեալ հրանժույզ վեհին Վահանայ՝

Վրէ՛ժ կանչէ արեան կարմիր Վարդանայ:

Փռնչեալ բոցաշունչ դափր ի դարչապար,

Ռազմամուտ վարդի ջանժուժ երկխար:

Հապ' օ՛ն, արի արանց մանկունք, են:

Ի դուպարել մարտաշարդար գարչապարաց Արամայ,

Գոռան Կորդրիք, Մասիսք սարսին, Հնչեն սահանք Երասխայ-

Ի գրոհ ի գրոհ տալ բիւրուցն ոտնատրոփ,

Տատանին դաշնակը՝ չառնէ չոխնէն աղջող-

Կռուփ առ կռուփ կռուին կրճրաչք տէգ առ տէգ,

Դղորդ առնուն տարերք՝ կորովեացն ի վէգ:

Հապ' օ՛ն, արի արանց մանկունք, են:

Արի՛ք ի կռիւ քաջակորովք ընդ կորակոր հրոսն Արեաց-

Հապա համհարդը մեր բիւրաշաղթ ձեզ նոր հանդէսք են փա-
ռաց.

Թռի՛ք ի ուղմ ի խաղմ, առէ՛ք զէն և զարդ,

Երեսնիւք ջրսնիւք հարուլ բիւրս հաղարս,

Ի սուր ի սուսեր, կարչնեղ չաղեղունս՝

Ըզսեաւ Մասանեանց ջարդել կառափունս:

Հապ' օ՛ն, արի արանց մանկունք, են:

Մինչև ցե՞րք, ցե՞րք սուգ լինի ի Հայս, հատէ՛ք զարտօսր,

որքք աչրիք,

Հարանց, Հարսանց, Եղբարց, որդւոց, հանուրց Հայոց վրէժ-

խընդիրք.

Թինդս առեալ երթամք չասպարէզ քաջաց,

Յերկնից Հնչեն ձայնք արեան սիրելեաց.

Սօսափիւնք չերկնից՝ արհաւիրք չերկրէ,

Քաջաց սօժանդակ՝ ըզՊարս հերքեսցէ,

Հապ' օ՛ն, արի արանց մանկունք, են:

Օ՛ն անդր ի բա՛ց Հայկեան հողոց հըսկաչաղանց և սըրբոց,

Ի բա՛ց ջուրի՛ր հուսառական մոխրապաշտիցըն պըղծոց-

Դաշտը մեր մերժեսցեն զոսկրոտին անգամ,

Արիւնք վըկաչից դճապաղիսն անժամ-

Ոտն ընդ դիս տոռնեալ դարձցին ի փախուստ,

Մատնակուրծք ընդ Հայս Հաչեսցին Հեռուստ:

Հապ' օ՛ն, արի արանց մանկունք, են:

Արք աղեղանց, բարձր ի թիրախ թռուղի՛ք,

վերջին ձեզ խրախոյս,

Առեալ տարցուք զանթիկնաղարձ զայս վարդապետն դրօշն
անխոյս.

Ի վերայ չիսնից չաղթից Վարդանայ,

Պարսկական բազկաւ արւոյն Վահանայ,

Շեշտ ի ծաչր շիրմի դաշտին Շաւարշան

Տընկել չաղթանակ անմահ Հայութեան.

Հապ' օ՛ն, արի արանց մանկունք, են:

Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆ

ԵՐԳ ՀԱՅՐԵՆԵԱՅ

(Սոյն երգը կ'երգուի Թրքական ազգային երգի «Ասֆէրի

Օսմանեան» եղանակով)

ԶԱՐԹԻՓ որդիք քաջ Հայկայ,

Թօթափեցէք ձեր շղթայ.

Դերութիւն չէ ձեր բաժին

Ազատութիւն կայ անգին:

Դիմենք ի զէն, օ՛ն ի զէն

Չ'երկնչինք պատերազմէն

Հայկեան շեփորք թող Հնչեն

Վատ թշնամիք սարսափեն:

Հին դարերու արցունքներ,

Մեր վշաերու հեղեղներ,

Յամբեցունենք քաջութեամբ,

Պաշտելու ազատութեամբ:

Հայեր դիմենք տանք մեր լանջ,
Թշնամուցն դէմ օն չառաջ.

Ազատութեան սուրբ դրօշակ,
Կանգնի մեր մէջ չաղթանակ:

Հայեր դիմենք Հայաստան,
Մեր դրախտափայլ օրօրան,
Տակ սոսկալի աւերակաց,
Ձեռք թշնամուցն, դաշն թողած:

Ելլենք լուծենք ով Հայեր
Այդ դարեւոր վրէժներ,
Մխենք դէն կուրծ թշնամուցն,
Ձնջել լուծն անագորոցն:

Գնդակ, վառօդ, հրացան
Նետ, սուր, սլաքք բաւ ջարդ տան
Մեր թշնամեաց վատ գնդին,
Որ 'ի կորուստ անկանին:

Տանք մեր ողջոցն հրաժեշտի
Ծնողաց և քերց հայրենի,
Փութանք գրկել փրկութիւն,
Հայրենեաց ազատութիւն:

Կամ ընդունիլ իսկ անդրէն,
Մահ մեր թշնամուցն ձեռքէն,
Այս են բաժինք քաջազանց,
Հայաստանի գաւազանց:

Մնաք բարե՛աւ, Հայրենիք,
Քեզ համար սուրբ ուխտ ըրինք
Կամ անկեալ փառք քո կանգնել,
Գիրկդ գերեզման ընտրել:

Մեր դրօշ նուիրական,
Արծիւն չառաջ ընթանալ,
Սիրականք մեզ բիւր փառք տան,
Օ՛ն անդր դիմենք քաջ Հայկալ:

Մնաք բարե՛աւ սիրականք,
Քորք և ծնողք անբաժանք,
Երբ փրկենք մեր Հայրենիք,
Դառնանք ձեր փարելի գիրկ:

ՍԻՄՕՆ ՀԵՔԻՄԵԱՆ

ԵՐԳ ՄՈՆԹՈՆԻ

ԸՆԿՆԻՐՔ, չաղթեան ժամն է արդ հասեր,
Մեզ կ'սպասեն փառք, առնունք քաջալեր,
Արեան ծաղաւի մեր հատու սուսեր
Կենւոյ թշնամուցն թող կտրին թելեր:

Ո՛հ, մեր ախոյեան թողինք ի տագնապ,
Չըլլանք ահաբեկ, մենք, ի դէն ըշտապ.
Փութանք արշաւել, աչր՝ մի՛ վեհերոտ,
Մի՛, օն անդր իրաց սիրտք վատ և երկչոտ:
Իդէ՛ն, իդէ՛ն, օն անդր իրաց
Սիրտք վատ և երկչոտ:

ՔԱՅԼԵՐԳ

ՀԱՅ եղբայրներ դէ՛հ գունդ ի գունդ,
Արեան դաշտը մենք նետուինք,
Սուրը ձեռին հուրը կուրծքին,
Սառած սրտեր բորբոքենք:

Արեւելից լուս է ծագում,
Եւ Հայաստանը ուժգին ցնցում,
Օ՛ն, օն չառաջ օ՛ն մարտ,
Օ՛ն ի հրազայր մեր արիւնով մեր արիւնով,
Ճամբոյ բանանք Հայ եղբարք, ճան եղբարք,
Թշնամու դէմ մենք սլանանք,
Հեղեղի պէս փոթորկի պէս
Նրանց արիւնով լեռներ ներկենք
Պիղծ գիւղով դաշտեր պատենք,
Թող գնդակի տարափ թափի,
Թող մեզ մահը անարդ լափի,
Թշնամուն դէմ մենք սլանանք
Հեղեղի պէս փոթորկի պէս,
Նրանց արիւնով լեռներ ներկենք
Պիղծ գիւղով դաշտեր պատենք:
Թող վերջապէս տեսնէ Վաթան
Պարզուած դրօշը ազատութեան:
Թող վերջապէս տեսնէ Վաթան
Պարզուած դրօշը ազատութեան:

ԵՐԳ ՄԵԾԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ

Հուր բարկութեան համայն Հայոց,
 Բորբոքեալ զերդ բոց բարկաճալթ.
 Եւ կաշձականցըս բիւր բիւրոց,
 Ձարթոց 'ի մարտ սարս սառնապատ:
 Զի՞ վարանիմք աստ արդ, եղբարք,
 Դատարկ ձեռամբ, դատարկ ձեռամբ,
 Ձեռամբ, Արտաղ Տղմուտ օն դրոցդ 'ի դրոցդ,
 Ի դրոցդ թռչիմք սրանամբ, սրանամբ, սրանամբ:
 Հուր զէն 'ի ձեռին
 Ու վրէժ ահագին
 Սպասեն եւ կան
 Քաջք Արշակունեան:
 Եւ չոր երկինք հանդիսատես
 Ձաշխոյժ նախնեաց հեղու 'ի մեզ:
 Հապ օ՛ն քաջք քաջաց,
 Ընդ սասան կուրծս,
 Մխեսցուք մկունս,
 Ուժդին 'ի հարուած:
 Ա. ՍԷՏԵՖՃԵԱՆ

ԵՐԳ ՄԱՐՏԻ

ՄՆԱՍՅԵՍ բարեաւ, սէր իմ սէր,
 Հրաւէր մարտին որոտաց.
 Թէ չեմ քաջաց ես ընկեր,
 Ձկաչ բաժին ինձ փառաց:
 Մի՛ լար, Հոգւոյս իմ հատոր,
 Գուցէ դառնամ, ո՛հ, մի՛ լար.
 Թ'անկալց մարտին ես ի դու,
 Տեսցուք լերկինս մեք զիրեար:
 Եղբայրադաւ չէ նախանձ
 Որ բորբոքեալ չիս վառի,
 Ի սուրբ Հոգոյ Հայրենեաց.
 Բառնամ ըզլուծ օտաբին:
 (Թարգ. յիտալ.) Մ. ՊԵՇԻԿԹԱՆԼԵԱՆ

ՄԱՐՍԷՅՅԷԶԻ ՀԱՅԵՐԵՆԸ

ՅԱՌԱ՛Ջ, Հայեր, Հայրենիքի
 Ազատութեան ժամն է հասեր.
 Ձէ՞ք տեսներ, բռնաւորն մեզի
 Դէմ արնոտ դըրօշ է պարզեր. (կրկնք.)
 Ձէ՞ք լսեր դեռ Հայաստանցի
 Ժողովրդի հառաչանքներ.
 Քիւրդեր, Թիւրքեր Հայ գիւղերի
 Մէջ կը մորթեն մեր եղբայրներ:
 Զէնքեր առնենք, Հայեր,
 Շուտով կազմենք գունդեր,
 Քալէ'նք լառա՛ջ, Թո՛ղ Թիւրք արիւն
 Ծծեն Հայոց դաշտեր:
 Ի՞նչ կուզեն այդ ցած ու վայրագ
 Քիւրդեր, Թիւրքեր, մատնիչ Հայեր.
 Ո՛ւմ համար են այս անարդանք,
 Ո՛ւմ համար այդ Հին շղթաներ: (կրկնք.)
 Մեզ համար են, Հայե՛ր, ա՛հ, մեզ
 Կարհամարհեն. դեռ համբերե՞նք.
 Կուզեն որ մեզ գերիի պէս
 Իրար ծախեն. ի՞նչ կեցեր ենք:
 Զէնքեր առնե՛նք, Հայե՛ր,
 Շուտով կազմենք գունդեր,
 Քալէ'նք լառա՛ջ, Թո՛ղ Թիւրք արիւն
 Ծծեն Հայոց դաշտեր:
 Սոսկացէ՛ք, ո՛վ բռնաւորներ
 Եւ մատնիչներ Հայաստանի.
 Սոսկացէ՛ք զի ժամն է հասեր
 Որ վրէժն առնենք ձեր գործերի. (կրկնք.)
 Ամեն Հայ ձեզ դէմ պիտ' կուռի.
 Մեռնողին տեղ մեր Հայրենիք
 Նոր զաւակներ մեզ պէս կը ծնի
 Եւ չենք հատնիր մինչև մեռնիք:
 Զէնքեր առնե՛նք, Հայե՛ր,
 Շուտով կազմենք գունդեր,
 Քալէ'նք լառա՛ջ, Թո՛ղ Թիւրք արիւն
 Ծծեն Հայոց դաշտեր:

Կռուին մէջ մեր մեծ եղբայրներ
Թէ մեռնին, մենք Հոն կը մտնենք.
Կ'երթանք դռնել անոնց Հեռքեր
Ուր քաջաբար մեռնիլ կուզենք. (Կրկնք.)
Մեր եղբայրներ երբ մեռած են,
Մենք ալ կ'երթանք մեռնիլ անաՀ-
Այսպիսի դառն կեանք մեզ պէտք չեն,
Մենք ուխտած ենք վրէժ կամ մաՀ:

Ձէնքեր առնե՛նք, Հաչե՛ր,
Շուտով կազմենք գունդեր,
Քալե՛նք չառա՛ջ, թո՛ղ Թիւրք արիւն
Ծծեն Հայոց դաշտեր:

Ո՛վ դու սուրբ սէր Հայրենիքի,
Վեր վերցուր մեր թույլ բազուկներ.
Ազատութի՛ւն մեր պաշտելի,
Զօրացո՛ւր քո Հայ պաշտպաններ. (Կրկնք.)
Թո՛ղ չաղթութիւն լսէ քո ձայն
Եւ վազէ դաշ մեր դրօշի տակ,
Թո՛ղ բռնութիւն մաՀմետական
Տեսնէ քո փառք մեր չաղթանակ:

Ձէնքեր առնե՛նք, Հաչե՛ր,
Շուտով կազմենք գունդեր,
Քալե՛նք չառա՛ջ, թո՛ղ Թիւրք արիւն
Ծծեն Հայոց դաշտեր:

1888, Նիւ Եորք

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ԵՐԳ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ

Ո՛Հ, զօրեղ բազուկն ՎաՀանայ,
Տէգն ի ձեռին արդ բռնանայ, ո՛Հ,
Մղէ աչսօր ցՊեռող արքայ-
Ի կուր ժանտից խիւ անխնայ, ո՛Հ:

Գունդ ՎաՀանայ Մամկոն դարմին,
Զօրաց Պարսից փախուստ տալին, ո՛Հ,
Աւերէին և քանդէին,
Զկրակատունս մոզուց տենին, ո՛Հ,

Գունդ ՎաՀանայ գօտեպղին, ո՛Հ,
Զի չաղթութիւն մեծ գործէին
Զդանդիտեալ ի Յաղկերաէն,
Ուժեղ զօրաց շառափիւնին, ո՛Հ:
Քաջամարտիկ ով դու ՎաՀան,
ԱՀա զօրք քոյ խրախոս տան, ո՛Հ,
Մղել ի մարտ խիւղն խնդան,
Զօրքն Պարսից փախչիլ փութան, ո՛Հ:
Ուստի Համայն խմբել զԾօն,
Տեղ Համարեմ ես աստանօր, ո՛Հ
ՎեՀ Հրաժիշտք ազգիս Հայոց,
Երգել ի նուագս տաղուի ի յօդս, ո՛Հ:

ՍՈՒՆԱՄԱՐՏ

ԶԻՔ գնդակ, վառօդ, փամփուշտը Հատաւ,
Հրացանդ ալ գուցէ կարգէ դուրս ելաւ.
Բայց բնաւ մի վՀատիր, չըլլայ երկնչիս.
Հաւատքդ թող լինի՝ չի պիտի ընկճիս.
Լեր դու ունկնդիր պետիդ Հրամանին-
Սուինք ի կա՛ղմ, զգո՛յն, փողն Հնչէ ուժգին:

Օ՛ն, ուրեմն, չառաջ, գոչէ բարձրաձայն
Կեցցէ՛ Հայ զինուորն, կեցցէ՛ Հայաստան.
Թող թնդայ դաշտն, դողայ թշնամին,
ԱՀ ու սարսափ տայ անոնց բանակին:

Տեսնե՞ս սա գծուծ, վախկոտ սինլքոր,
Որ քեզմէ փախչի արագ, գլխիկոր.
Տուր Հարուած մ'ուժգին սըւոր կոնակին
Գայ Հողին բերան, տապալի գետին:
Այժմ ընդոստ դէպ չառաջ քալը՝ կամ երկու,
Լեր ճարպիկ, Հանէ ձիւ մը աՀարկու.

Օ՛ն, չաջմէ վանէ, ապա ջանկարծ մխէ խոր,
Ուր լինի Հող չէ՝ քիթ, բերան կամ փոր:
Դարձ ընդաստ դէպ ձախ, զգոյն, պատրաստ կաց,
Կատղած դաղան մի քեզ Հասնի սըընթաց.

Հա՛ր մէկ մի սրտին, մէկ մ'ալ ուղեղին,
Արեամբք վրիժու թող հողք հեղեղին:
Այժմ վանէ յտախց և մխէ փութով,
Դարձ չետս երեսդ, տուր հարուած մ'ալ կոթով.
Դրոշմէ բաւ ընկնի նա չետս հեւալով,
(Մաղ մնաց գլուխդ պիտի կտրէր սրով):

Այժմ առ քաջս չառաջադէմ ըշտապաւ,
Զի ղիմաւորես վաչրադ քիւրտն ձիարչաւ.
Գլխից վանէ, ապա մխէ ուղիղ կամ կոր,
Մարդու կողին, ձիու փուլին խոր խոր:

Բաց զհա՛րդ կանդ առնուս, չապաղիս ապշած,
Յաղթութեան ոգին գլուխդ է զարկած.
Չե՞ս լսեր եղբարցդ օգնութեան ձայնին.
Գրգռի մի խուճը հասած է վրանին:
Դարձ չետս չանկարծ, օ՛ն անդը, շտապաւ,
Յաջմէ ձախմէ վանէ, Հա՛ր ու մխէ՛ լաւ.

Թող գլորին դետին և աստ անդ ցրուին,
Եւ հող քար ու ժաշո արիւնով ներկուին.
Մինչև չի մնայ հատ մի քիւրդ ու մուրդ,
Լինին ամենն ալ լաւ մի ջարդ ու բուրդ:

Գոչէ դու չաջնժամ կրկին բարձրածայն,
Կեցցէ՛ Հայ գինւորն, կեցցէ՛ Հաշատտան:
Պիտ՝ անդրադարձէ ձայն իրը պատասխան,
Դիտէ՞ք ուսկի — ի Մաչը Հաշատտան —
«Կեցցե՛ս, Հայ գինւոր, տարիւր չաղթանակ,
Պարտդ կատարեցիր, վաչէ քեզ պսակ».

Տոշորեալ չրթանցս համրոյրներ հրակէզ,
Պիտ՝ բուժեն վէրքերդ, կրկին կեանք տան քեզ,
Ե՛կ գրկեմ անգամ մ՝ փարեմ քեզ սրտիս,
Եւ կոչեմ իմ քաջ արժանի որդիս:»

1890 Նիւ Եօք

ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ

ՅԱՌԱՋ ԱՆ ՔԱՆԵՐ

ՏՂԱՅՔ, Ժողովուրնք հեռուէն ու ծօռէն,
Զինուոր կանչելու փողերն ձայն կը հանեն.
Սաստիկ պատերազմ մ'ընելու պատրաստ ենք,
Զէնքերնիս առնենք ու շառաջ ալ քաշենք:
Յառաջ ալ քաշենք, ո՛հ, շառաջ ալ քաշենք,
Զէնքերնիս առնենք ու շառաջ ալ քաշենք.
Սաստիկ պատերազմ մ'ընելու պատրաստ ենք,
Զէնքերնիս առնենք ու շառաջ ալ քաշենք:
Ահա մեր առաջ կաշ անթիւ թշնամի,
Բաց մեզ վանելու զօրութիւն, ուժ չունի.
Աստուած զօրութիւն է, մեր երդն աչս ընենք,
Ու քաշութիւնով, հաւատքով ալ քաշենք:
Յառաջ ալ քաշենք, ևն:
Մինչ մաշը հասնի մենք կ'ուզենք մարտնչիլ,
Մեր քաջ զօրապետ չի կրնար չաղթուիլ.
Հաշիւայ փաշուս սուրը մեր ձեռքը առնենք,
Յաղթող ըլլալու, ու շառաջ ալ քաշենք:
Յառաջ ալ քաշենք, ևն:
Ծառ նեղութիւնով կ'ստացուի չաղթութիւն,
Թշնամույն երբէք չընենք մենք գլութիւն.
Սակաշն վառահ ենք թէ պիտի չաջողինք,
Թէ մեր զօրապետին մենք միշտ հետեւինք:
Յառաջ ալ քաշենք, ևն:

ՅՈՒՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ

ՔԱՂՅՐ Հայրենեաց ազատութեանը համար,
Եւ լուսասիրիւս սուրբ Հաւատոյս վեհապառ.
Այս երկու վեհ առթիւս ահա
Թէ ինձ մեռնիլ արժան չըլլայ,
Կեանքն ինձ ալ ի՞նչ կը ծառայէ
Երբ գերութիւնն ալ չիս տեւէ:
Ո՛վ սուսերդ իմ վաղակաւոր սալբասուր,
Եւ դու Հրացանդ որ կը թալթբես բոց և հուր,
Դուք թշնամին խորտակեցէ՛ք
Եւ բռնաւորն նուաճեցէ՛ք.

Կեցջի՛ք միշտ իմ հրացան, սուսեր,
 Ձեօք Հայրենեացս կանգնին աւեր:
 Ո՛վ սուսերդ իմ երբ տեսնեմ զքեզ շողշողաս,
 Եւ դու հրացանդ իմ սեւորէմ որոտաս,
 Վատ թշնամուլն իրանն փռուի,
 «Աւա՛ղ» կանչէ ու աչնայէս մեռնի:
 Ապրի միշտ մեր հէք Հայրենիք,
 Կեցցեն միշտ մեր վեհ հայրենիք:
 Հետևողութեամբ

ՅՈՒՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԻՆ

Ո՛վ սուսերդ իմ պողովատիկ կատաղի,
 Եւ դու հրացան վատ արիւնի ծարաւի,
 Թող թշնամուլն իրան փռուի,
 Մեր բռնաւոր շունը սատկի:
 Կեանքն ինձ ալ ինչ կը ծառայէ, ևն.
 Հայրենիքի արիւնաներկ սեմոց տակ
 Թշնամինուս փռենք շուտով սե զիակ:
 Եւ նախահարց շունջ և կտակ
 Հայրենիք՝ ըլլայ անո՞նց ժառանգ:
 Կեանքն ինձ ալ ինչ կը ծառայէ, ևն.
 Թող Հայրենիք տխուր ճակատն վեր առնէ,
 Եւ իր աչաց աղի արցունքը սրբէ:
 Եւ իր որդւոց սիրոյ բարե
 Տաչ և ծագի պաշտառ արե.
 Կեանքն ինձ յաջեմ թող ծառայէ
 Երբ Հայրենիքն ազատ տեսնէ:
 (Թարգ. Յուն.)

Մ. Յ. ՏԱՄԱՏԵԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ

Եղանակ (Լա Մարսէյիէզ)

Օն, փութացէ՛ք, հասեալ է ժամ,
 Հարէք մարտի փողերն ուժգին:
 Մեզ ահարկու կայ պատերազմ,
 Արեամբ զինեալ է թշնամին:
 Փշրեմք ազատ, բանանք դրոշներ,
 Չար նախանձուն մեր ոխերիմ:

Որ դարերով է մեզ փակեր,
 Ի կուրութեան ՚ի բանտ մթին:
 Ի զէ՞ն, օ՞ն, փութացէ՛ք
 Գունդ ՚ի դունդ, Հայ ուսուերք.
 Լուսովն այս նոր տարւոյս վանենք
 Բռնութիւն, դաւ ու նենդ:
 Մեր մարք, մեր քորք խոցեցան շատ
 Շղթայակալ ՚ի գերութեան.
 Մինչդեռ մեր հարք, եղբարք ազատ
 Անփութ էին կոյր գիւրացն:
 Արդ և սոքա շուտովն ուսման
 Տեսան վէրքերն իրենց աղղած,
 Ուստի լինին մեզ օգնական,
 Առնել նախանձն արտահալած:
 Ի զէ՞ն, օ՞ն, փութացէ՛ք
 Գունդ ՚ի դունդ, Հայ դասերք,
 Լուսովն այս նոր տարւոյս վանենք
 Բռնութիւն, դաւ ու նենդ:
 Ազատութեան կանգնեմք դրօշ
 Մեր իզական փափուկ սեռին.
 Տեսնեն մեր քաջ ընկերք աշուշ
 Թէ աշուռ իրե՛ց է մեծ բարին:
 Նոր տարւոյ զէնք առէք, զինուորք,
 Մեր բառն ընենք Հաւատք, Յոյս, Մէր,
 Իմաստութեան դասերք եմք, քորք,
 Այս մեզ փառք, պսակ, այս ճեղ հրաւէր:
 Ի զէ՞ն, օ՞ն, փութացէ՛ք, և ալին:

ՁԵՅԹՈՒՆՑԻ ԱՂԱԿԱՆ ԿՈԶՆ ԱՌ ԻՒՐ ԵՂԱՅԻՐ

Արի՛, եղբա՛ւր, ա՛ռ քո զէնքեր, Արիազունդ բանակներով,
 Աչխարհ հանուր են թօթափեր, Ազատութեան վառեալ չուսով:
 Անտանելի լուծ Թուրքերի, Արի՛, եղբա՛ւր, ա՛ռ քո դրօշ,
 Վրէժ կը գոռան Հին դարերի: Իմ մատերով եմ դործեր, օ՛շ:
 Արի՛, եղբա՛ւր, ա՛ռ քո վահան, Թէ չոտերս ո՞չ պսակուին,
 Տե՛ս Հէրսէքովն ու Սերպիան, Թէ քորք եղբարք իմ փրկուին:

Արի՛, եղբա՛յր, մի՛ դանդաղիր.
Քո քաջերիդ գլուխն անցիր.

Այ բաւ Հեծէ՛ մեր Հայրենիք,
Այ բաւ կրեց ամեն չարիք:

Արի՛, եղբա՛յր, ինչո՞ւ աչդպէս
Տրտում տխուր վշտով լի ես,
Մեր փրկութիւն նուիրական,
Հայ զէնքերէ ե՛թ կախեալ կան:

Արի, եղբայր զերթ մի դիւցազ,
Հսկայական առնել քո վազ,
Արիւնարբու վատ թաթարին,
Ներկել զերկիր արեամբ պղծին.

Արի, եղբայր կռուէ զերթ քաջ,
Երկնաւորին Հսկէ քեզ աջ,
Քեզ պաշտպան Յիսուսին խաչ,
Ե՛կ, տամ ճակտիդ Համբոյր,
ո՛վ քաջ:

Արի՛, եղբա՛յր, տե՛ս այս ջրեր,
Ափերով լի Հայոց գետեր,
Հայ կուսերի արիւն արցունք,
Կազմեն զնան վեհ կոհակունք:

Արի՛, եղբա՛յր, վերջ տո՛ւր կու
սին,
Դառն վէրքեր նորա սրտին,
Լուսին արեգ ամաչեցան,
Պատիւ կուսին պղծուեցան:

Արի, եղբայր ո՞ւր մեր թագեր,
Գաւ և մական են ծածկուեր,
Թուրքէն ինչո՞ւ չառնես վրէժ,
Որ մեզ տիրէ զերթ մի Հրէշ: —

Մի խոր Հառաչ կոչն արձակեց
Իւր քաջ եղբոր սիրտը խոցեց,
Վազեց բանակն դուռ անվեհեր:

Դողաց երկինք, դողաց երկիր,
Ո՛հ նուազեալն անկաւ չերկիր:

Քույր իմ դուչեց քաջ Զէյթունցին
Մի ոստուծով առաւ սրտին,
Նուազեալ կոչն իւր կաթողին,
Համբուրներով դարձուց կեանքին:

Քույր իմ, ըսաւ քաջ պատանին,
Դեռ չեն մարած խանդ իմ սըրտին:

Դեռ իմ Հարց քաջ արեանց
կայակ,
Թաւալ դուր խաղան չերակ:

Քույր իմ, ասաց այս նոր դիւցազ
Որ ազգէն է մեր ազգ նուազ,
Քաջ Զէյթունցիք են զինավառ,
Ահա կերթան փրկել Հարց վայր

Տո՛ւր իմ դրօշ, վահան, զէնքեր
Երթամ ջնջել վատ թաթարներ.
Լուծեմ վրէժ Հայ կուսերի,
Բերեմ վեհ թագ իմ Հայրենի:

Իմ Կիլիկիան պէտք է լինի,
Աղատ երկիր Հայկեան զարմի.
Գաւ արքունի պէտք է փայլի,
Մի Հայ իշխան պարծանք ազգի.
Մնաս բարե՛աւ, ասաց, քույր իմ
Աղօթք ըրէ Յիսուսին իմ,

Բայց թէ մեռնիմ, ա՛յ իմ վրէժ
Այդ ցած ազգէն վալրագ Հրէշ:

Ասաց աչդպէս քաջ Զէյթունցին
Համբոյր տուաւ քեռ կաթողին.

Առաւ դրօշ, առաւ զէնքեր,
Վազեց բանակն դուռ անվեհեր:

ՆԱԽԲԵՐԴՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

→X←

ԼՈՒՍՆԿԱՅՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՅ ՀԱՅՈՑ

Ա՛Յ իմ լուսնակ գեղեցիկ, Աստուածավառ դու լապտեր,
Զոր առաջնորդ գիշերոյ դբաւ չերկինս ինքն Տէր,
Կույր մթութեան աչք անփակ, սրտիս այլ դու աչք կուտաս,
Երբ շողշողուն շղթայով կախուած շարժիս չիմ վրաս:

Քո թեւն երկնից արծաթէն Հիւսուած պատրոցդ ալ ոսկի,
Աղամանդէ կայծակներ սփռես զաստղերդ չորս դի.
Եղի մեղրի նման կաթ մի լամանէդ լիս թափուած
Կը խաղաղէ կրքերս զինչ այլիք լճիս Հանդարտած:

Ո՛հ, ո՞նց պաշտառ էիր դուն կենացդ երկրորդ գիշերին,
Երբ նոր քաշուած Աստուծոյ ճախարակէն ընդ երկին,
Ո՛հ, ո՞նց փայլուն էր քո լոյսն՝ երբ առաջին աչն անգամ,
Գիշերազուարճ սլալուլիկն ձգեց ձայն երկնահամ:

Շունջն պաշտառ քեզ նման Հովտէ Հովիտ կը խաղայր,
Հեղիկ Հովով թունդ ելած մաքուր առուակն Հեւայր,
Զկայր ականջ Հողեղէն որ դայն լսէր ու փառք տայր,
Միայն Հրեշտակք լսէին և շարժէին զքեզ վայր:

Եւ դուն լսիկ չափեցիր զանամպ երկնից կէս բոլոր,
Ծով ու ցամաքի վարադուր բացիր, ներքեւ մտար խոր,
Երբ արեգակն կուգայր Հրեղէն ոտիւք լողս ի վազ,
Զարշալուսոյ ցող սփռէր և զառաւօտն Հրամադ:

Կացի՛ր, արեւ, չեա կացի՛ր, մ՛եւնեք չերկինդ կապուտ,
Թող լուսնիկիդ ի ման դաւ դեռ ի մէջ թուի ամպերու,
Կա՛ց, կա՛ց լուսնակ դու լառաջ լեռնէ ի լեռ, սարէ սար,
Մէջ ձորերուս, խորերուս, անցի՛ր լուշիկ Հաւասար:

ԱՌ ՎԱՐԴՆ

ԱՌԱԽՕՏԵԱՆ քաղցր և անուշ հովերն,
Մերձեալ հընչեն մեզմով թփոյզ քովերն,
Արդ ծածանին աչացս լցեալ ծովերն.

Բացուի՛ր, բացուի՛ր, իմ կարմիր վարդ աննման,
Գեղդ նման արեգական վառվառման:

Քանի ողբամ՝ նոր ի նորոց խոցոտիմ,
Ըզփալուն գեղդ ՚ի միտ բերեալ բոցոտիմ,
Յորդ արտասուօք, ցալդ ու ցերեկ թացոտիմ.

Բացուի՛ր, բացուի՛ր, իմ կարմիր վարդ, ևն.

Չմենն էանց ես քեզ կարօտ մնացի,
Այրիմ, տալիմ, սրաէս ի հուր հնոցի,
Քեզ շատ օրեր ես ի ձեռաց գնացի,

Բացուի՛ր, բացուի՛ր, իմ կարմիր վարդ, ևն.

Տեսեալ ծաղկունս՝ դամենն ինձ փուշ վարկանեմ,
Թեօք բախեալ՝ զսիրտ իմ քնքուշ հարկանեմ.
Ըզցաւ սրտիս՝ ահա՛ քեզ չուշ արկանեմ.

Բացուի՛ր, բացուի՛ր, իմ կարմիր վարդ, ևն.

Արքայարանն Բիւղանդիոյ մեծ շինի,
Տեղ ու բնակ չարմարեալ քեզ չարկ լինի,
Նաւակատեօք, չիչատակ քո չա՛ր տօնի.

Բացուի՛ր, բացուի՛ր, իմ կարմիր վարդ, ևն.

Արարից քեզ հովանի մի կերպասեալ,
Արծաթակար և ոսկեհոռո մարդարտեալ,
Ակնահիւսեալ շուրջանակի երփներփեալ.

Բացուի՛ր, բացուի՛ր, իմ կարմիր վարդ, ևն.

Պէտք ամենայն՝ հոգեկանք և մարմնականք,
Եղեալ են վասն քո իբրու լալականք,
Բանաստեղծք և դպիրք երգոց երգաբանք.

Բացուի՛ր, բացուի՛ր, իմ կարմիր վարդ, ևն.

Լեզուս քնար, սիրաս չընար, քեզ երգեն,
Թեք իմ մատունք որք միշտ զլանջս հարկանեն,
Թուղունքն ամեն՝ քեզ բաղմականք սպասեն.

Բացուի՛ր, բացուի՛ր, իմ կարմիր վարդ, ևն.

Ձուր ոռոգման՝ քեզ արտասուքս ընծայեմ,
Ամպ հովանի՝ զթե ի վերուստ տարածեմ,

Ի սէր սիրուն՝ բուռն սիրով վառած եմ.

Բացուի՛ր, բացուի՛ր, իմ կարմիր վարդ, ևն.

Յորդ արտասուօք թեօք բարձեալ սնուցից,
Ի գիրկս ի լանջս հանգուցեալ պահեցից.

Շաղով ցօղով՝ չար ոռոգեալ ալ արբուցից.

Բացուի՛ր, բացուի՛ր, իմ կարմիր վարդ, ևն.

Առաւօտն բանալ փութալ վաղվաղէ,

Օդն ըզցօղիկ՝ իվերայ քո շաղչաղէ.

Խոնջեցայ չոյժ թըռչոտելով թաղ թաղէ.

Բացուի՛ր, բացուի՛ր, իմ կարմիր վարդ, ևն.

Բարձրաձայնեալ զօր ամենայն վայվայեմ.

Մաղլովք գերեսս պատառոտեալ քայլայեմ,

Անճարացեալ ըզտերեսդ փալփայեմ:

Բացուի՛ր, բացուի՛ր, իմ կարմիր վարդ, ևն.:

ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՂԱՓԱՆՅԻ

ՀԱՅ ԱՂԶԻԿ

ԴՈՒ ՏԵՍԵ՞Ղ Ես երկնքուժը

Պալատ լուսին ծաղկելիս,

Կամ թէ կանաչ տերեւի մէջ

Կարմիր ծիրան փայլելիս:

Դու տեսե՞լ ես ծաղկոցուժը

Կարմիր վարդը փրթթած,

Շուշան, մեխակ ու նուսուֆար

Ձորս բոլորքը պար բըռնած:

Բայց լուսինը խիտ խաւար է

Հայ աղջկայ առաջին,

Ծիրան, մեխակ ու նուսուֆար

Չարժեն նորա մէկ պալին:

Երկու թըշին վարդ են նստել,

Ճերմակ ճակտին՝ մէկ շուշան,

Ժըպիտը բերնից ցած չի դալիս —

Անմեղուժեան է նըշան:

Տե՛ս նա առաւ կարմրելով...

Իր ընկերից դա՛հիրան,

Դըմդըմբեցուց փալիուկ մատով

Ու ըսկսեց լեզգինկան:

Նազուր մէջը ծառի նման
Տատանում է գեղեցիկ,
Մէկ թռչում է նա անգուման,
Մէկ զընում է խիստ հեղիկ:
Հալում է խեղճ կըտրիճներ
Սիրաբ՝ նորան տեսնելով,
Ծերը իրան անիծում է,
Որ ծերացաւ խիստ շուտով:
ՔԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ԶԵՓԻՒՌ ՄԱՆԿԱՆՑ

ԴՈՒ ՓԱՓԱԹԵՒ մանկիկ զեփիւռ,
Աղբերց վրայէն լուսակարկաջ,
Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ,
Ի՞նչպէս թռչիւ ինձ ընդ առաջ.
Ու խունկ և գով ընծալելով,
Զիս ողջունես հեղիկ շընչով:
Ո՛հ, կը սիրեմ ըզքեզ հոգմիկ,
Երբ կը փութաս ինձի գալու.
Ի պար ՚ի թռիչ ՚ի սուլ մեղմիկ,
Այրած ճակտիս ինձ աչցելու.
Ծաղիկ հոգւոյս քեզ գովացած,
Ծիւ ծիւ բացուի ՚ի լոյս կենաց:
Սլացիր փափկիկ դու սուրհանդակ,
Լուր առ՛ւր հովտին ու ծործորին,
Ու անտառաց բարձրադիտակ,
Ուր երամով սոխակք թառին.
Թէ մըտերիմն լւրեանց եկաւ,
Բիւր ըզմայլմանց չիշտաղաւ:
Ո՛հ, կորուսած եմ հաճուցներ,
Հոս վերըտին գտնեմ ըզքեզ.
Ծառոց շրթով էք ծածկուեր,
Ու փըրփուրով առուակին հեզ.
Ահա կաշառէք ՚ի չաչս ծըմակ,
Ի չաչս թըփուտ հովանոցակ:

Հոս դառն հոգեր մէկիկ մէկիկ՝
Ճակտէս ՚ի բաց հեռանալին,
Եւ հոյք ժամուց դեղապարիկ,
Սիրաբ թեթեւ օրորէին.
Եւ բնութիւն՝ մայր որդեսէր,
Քընքուշ գըրկաց մէջ մեզ գըզուեր:
Հոս ճեմէին երեկոյեան
Ի գով ըստուեր պար մի կուսից,
Մազեր հովուն բազմարուբեան,
Սիրաբ ընծալում հեշտ վայելից՝
Շող լուսնակին, կոյսն ու ծաղիկ
Զիրար շուքն սիրատարիկ:
Մըտերմութիւն, սէր կրակութոյց,
Ի՞նչ անուշ էք չաչս տեսարան,
Ուր դաշարիք ձեզ հանգըստոց,
Ու անհուն դաշտեր ըզքօտարան.
Մըտերմութիւն, ինձ երանի,
Թէ հոս ծոցէդ հոգիս թռանի:
Դու փափկաթե մամկիկ զեփիւռ,
Աղբերց վրայէն քաղցրակարկաջ,
Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ,
Թըռի՛ր, թըռի՛ր ինձ ընդ առաջ.
Ու խունկ ու գով ընծալելով՝
Ի՞նչ շուրջ պատէ հեղիկ շընչով:

Մ. ՊԵՇԻԿՅԱՆԵԱՆ

ՄՕՏԱ Է

ԷՍ ՀԱԿՈՏՆԵԱՑ աշխարհւոյ
Ամենայն ինչ է փոխուել,
Կրօնք, լեզու, ազգութիւն,
Մօզայի է վերածուել:
Էս ի՞նչ է — մօտայ է:
Հայ պատանին թէ ըսես,
Օ՛, նա գիտէ ամեն բան.

Դատարկ գլխով փաթաթէս,
 Խօսքով փրկէ Հայաստան:
 Էս ի՞նչ է — մօտայ է:
 Եկեղեցի գնալիս,
 Քաթէ-չանթան է կարծում,
 Ոտքը ոտքի վրայից
 Նա երբէք վար չի առնում.
 Էս ի՞նչ է — մօտայ է:
 Մէկ էլ տեսնես փողոցում.
 Ոսկի ականոցը քթին,
 Անգլիերէն է ջարդում,
 Քծնող ժպտան երեսին:
 Էս ի՞նչ է — մօտայ է:
 Հայ տիկինը իր դաւիին
 Անգլիերէն է խօսում,
 «Փափա, մամա, կուտ մօրնինկ.»
 Անպէտ թութակ է դարձնում:
 Էս ի՞նչ է — մօտայ է:
 Հայ քարողիչ — պատուելին
 Հայաստանն է մոռացել.
 Վարդան, Ներսէս, Սահակին,
 Նա բնաւ չի քարողել.
 Էս ի՞նչ է — մօտայ է:
 Հայհոյում է Բաֆֆին,
 Նրան սրիկայ է կոչում.
 Դրանց փոխան Հիչքօքից
 Իւզոտ ուճիկ է դանձում.
 Էս ի՞նչ է — մօտայ է:
 Դուք չէ՛ք տեսնի վարդապետ
 Լաչն մօրուքով ու վեղար,
 Հագած ունի բրինա ալպէրթ
 Ու սիլինալը չողահար:
 Էս ի՞նչ է — մօտայ է:
 Նա չէ պահում և մեծ պահք,
 Ա՛խ, ստամոքսն է տկար.
 Բաց ամբիոնից պահք ու ծոծ
 Քարողում է անդադար:
 Էս ի՞նչ է — մօտայ է:

Հայ օրիորդ նազելի,
 Օ՛, շատ սիրում է ոսման,
 Սենեակումը Հայելի,
 Դէճքն է դնում անպայման.
 Էս ի՞նչ է — մօտայ է:
 Նա չէ սիրում Հայ աղայ,
 Սա կարծ է, միւսը ցած,
 Դա տղեղ է, նա աղքատ,
 Աչքն օտարին է տնկած:
 Էս ի՞նչ է — մօտայ է:
 Թէ ուզում ես բաղդ շինել,
 Ճաշարանապետ կը լինես.
 Բաց քիչ օրից անպատճառ
 Շունչդ եղիպտոս կը քաշես:
 Էս ի՞նչ է — մօտայ է:
 Ճաշարանում չիք պարոն
 Կոկոզավիղ, թէթեթիկ.
 Հոն պառկում է, հոն ուտում,
 Վճարում է ապառիկ:
 Էս ի՞նչ է — մօտայ է:
 Եւ խօսում է ալամօտ,
 «Պօնթուս միւսիւ» քեզ կ'ըսէ.
 Բաց Հէնց իր պարտք թէ ուզես,
 Քիթն ու բերանը կը կախէ.
 Էս ի՞նչ է — մօտայ է:
 Մի էլ տեսնես երկու Հայ
 Քեկերութիւն են կաղմել,
 Բաց Հաչիւներ քննելիս.
 Քրաք գլուխ են պատուել.
 Էսէնց է — մօտայ է:
 Ա. ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԳՈՐԾԵԼՈՒ ԱՏԵՆՆ Է

ԾԱՂԱՍԻԷՏ դաշտին վրայ ցօղը կը փայլի,
 Առտուան Հրաւէրն է քեզ, ո՛վ պատանի,
 Օ՛ն, չաչէ՛ ջանքովդ ոսկեղէն ժամեր,
 Գործելու տեսնն է և կուգայ գիշեր:

Տես որ մօտեցած է այդ օր Հասարակ,
Կէս օրուան յորդորն է քեզ միջհասակ.
Դեռ և տաքութիւն կայ, գործող մի՛ ձգեր,
Քանզի վարձքդ մեծ է երբոր գայ գիշեր:
Կ'երկննան շուքերը, օրն կը վախճանի,
Իրիկուան խրատն է քեզ, ո՛վ ծերունի,
Քիչ է ժամանակդ ձեռքդ չը թուլնայ
Կատարէ քու գործեր, զի գիշեր կուգայ:

ՎԱՆԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Մի ԳԵՂԵՑԻԿ պարզ գիշեր էր,
Երկինքը լի աստղերով,
Եւ լուսինը մեղմ փայլում էր
Կաթնանման իւր լոյսով:
Նա նայում էր լռիկ մնջիկ
Իրրե մի կոչս՝ դէպի Վան.
Նրա աչքին երևում էր,
Մի ցաւալի տեսարան:
Նա տեսնում էր անթիւ քիւրդեր
Բռնած սուր, թուր, հրացան՝
Կոտորում են, կողոպտում են,
Աւերում են անտէր Վան:
Եւ կարծես թէ վեր երկնքից
Խօսում էր այդ լուռ վրկան. —
«Վըրայ հասի՛ր, Հայ ազգասէր,
Ձեռքից կ'երթայ Հայաստան:»

Ս. ՍԱՓԱՐԵԱՆՅ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԿՈՏՈՐԱԾԸ

ՄԻԻՍԻԻԼՄԱՆԱՅ սէլավաքի փողն հնչեց
Ձէնն ի ձեռին ռաքի ելան ահարկու
Թուրք, Քիւրդ, Արաբ, Չաղա, Չէչէն և Չէրքէզ,
Տաճկաստանից Հայերն իսպառ ջնջելու:
Հոկտեմբերի քսաներորդ օրն նսեմ,
Յետ միջօրեայ պիղծ նեւազ ու վա՛րդից,
Խումբ խումբ կազմած սուսերամերկ զարշաղէմ
Թուրք խուժանը մղկիթներից դուրս խուժեց:

Անխղճօրէն սօռում էին անբոխից
Նազիֆ, Սաւրգ, արիք և այլք թուրքք անգութ,
Պէտք է Հայերն իսպառ ջնջել մեր հողից,
Եւ ազատուիլ կեալուրնների ջանքերից:

Մէն մի անգութ գլուխ կանգնած մի խմբի,
Յորդորում էր իւր քաջերին ժրաջան.
Ով որ ձեզնից եթէ խնայէ մի Հալի,
Է կրօնի և ազգութեան դաւաճան:

Շուկային մէջ տեսարանն էր տխրապատ.
Մի կողմից հուր, մի կողմից սուր և գնդակ
Տեղում էին Հայոց գլխին անընդհատ
Աջ ու յահեակ սիրելով զայնս նահատակ:

Չորս կողմերից կիզիչ բոցեր հրդեհի
Մառքիմների ձայնք և բոմբիւնք սաստկադին
Եւ սրերի հատ ու հարուածք ահուելի,
Անմեղ ու խեղճ կեանքերի վերջ կը տալին:

Հարիւրաւորք կիզիչ բոցի մատնուած,
Անթիւ խեղճեր գետին փռուած շնջահատ,
Եւ այլք շատեր արիւնների պլլումած,
Թշուառքն էին փախուստ տալիս ճարահատ:

Այս ամենից դո՛չ չըլլալով թուրքերը,
Չօրքերի հետ բանակ կազմած միասին,
Չորս կողմերից արշաւ տուին թաղերը,
Հայերի դէմ ճակատելով խմբովին:

Միմաքէթի, պատնէշներից անընդհատ
Կարկուտի սէս գնդակ էին տեղացնում
Պարիսպներից անթիւ զօրքերն հարադատ
Հայ քաջերի շարժումները խափանում:

Անգութների սէլավաքից ձայն խռպոտ
Եւ Քիւրդ կանանց ԼԵԼԻՆԵՐԻ գոչն ահեղ
Սառուու տալով բարձրանալին յօղն ամպոտ
Կարմիր ու սև բոցերի հետ միատեղ:

Խօսք — ՅԱՐՈՒԹԻՒՆ ԺԱՄԱԳՈՐԾԵԱՆ
Եղանակ — ՍՏԵՓԱՆ ԱԼԻՓՈՒՆԱՐԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆՈՒԹԻՒՆԸ

Ո՛հ, ԻնՑ անուշ ի՛նչ գեղեցիկ,
Մեր Հայրենեաց զեփիւտիկ,
Շնչէ զուարթ մեր սրտերուն,
Տալով աշխոյժ զօրութիւն:

Առ ինքն կոչէ զմեզ Հայեր,
Գգուել չիւր ծոց ծնելաւոր,
Պար խմբելով երթանք լեռ ձոր,
Համբոյց սիրոյ տալ մեր մօր:

Հոն պարզ վճիռ և գեղեցիկ,
Մեր Հայրենեացն ասողիկ
Հորիզոնէն արդ բարձրացած,
Կուտայ Հայոցս չոչս փառաց:

Անոր ուղղենք արդ մեր աչեր
Անով վառուինք, ո՛վ Հայեր.
Պար խմբելով երթանք լեռ ու ձոր,
Համբոյց սիրոյ տալ մեր մօր:

ՀԱՅԿԱԶՈՒՆՔ, պար բանէնք,
Թե ի թե, օ՛ն, ելնենք,
Յնծութեան ձայներով,
Եւ զուարթ երգերով:

Զի ահա ի նոր բաղդ,
Ձայն կուտայ երկինք արդ,
Ի սուրբ կոչումն ուխտենք Հաստատ
Անձնուէր գոլ պատրաստ:

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՌԱԶԲ

Ո՛հ, ԻնՑ անուշ և ինչպէս զով
Առաւօտուց փչեա, հովիկ,
Ծաղկանց վրայ գուրգուրալով
Եւ մազերուն կուսին փափկիկ:

Բայց չեա հովիկ իմ Հայրենեաց.
Գնա՛, անցիր սրտէս ի բաց:

Ո՛հ, ի՛նչ աղու և սրտազին
Ծառոց մէջէն երգես, թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի լանտառին
Ձմալեցան ի քո ձայնիկ:

Բայց չեա թռչնիկ իմ Հայրենեաց,
Գնա՛, թռիր սրտէս ի բաց:

Ո՛հ ի՛նչ, մրմունջ Հանես, վտակ,
Ականակիտ և հանդարտիկ.
Քու Հայելուջ մէջ անապակ
Նային զիրենք վարդն ու աղջիկ:

Բայց չեա վտակ իմ Հայրենեաց,
Գնա՛, հոսէ սրտէս ի բաց:

Թէպէտ թռչնիկն ու հովն Հայոց
Աւերակաց թռչին վերայ.
Թէպէտ պղտոր վտակն Հայոց
Նոճիներու մէջ կը սողայ,

Նոքա հառաչք են Հայրենեաց.
Նոքա չերթան սրտէս ի բաց:
Մ. ՊԵՇԻԿԹԱՆԼԵԱՆ

ՍԱՍՈՒՆ

ՍԱՍՈՒՆ գաւառ, Հին Հայաստան,
Համբաւ լսեց աշխարհ Համայն,
Երիտասարդք են քաջազուն,
Հայոց պարծանք միայն Սասուն:

Սասուն պարարտ հովիտներով,
Պարծի ընդ միշտ իր քաջերով,
Որք թ՛ե ուտեն կըլկըլ, կորեկ,
Խաղան ընդ սուր զիշեր ցորեկ:

Սասուն գաւառ, անտառներով,
Պարսպապատ բարձր լեռներով,
Դիմադրեց միշտ Թուրք զօրքերուն,
Հայոց մատաղ եղաւ Սասուն:

Սասուն երկիր լեռներու մէջ,
Ա՛լ սրբացաւ իւր ելեէջ,
Քարոտ, լեռնոտ ու խորտուբորտ,
Սասուն բուրէ այժմ արեան հոտ:

Սասուն երկիր չոյժ փարելի,
 Լեռներ, դաշտեր ծաղկօք են լի,
 Թէև Թաւաշին քանդեց Սասուն,
 Բիւր Հայք բաղձան սև հողերուն:

Սասուն կոտորել ետ Հրաման,
 Սալիֆատիս Համիտ Սուլթան,
 Կանայք, մանկունք և արք ինկան,
 Իբր քաւարար զոհ Հաշկական:

Յուրա դիակաց բարդեալ դէզ դէզ,
 Եւրոպացիք եկան ի տես,
 Մարտիրոսաց կարգն է Սասուն,
 Արժանացաւ սրբոց դասուն:

Աբի Գըրգօն, սուրբ Մարտիրոս,
 Ի ձեռն Թրքաց ինկաւ իբր որս,
 Գերի եղաւ անգութ Տաճկին,
 Քաջ նահատակն Հայոց աղգին:

Քաջ Գըրգօնն Հարսն էր Շաքէն,
 Որ ձեռք քաշած իւրեան կեանքէն,
 Կամաւ ձգեց զինք լեռնէն վար,
 Նահատակուիլ աղգին Համար:

Սասնոյ բնիկը բոլոր Հայ են,
 Ֆէրիզն եղաւ նոցա Կաշէն,
 Սասնոյ մէկ մաս կ'ըսուի Կէլի,
 Արին թափեց զերդ Աբէլի:

Սասնոյ Հարսեր գերի դացին,
 Մանկունք Բրդաց ձեռք մնացին,
 Սըրոյ ճարակ եղաւ Սասուն,
 Գիւղեր, արտեր, այգիք Հասուն:

Թէև ինկաւ անդէն, անոք,
 Առ Սուլթան չեաւ բնաւ բողոք,
 Գետի նման Հոսող արին,
 Գետնէն բողոք ետ Աստուծոյն:

Թէև ինկար, ո՛վ վեհ Սասուն,
 Բայց դաս տուիր գերեալ Հայուն,
 Թէ սուր ընդ սուր, բուռն ընդ բուռն,
 Բախմամբ ծագի արև մեր տան:

ՀԱՐՈՒՍ—ԱՂՔԱՏ ԿԻՆԸ

ՅՈՒՐՏԸ փչեց, ձմեռ սաստիկ,
 Ձիւնը պատեց գետինը,
 Ամենայն մարդ մտաւ իր տուն,
 Պատսպարուիլ ցրտիցը:
 Ժամի դռնում դողդողալով
 Կանգնած էր մի աղքատ կին,
 Նորա Հանդերձ պատառ պատառ,
 Չունէր շապիկ իր Հագին.
 ԱնՀամարձակ նա իր ձեռքը
 Պարզում էր անց կացողին —

«Ողորմութի՛ւն արէք, պարոն,
 Անտուն, անտէր աղքատին:»

Ձեզ քիթելիք, ասեմ ով էր
 Այս խղճալի աղքատը,
 Այն ցրտումը ոտնաբորիկ
 Կանգնած էր Ժամի դռնումը.
 Շատ Ժամանակ դեռ չէ անցել,
 Երբ նա պատուով և փառքով
 Ման էր դալիս փողոցներում
 Իր սեփական կառքերով.
 Այժմ վախով նա իր ձեռքը
 Պարզում է անց կացողին —
 «Ողորմութիւն» և այլն:

Ամենայն օր նրա դռնում
 Կանգնած էին շատ կառքեր.
 Միշտ Հացկերոյթ, ընթրիք, գինի,
 Նուազարան ու տաղեր.
 Ամենայն ոք ցանկանում էր
 Լինի նրա բարեկամ.
 Ամենայն Ժամ նրա բաց էր
 Շուալ քաակը մեծատան.
 Այժմ զրկուած ամեն բանից,
 Չունի անգամ Հացի գին —
 «Ողորմութիւն» և այլն:

Ժամի դռնում նա կանգնած է
 Աչքերը կոր, վիզը ճուկ.

Նրա նախկին բարեկամքը
Չեն ասում նրան, «խեղճուկ,
Ե՛կ դու մեր մօտ, մենք կ'ամոքենք
Գո Վրճակի դառնութիւն.
Կը թուլացնենք ճակատագրիդ
Խիստ հարուածի սաստկութիւն:»
Նա տանում էր տառապելով
Այս սոսկալի վշտերին —

«Ողորմութիւն տրէք, պարոն,
Անտուն, անտէք աղքատին:»

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՅ

(Կրնատուած)

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ

ՀԱՅՐԻԿ, Հայրիկ, քո Հայրենիք Վասպուրական մեր աշխարհ,
Վարդի փոխան քեզ փուշ բերաւ, ցաւերդ արաւ մէկ Հազար:
Մայիսն եկաւ սոխակներով վարդի թփիկ որոնեց,
Իսպառ փուշի մացառ դտաւ, լալով Հառաչ ձայն Հանեց:
Հայրիկն ասաց իմ Հայրենեաց փուշերն անուշ քան զվարդ,
Ես այն փշոց մէջէն դարձեալ կը որոնեմ սիրուն վարդ:
Այն սալբասուր փուշերն ամեն փունջ կապեցէք շարիշար,
Թողէք զլսուս պսակ կապեմ, որուն ճակատս է յօժար:
Հայրիկ, Հայրիկ, քո սուրբ ճակատդ արիւնազանդ է, ո՛հ միշտ,
Փթթեալ վարդից անվիշտ թերթեր ե՞րբ պսակեն փառօք միշտ:
Հայրիկն ասաց շատ սլաքներ կողիս միջում չամփրած կան,
Բաց Հայրենեաց բարեկամաց վէրքն ժանտոտ սիրական:
Հայրիկ, Հայրիկ, Հայու փիւնիկ, քո վէրքերուդ վերակապ,
Ո՛հ, չը կապեց քեզ Հայրենիք, որ զովանայր սրտիդ տապ:
Վասպուրական էր չճանչես քո բարերարդ աննման,
Ինչ-Հատուցումն այդչափ առնես արդար լաւ է ամեն բան:
Արիստիտէս արդար անուն մի նախանձիր կուրաբար,
Դրոշմ ազուէսն մի ընդունիր քո ճակատիդ ի կամար:
Գո լուսանքներ զոր կը ժայթքես, նոցա փոխան ներող սիրտ,
Քեզ կը մաղթէ բարօրութիւն անձնանուէր քո Հայրիկ:
Բաց և գիտցի՛ր, որչա՛փ լինին սեակոխն ազուաներ,
Ի՞նչ կարելի . . . զԱրծիւն իւր բարձր դիրքէն վայր բերել:
ՀԱՅՐԱՊԵՏ ՎԱՐԺԱՊԵՏ ԶԱՆԻԿԵԱՆ

Զ. ՄԱՍ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

✠

ՈՂԲ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Ա՛ն, Վասպուրական, տիուր Հայաստան,
Անթիւ Հերոսներ քեզ մէջ ժողվեցան.
Ահեղ կռուի մէջ այնքան դիմացան,
Ի սէր ազգութեան նահատակուեցան:

Ա՛խ բաւ է Հայեր, միշտ այսպէս գերի,
Թողնել Հայրենիք զիմել օտարին.

Օտար սիրում է մեզ իբրեւ Հիւրի,
Եւ մեր Հացն ու ջուր դարձնում է աղի:

Ա՛խ բաւ է Հայեր, ձեր անմիութիւն,
Պատիւ չի բերեր մեր Հայ ազգութեան.
Պէտք է շուտ դտնել միութեան դարման,
Որով ազատենք մեր մայր Հայաստան:

Պէտք է միանայ ամբողջ Հայաստան,
Թող տեսնէ Եւրոպ ու Ամերիկան,
Պէտք է մենք լուծենք վրէժ Հայկական,
Քանի այսպէս է Թուրքի դատաստան:

Վան փոքրիկ քաղաք իւր դառառներով,
Լեցուեցաւ դիակ Հարիւր Հազարով,
Ներկուեցան դաշտեր Հայու արիւնով,
Ձայն տուին երկինք ամպերն աստղերով:

Տեսէք Թուրք ազգը ինչքան անամօթ,
Քաշեց մեր վրայ դօրք ու թնդանօթ
Բաց երբ չողջողաց Հայկազեան սուրբեր,
Խաւարը պատեց թշնամեաց սրտեր:

Ելէ՛ք ընկերներ առնենք Հրացան,
Անգութ Թուրքերը նոր կատաղեցան.
Մեր Հայ եղբայրներ չըճապատուեցան
Եւ մեր տունները հրոյ ճարակ դարձան:

Իմ վերջին համբույրս կուտամ ձեզ Հաղեր,
Զըլլալ թէ մոռնաք դուք իմ պատուէրներ.
Եւ Հայաստանի անմեղ մանուկներ
Շուտով լուծեցէք Հայու վրէժներ:

Ս. ԺԱՄԱՌՁԵԱՆ

Սգալի երգ ի Մահուան
ՆԵՐՍԷՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆԻ

Պատրիարքին Հայոց Կոստանդնուպոլսոյ

Ա.ՀԱՄՈՏԵՅԱՆ մահուան ժամերս,
Այլ չեմ իմանար բոլոր ցաւերս.
Կը գատուիմ քեռէ, սիրուն ծաղիկս,
Բայց գաղբում չունին իմ խեղճ աչերս:

Ինչպէս պիտի գատուիմ, սաստիկ է սէրս,
Բայց օգուտ չունի, Աստուած է տէրս:

Համբերէ քիչ մը, ո՞վ մահ սոսկալի,
Ձե՞ս մեղքնար դու սիրտն իմ ցաւալի.
Համբերէ քիչ մը որ սէրս առնեմ,
Եւ աշուհեան հանդիստ քուն ընեմ:

Ինչպէս պիտի գատուիմ, սաստիկ է սէրս,
Բայց օգուտ չունի, Աստուած է տէրս:

Երբ կը մտածեմ մէկ երկու ժամէն,
Հողեր ու սրբեր զիս պիտի ծածկեն.
Ամեն կողմերս ծակեն ծակծակեն.
Իմ մատղաշ մարմինս մատաղ պիտի անեն:

Ինչպէս պիտի գատուիմ, սաստիկ է սէրս,
Բայց օգուտ չունի, Աստուած է տէրս:

Յուրա գերեզմանիս երբ որ մօտենաս
Զըլլալ որ երբէք սարսուռ մը զգաս.
Քաղցր ժպիտով երբ անունս տաս,
Անշուշտ ան ատեն զիս պիտի խղճաս:

Կը գատուիմ քեզմէ սիրուն ծաղիկս,
Բայց գաղբում չունին իմ խեղճ աչերս:

ԳԵՐԻ ՀԱՅ ԱՂԶԱՅՈՒ ՈՂԲԸ

ԱՂԲԻՒՐ, պարզի՛ր, պէկի տղին ջուր տանիմ,
Պարզի՛ր, պարզի՛ր, պէկի տղին ջուր տանիմ:
Աղբի՛ւր, գիտե՞ս քիւրտը մեզի ինչ է անում,
Մեզ ծեծում է, կողոպտում է, սպանում:
Կար ժամանակ որ մենք այսպէս խեղճ չէինք,
Մեզ պաշտպանող թաղաւորներ ունէինք:
Թաղ ու զէնքից, ազատ կեանքից զրկուեցանք,
Արինարբու, վատ թշնամույ ձեռք մատնեցանք:
Դէ՛հ, չուտ պարզի՛ր, պէկի տղին ջուր տանիմ,
Պարզի՛ր, պարզի՛ր, պէկի տղին ջուր տանիմ:
ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱԵԱՆ

ՈՂԲ ԱՆԻ ՔԱՂԱՔԻՆ

Անի քաղաքս նստեր կուլամ,
Ձի կալ ըսող՝ մի՛ լար, մի՛ լար.
Կ'ըսեն թէ, չէ՛, թող նստի լալ,
Ա՛խ ե՞րբ լսեմ՝ մի՛ լար, մի՛ լար:

Շատ ցաւերով կ'ալլիմ, տապիմ,
Չունիմ մէկ մարդ հաւատարիմ,
Որ խրդալուցս դալ մօտենալ,
Գոնէ ըսէ՝ մի՛ լար, մի՛ լար:

Ա՛յ Հայ տըղայ, խրդա ինծի,
Տէ՛ս թէ քո Անին ի՞նչպէս է:
Հերիք ես լամ, դու չը գիտե՞ս,
Ձէ՞ քո Անին չատ ափսոս է:

Ախ ու վախով օրերս անցան,
Հալէն աչքերս կուրացան,
Որը մնալն ինձ վիճակուեցաւ,
Բաղդս բնաւ զիս մոռացաւ:

Կորուսեր եմ թաղաւորներ,
Ժողովեր եմ գլխու քէօք բուեր,
Որ միշտ կ'երգեն «Անին անցաւ,
Անին անտէր աներեցաւ»:

Անին էի մարդաբընակ,
Մնացեր եմ դառն աւերակ.
Իմ լացն, իմ կոծն, իմ աղաղակ
Անտէր որբերու նմանակ:

Երբեմն էի շատ աննման,
Հայոց քաղաքն արքայական,
Այժմ աւեր, Հիմնաշատակ՝
Նստեր կուլած ես միայնակ:
Եկար, տեսար, դարձեր կ'երթաս,
Լալով կ'ըսես՝ «Բարեաւ մընաս».

Աստուած սիրես չը մոռանաս,
Մասիս սարին երբ մօտենաս՝
Ասա՛ իմ քաջ Արարատին՝
«Նստեր կուլաց ըս խեղճ Անին».
Կ'ըսես՝ ե՞րբ դաս աւետիք տաս,
Թէ՛ «Իմ Անի, Հերիք է լաս»:

(Հայ Տղամ)
Ողբերգութիւնդ Հերի՛ք, Անի,
Թըշուռացեալ դու լաս քանի՛,
Օր մը գըթած աջն Անեղին
Մարդասիրեալ՝ առ քեզ Հայի:

Գան ժողովին Հայք միաբան,
Գեղեցկանաս շատ աննման.
Հապա մի՛ լար, սիրուն Անի,
Անի՛, Անի, իմ ջա՛ն Անի:

Ա. Վ. ԱՐԱՐԱՏԵԱՆ

ՎԱՐԴԱՆԱՅ ՏԻԿՆՈՋ, ԶԱՐՈՒՀԻՈՅՆ ՈՂԲԸ

ԱՒԱՐԱՅՐԻ մէջ խելար և մոլար
Յողնած որդիս (չիմ գիրկ) ինինջ իթալթալ,
Ոսկեվար բաղդիս աչտեղ էր դադար
Ժուռ դամ և փնտռեմ ո՛հ, ալ չուենիմ կար:

Վարդա՛ն, Վարդա՛ն, ինձ սիրոյ տուր ձայն,
Ինձ որ ի ըս սէր չըջիմ լալական.

Աւա՛ղ չը լսեմ ձայնդ, հապա ո՛ւր գնամ.
Դա՛ շտ, դա՛ շտ, ասա ինձ, ո՛ւր գտնեմ ես դայն:

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱՆԵԱՆ

ՍՈՒԳ ԶՈՒՂԱՅԵՑԻՈՑ

ԱՓՍՈ՛Ս քեզ Հայոց խեղճիկ ժողովուրդ,
Յիրուցան ելաք անմեղ անխորհուրդ,
Գերի զնաման աք դէպ ՚ի Խորասան,
Քաղցած ու ծարաւ, տըկլոր թշուառական:

Խարիւր ու խաղար ցաւի դիմացաք,
Ձեր քաղցրիկ երկրէն ոտք դուրս չըղըրաք,
Խիմի ձեր խօր, մօր գերեզման թողաք,
Տըներն ու ժամերն ուրիշի տուաք:

Էս սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղըրներն,
Քաղցրիկ ջըրերն, ձեր շէն գեղերն,
Ո՞ւմն աք թողման, դուք որ գնաման աք,
Էսպէ՞ս կու լինի որ մոռանում աք:

Վախում ամ էնպէս մաքերնուցդ ընկնի,
Ինչքան որ ողջ աք մըտքերնուդ չընկնի.
Պարի ձեր որդւոց, թոռանց պատմեցէ՛ք,
Էսպէս խաչքենիք քանդած թողեցիք:

Մասիսի անունն, Նոյալ տապանի,
Արարատ դաշտի, սուրբ էջմիածնի,
Մեր Խոր Վիրապի, սուրբ Գեղարդ, Մուղնի,
Չմոռանաք մինչ ՚ի օրն դատաստանի:

Աչքըս կուրանար, չըլինքս բըթէր,
Խեղճ Հայաստան, քեզ էսպէս չխտանէր,
Թէ մեռած էի, ինձ երանի՛ էր,
Քան թէ կենդանի՝ աչքըս բաց տեսնէր:

ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԶՈՒՂԱՅԵՑԻ

ԱՐՏԱԽԱԶԳԻ ԹԱԳԱԻՈՐ ՄԱՍԻՍԻ ՎԵՀԻՆ ՄԵԾ

ԳԱՐՈՒՆՆ էր կենացս դեռ, Հեծայ ՚ի սեաւն իմ վեհ,
Երկինք ինձ նայեր հաշտ. Անցայ լուրջ մարգերէ,
Ինձի համար ձոր, լեռ, Որսալ ՚ի Գինայ գեհ,
Կ'ծաղիկեր և դալար դաշտ: Յիւ և պարարտ երէ:
Թագն էր զարդ իմ վարսիս, Ողջոյն լերինք ու ձորք
Քաջաց մէջ էի պերճ. Ողջոյն տուին ծառեր.
Շուտ զիս զրկեց Մասիս, Անշունչ նիւթերն բոլոր,
Փառքիս վաղ հասաւ վերջ: Լեզու էին առեր:

Բարէ՛, ջանկարծ կասեաց,
Ոտք իմ աշխուժ սեռոյս,
Կալան զիս քաջք Մասեաց,
Տարան ի վիհն անլոյս:
Փախաւ, թըռաւ արեւս,
Ողբա՛ զիս, Սաթենիկ-
Առ իմ վերջին բարեւս,
Ազնիւ իմ Հայրենիք:
Ինչո՞ւ բորբո մարդիկ
Ինծի դէմ են ելեր-
Ինչո՞ւ աշարէս սաստիկ
Կ'գողան մըրձեր, սալեր:

Անդերծ եմ իմ կապէս,
Ի զուր Ազգըս կը խորհի-
Կըրնա՞ց Հէք մ'ինծի պէս,
Վախճան տալ աշխարհի:
Անէծք կը կապեն զիս,
Շընիկս, զուր կը մաշեն
Ահապ, գանուր վըղիս
Կապեց Հայրս Արտաշէս:
Խիստ, խիստ են Հօր մ'անէծք,
Դառն են և ահապին-
Անով կ'ըլլան, ո՛ր մեծք,
Ո՛չ ինչ փառք ձեր թագին:
Ն. ԶՕՀՐԱՊԵԱՆ

Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ ԶԷՅԹՈՒՆՅԻ ՊԱՏԱՆԻՈՅ

ԴՈՒ գո՞վ խնդրես մայր իմ անուշ,
Եկ մի՛ դողար, մօտեցիր Հօս-
Անլաց աչօք զիտէ գորգիդ,
Ու իւր վէրքերն արիւնահոս-
Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:
Ինչպէս երբեմն օրրանիս մէջ
Կահուղ ձեռամբ փաշիպալուով,
Մանկիկ մարմնոցս Հանդիստ տալիւ,
Իբրեւ Հրեշտակ նուագելով-
Զիս Հանդէպուր ի Հող, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:
«Նորեկ որդւոյս կենացն արեւ
Ձեզի Համար փալլի Հայեր-»
Այսպէս չաչնժամ դու երգէիր
Օրորոցիս նստեալ քովեր-
Անոնց Համար չիջաւ, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:
Կարմիր փալլակը ցալտեն վէրքէս,
Սակաչն մայր իմ նաչէ չորս զիս,
Զարիւնը ուղտ թիւրքերըն տես,
Հաղարներով փռուած դետին-

Կերաւ զանոնք սուր մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:
Ինչպէս վիշապ մըռնչելով,
Յանկարծ մեր վրայ չարձակեցան,
Յնցեց Զէյթուն՝ զլուխն ժաշուտ,
Իւր վհից մէջ թօթափեցան-
Կարմիր ներկաւ քորք մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:
Ու ծափ զարկին մեր Հարց ըստուերք,
Զի չէ մեռած Հաչոցս կրակ,
Ու ցնծացին աչնչափ դռներ,
Զի լուծաւ վրէժ չարեան վտակ-
Խնդաց Մասիս, մայր իմ և դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:
Վերջին Համբոյր տամ քեզ մայրիկ,
Հատուցանես զաչն սիրուհւոյս,
Վերջին անգամ դրկեմ մեր Հող,
Ոյր արդ իջնեմ ի ծոցն անլոյս-
Խաչ մի տնկէ վրաս, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:
Մ. ՊԵՇԻԿՍԱՆԼԵԱՆ

ՏԱՐԱԳԻՐԸ

ԸՆԴ ԱՍՏԵՂՕՔ օտար ափանց
Տարագրելոյս չի՛ք բերկրանք,
Լըքեալ Հողւոյս, լոյս Հայրենեաց,
Դո՛ւ ես միակ ափովանք:
Օտար առողեր լոյս չունին,
Օտար երկինք ինձ մըթին:
Օտար բոյսեր դառն ու անհամ,
Զրբեր պըղտոր ու լեղի,
Դաշտք, անապատք, Հովիտք, արտեր
Ու պարտէզներն անբերրի:
Օտար ծառեր չուք չունին,
Օտար ծաղիկք Հոտ չունին:
Օտար երկիր երջանկաբեր՝
Ծանր ալդ պաշման ինձ Համար-

Զիւն ճրմեա են իր դարուններ ,

Զունի երբէք ինձ ամառ :

Օտար երկինք ամպոտ են ,

Օտար սրբաւեր անգութ են :

Օտար թէն չընչեմ ես օդ ,

Յաւօք սաՀին իմ օրեր ,

Քեզ , Հայաստան սիրակարօտ

Սիրտս համայն քեզ նուէր :

Օտարութիւն , դու փուշ ես ,

Բայց Հայրենիք , դու վարդ ես :

ԱԻԱԶ ԱՂԲԻԻԻԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԶԵՆ

(Մշեցոց իսկական Հնչումը գտնելու համար բոլոր
եք ին Հնչելու է. աշպէս, հեա - Հիւս, մեզ -միեզ, են.

ԸՆՅԱԻ տարին , Հայոցս էլ փառք ընցաւ հեա ,

Դրախտի սարէն դարուն չեաին բարե ետ .

Կտրիճքն առան զէնքեր , իջան տակ Հողին ,

Վա՛յ մեր գլխին , սև մուր էկաւ էն օրին :

Հայու աչքեր թող մեզ լան ,

Ա՛խ , մեզ լան , վա՛խ , մեզ լան :

Հայերս գերի եղանք բաղդին անողոք ,
Աստուած , Հրեշտակ , մարդ չլսեց մեր բողոք .

Մըր լալերու ձէն ծածկուաւ Տարնօց տակ ,

Մշու դաշտեր պահեն սրտիցս հառաչանք :

Հայու աշուղք թող մեզ լան ,

Ա՛խ , մեզ լան , վա՛խ , մեզ լան :

Մըր աշխրհի քակվուկ չէնքերու ներքե
Նստուկ մամ , պապ , ձժեր մանցին անարե .

Նօթի , տկող , ա՛խ , չկայ տէր տիրական ,

Անգութ քրդի դուժին եղած ենք խուրպան :

Ղարխալ ախբերք թող մեզ լան ,

Ա՛խ , մեզ լան , վա՛խ , մեզ լան :

Մատղաշ աղջիկ ու հարս հալաւ մի չունի ,

Որ իր մարմին անօրէնին դէմ ծածկի .

Էնպէս դրած ձեռքերն աչից ամչկոտ ,

Գութի , սիրոց , ողորմութեան է կարօտ :

Հայ աղջիկներ թող մեզ լան ,

Ա՛խ , մեզ լան , վա՛խ , մեզ լան :

Կեցէ՛ք , Մշու դաշտի քամիք , քիչ մ՛ կեցէ՛ք ,

Մըր ողբաձէն քարեն էլ ձեր հետ տարէք .

Ու երբ ընցնիք Սահմանադրութեան կամարից ,

Հոնկաց լսէք դարիպ մըր Հայ ախբերից :

Մըր արտասուք սրբեն թող մըր աշխրհուց ,

Կ՛ընցնի տարին էլ չանք , էլ չլանք :

Մայիս 24 , 1874

Ի ԳԻՄԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԹԵՊԷՏ ես մեծ տան նշան եմ Որդիքս ինձմէ հեռացուցին

Ամենից աղնիւ իշխան եմ , Այժմ ալլոց ապաստան եմ :

Ոչ մեռած եմ , ոչ կենդան եմ , Զեռումս կոտորուեց սուրս ,

Օգնական չունեմ , ի՞նչ անեմ : Վնասուեցաւ առուտուրս ,

Ո՛վ անցաւոր , ինձի նաչիր , Լեղի դարձաւ քաղցր ջուրս ,

Անբախտութեանս խնայիր , Բաս ես ո՞նց չը Հողուց Հանեմ

Ի՞նչ կուլինէր փոքր մնայիր , Առաջ կէի անձամբ անձին ,

Իմանայիր թէ ի՛նչ բան եմ : Այժմ կարօտ ալլոց գանձին ,

Թ՛չնամիրս մարդս մեռուցին ՍԷՅԵԱԴ , քեզ ասեմ առանձին

Մէջքս ծանրութեամբ կեռուցին Այրիացեալ Հայաստանն եմ :

ՍՈՒԳ ՄՕՐՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԻՄ ՍԻՐԵԼԻ դաւակունքս Եւ կարօտոյն իմ որդեկաց

Կը թափառին օտար աշխարհ , Պիտի իջնեմ սև գերեզման :

Ես ո՞ւր դիմեմ , ո՞ւր փնտռեմ , Եկաչք , են :

Կը ծառայեն ալլոց խոնարհ : Եւ դո՛ւ , հովիւ թափառակ

Եկա՛չք , որդեակք իմ , Կ՛երգես տխուր ի մէջ Հովտաց

Զեր մօրն աչցելութեան Եկ արտասուենք թանկ կորուստն

Դարեր անցան , լուր մը չառի , Տխուր մահը մեր որդեկաց :

Իմ քաջերս մեռան , կորան , Եկաչք , են :

Կուլամ , արիւնս կը սառի , Իսկ՞ դու , կուռնի իմ Հայրենեաց

Մէկը չունիմ տալ ինձ դարման : Գնա՛ հեռու , աչքէս ի բաց ,

Եկաչք , են : Յետին ողջոյն տա՛ր դաւակաց

Արիւնս ցամքած , սիրտս մաշած Զի կեանքիս մէջ յոյսս է մեռած .

Դէմքս է տխուր մինչ չաւիտեան Եկաչք , են :

ԼԱՅԷ՛Ք պատանիք և կուսանք Հայոց,
Սո՛ւզ անուռ Մասիս և Հայոց լեռներ.
Ձի ահա մահուան անդուժ գերանդի,
Որբացեալ թողու գաշխարհ Հայրենի . . .
Հայոց աշխարհիս քաջ բազկաւ որդին,
Փռուած է Մասեաց շուքերուն ներքեւ.
Շնչասպառ լանջացն հառաչանք չետին,
Գոչէ նա Աստուած, կրօնք ու Հայրենիք:

Իր սրտահառաչ ձայնից գուգակցին,
Ահագնատեսիլ դրօշակակիրներ,
Սպիտակազգեաց չորս դին գեղերին,
Գերեզմաններէն հազար դիւցազունք . . .
Եւ արիւն լուալ մարմնոցն առնթեր,
Սե քօղն երեսին լուռ մոռնջ շուարած.
Ձեռն ի ծնօթ Ղեռնդ դադանի կ'արտասուէր,
Կը ճմլի Յովսէփի ցաւօք տրտմազգած:

Արեւն ու լուսին ամպի տակ փակուած,
Լուսոյ ճակատին ի մութ են ծածկեր.
Մասեաց արձագանք կոծեն տրտմազին,
Սիրուն Հայաստան սեւեր է հագած:

Հրեշտակն Հայրենեաց տրտում թախճազին
Եկած է ալսօք Հայոց գերեզման.

Արիւն արցունքով տապաններ ցօղէ,
Վարդանայ բերնէն խօսք մը կսպասէ:

ԱՐԲԱՀԱՄ Յ. ԱՅՎԱԶԵԱՆ
(Կրնատուած)

ԱՅՐԻՒՆ ՈՂԲԸ

ԱՐՇԱԼՈՅԱԸ նորէն բացուաւ Ա՛խ սիրուն ձի դու ինձ ասա,
Ամպու զամպէն ձօն կուգայ, Ո՞ր տեղ թողիր իմ եարը,
Ալ ձին եկաւ անտէր եկաւ, Ո՞ր ձորի մէջ ո՞ր քարի տակ,
Ա՛խ, իմ եարը տուն չեկաւ: Անտէր թողիր իմ եարը:

Լոյսը բացուաւ, դուռը բացուաւ, Ամպեր եկան մութը պատեց,
Ալ ձին քրտնած ներս ինկաւ, Մինակ նստած կուլած ես,
Միրուն կրծքին վէրք ստացած, Սիրելիիս, կորած եարիս,
Արիւն թաթախ ներս ինկաւ: Սուգ ու շիւաճ կ'անեմ ես:

ԾԻԾԵՆՆԱ՛Կ, ծիծեռնա՛կ, Միշտ լայով, ողբալով՝
Դո՛ւ, դարնան սիրուն թռչնակ, Կեանքս մաշուել, եղել է կէս:
Դէպի ո՞ւր, ինձ ասա՛, Ինձ համար ցերեկը
Թըռչում ես ալգպէս արագ. Մութ է թուում արեգը,
Ա՛խ թըռի՛ր, ծիծեռնա՛կ, Գիշերը թաց աչքիս
Ծընած տեղս — Աշտարակ. Բունը մօտս չէ գալիս:

Անդ չինիր քո բոցը Ասի՛ր, որ չի բացուած
Հայրենի կըտուրի տակ: Թառամեցայ միացած,
Անդ հեռու՝ արևոր Ես ծաղիկ գեղեցիկ՝
Հայր ունիմ ես սգաւոր, Հայրենի Հողից զրկած:

Որ միակ իւր որդւոցն Շուտով սառ Հողի տակ
Սպասում է օրէ օր: Կը պառկեմ ալստեղ մենակ,
Երբ տեսնես դու նորա՝ Թողնելով Հօրս սրտում
Ինձնից շատ բարեւ արա՛: Միշտ ցաւալի չիշատակ:

Ասա՛, թող նստի լայ Դէ՛հ, սիրուն ծիծեռնա՛կ,
Իր անբաղդ որդւոցն վերայ: Հեռացի՛ր, դնա՛ արագ,
Դու պատմէ՛, թէ ինչպէս Դէպի Հայոց երկիր,
Աստ անտէր ու խեղճ եմ ես, Ծընած տեղս — Աշտարակ:

Գ. Ա. ԴՈՒՈՒՆԵԱՆ

ՂԱՐԻՊ ՂՈՒՐՊԵԹ

ԿՈՒՈՒՆԿ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
Կռունկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս.
Մի՛ վաղեր, երամիդ շուտով կը հասնիս,
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս:

Թողեր եմ լեկեր միւլքերս ու ալգիս,
Քանի որ ա՛խ կ'անեմ կը քաղուի Հողիս.
Կռո՛ւնկ, պահ մը կացի՛ր, ձայնիկդ ի Հողիս.
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս:

Քեզ խաբար հարցնողին չես տանիր տալապ,
Ձայնիկդ անուշ կուգայ քան զջրի տօլապ.
Կռո՛ւնկ, Պաղտատ իջնուս կամ թէ ի Հալապ,
Կռո՛ւնկ, մե աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս:

Մտերնին կամեցաւ ելանք զնացինք,
Այս սուտ աստուորն դարդերն իմացանք,
Աղուհացիկը մարդկանց կարօտ մնացանք.
Կոռ'ւնկ, մեր աշխարհէն խարրիկ մը չունի՞ս :

Աստուորն բաներն կամաց կամաց է -
Միթէ Աստուած լսէ դռներն բացցէ -
Ղարիպի սիրտն է սուգ, աչերն ի լաց է,
Կոռ'ւնկ, մեր աշխարհէն խարրիկ մը չունի՞ս :

Աստուած քեզնէ խնդրեմ մուրվէթ ու քերամ,
Ղարիպի սիրտն է խոց, ճիւղէն է վէրամ -
Կերած Հացն է լեղի ու ջուրն է Հարամ,
Կոռ'ւնկ, մեր աշխարհէն խարրիկ մը չունի՞ս :

Ոչ ըզլուր օրն գիտեմ, ոչ ըզկիրակին,
Զարկած է ինձ շամիրուն, բռնած կրակին -
Այրիւն չեմ հոգար, զարիւկ կը մեռնիմ -
Կոռ'ւնկ, մեր աշխարհէն խարրիկ մը չունի՞ս :

Պաղտատու կուգաս, կ'երթաս ի Մէհրատ,
Թղթիկ մը գրեր եմ, տամ քեզ ամանաթ,
Աստուած թող վրկաչ լինի քու վըրադ,
Տարեալ Հասուացես զաչն իմ սիրելեաց :

Գրեր եմ մէջ թղթիւ թէ Հոս մնացի
Օրիկ մը օրանց զաչերս չբացի,
Սիրելիք ձեզնէ կարօտ մնացի,
Կոռ'ւնկ, մեր աշխարհէն խարրիկ մը չունի՞ս :

Աչունն է մօտեցեր, դնալու ես թէպտիր,
Երամ ես ժողվեր Հազարներ ու բիւր,
Ինձ պատասխան չտուիր, ելար զնացիր -
Կոռ'ւնկ, մեր աշխարհէն զնա Հեռացիր :

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒԶԱԿ

ՈՂԲ ԼԵՒՈՆ Զ. ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԱՅՈՅ

ՄՏԱԻ ԱՐԵԻ Երջանկութեանս Ես իմ ցաւերս, ես իմ վիշտերս
Գլխուս պատեց մութ, (կրկ.) Որոյ ես պատմեմ (կրկ.)
Քաղցրիկ օրեր պաճառ ժամեր Աշխարհ ինձի աւերակ է,
Ինչպէս անցան չուտ. (կրկ.) Մինչ գահէս զուրկ եմ: (կրկ.)

Գիշեր ցորեկ կը Հառաչեմ, Ո՛հ, Հաչրենիք իմ անտէրունջ,
Զկաչ ինչ օգուտ: (կրկ.) Յաւոց մէջ Հեծէ, (կրկ.)

Միթէ սիրտս ապառաժ է, Մէր Կիլիկիոյ անտէր դահուս,
Որ Հառաչէ. (կրկ.) Լալով կոչէ գիւ. (կրկ.)
Իմ Հաչրենի պալատ գինուր, Եզրպտացիք ազգ խոժաղուժ,
Ինչպէս չչիչեմ: (կրկ.) Քանդեն զՀաչրենիք: (կրկ.)
Ես իմ ցաւերս, ես իմ վիշտերս, Ես իմ ցաւերս, ես իմ վիշտերս,
Որոյ ես պատմեմ (կրկ.) Որոյ ես պատմեմ.
Աշխարհ ինձի աւերակ է, Փարիզ քեզ պատմեմ:
Մինչ գահէս զուրկ եմ: (կրկ.) Դու ես ինձի աւերակ ես.
Ամիսս է դար, օրս տարի, Մինչ գահէս զուրկ եմ,
Ո՛հ, ժամերս ամիս. (կրկ.) Մինչ թագէս զուրկ եմ:

ԿՈՒՆԿ

ԿԱՆԶԻ՛, ԿՈՒՆԿ, ԿԱՆԶԻ՛,	ԿԱՆԶԻ՛, ԿՈՒՆԿ, ԿԱՆԶԻ՛,
Տակըդ կանաչ է,	Քանի դարուն է.
Աշխըքին արեգակը	Ղարիբներուն սիրտը
Ինձի դուժան է:	Գունդ-գունդ արուն է:
ԿԱՆԶԻ՛, ԿՈՒՆԿ, ԿԱՆԶԻ՛,	ԿՈՒՆԿ, Ո՛ԼՍԽԻԳ ԿՈՒԳԱՍ.
Զէնըդ բարակ է.	Բարձր լեռներէն.
Քու անուշ խաղըդ	ԿՈՒՆԿ, Եղած տեղըդ
Ինձի դարձան է:	Զալիր չիճան է:

ՕՐԱԼ

ՈՂԲ ՀԱՅ ՊԱՏԱՆԻՈՅ

ՆՈՒԻՐԱԳՈՐԾ է Հաչրենիք Հէգ Հայուն,
Զոր քանդեցին ժանտ մեքենայքն անցելոյն,
Հին դարուց մէջ ծանօթ է մեր ազգութիւն,
Մեծ Հեղեղներ ցրուեցին մեր միութիւն:

Հայ գաւաղ մ'եմ ապրիմ ցաւով,
Ես պանդուխտ մ'եմ խիստ կարօտով:
Մինչ ցլամպս բարձրացած է Հէգ Հայուն,
Հայ անունը սարսափ կ'ազդէր դարերուն:
Անցան փառքեր փոփոխութեամբ շատ անհուն,
Հայ անունը Հռչակուեցաւ վատ անուն:
Հայ գաւաղ մ'եմ խեղճ անտէրունջ,
Միշտ կարտասուեմ լոխի և մունջ:

Հայաստանն է դժբաղդ Հայուն օրօքան,
Հոն փալեցուց նա իւր ողին արութեան,
Արդ չունի սիրտ, ուժեղ թիկունք և սրունք,
Զի խեցաւ իւր արմատէն խիստ խորունկ:

Հաչ դաւակ մ'եմ հեռի չոչսէս,
Սրտս հեռի եմ Հաչրենիքէս:
Կենդանաբար հող, ջուր, օդ, բերք Հաչրենեաց,
Օր, կեանք տուին անմահ քաջաց դիւցազանց,
Ո՛հ, չեն կամիր իրենց բարիք օտարին,
Կ'ուզեն պահել զայն Հաչ թշուառ դաւակին:

Հաչ դաւակ մ'եմ կարօտակէզ,
Ես չուչան մ'եմ արեակէզ:
Հաչք կը չարին օտար ազդի և երկրի,
Օտար լեզուի, օտար կրօնի և բարքի,
Ասդ անդ ցրուեալ թափառական կը չըջին,
Զլսելով մեր Հաչրենեաց մօր ձայնին:
Հաչ դաւակ մ'եմ անօդնական,
Մ'ոլորած մ'եմ աստանդական:

ՊԱՆԴՈՒԽՏԸ

ՕՏԱՐ աստեղց տակ կը հեծէ պանդուխտը,
Երկինք օտար, երկիր օտար, ինք թշուառ.
Աւա՛ղ, աւա՛ղ, աւա՛ղ, ինք թշուառ,
Սիրուն Հաչրենիք, անուշ Հաչրենիք,
Սիրտս և հոգիս քեզ կարօտին Հաչրենիք:
Հացն ազի, ջուրն անհամ, պալատն իրեն է դժոխք
Զի սիրելիք և բարեկամք չկան հոն.

Աւա՛ղ, ևայլն:
Զմեռն էանց, դարուն ժպտի սիրադէմ,
Բաց պանդխտի չին վիշտերը միշտ հեռն են.

Աւա՛ղ, ևայլն:
Ծաղիկունք փթթին, սոխակն երգէ, ինք կ'ողբայ
Իր վշտալի սև սև օրերն և ժամերն.

Աւա՛ղ, աւա՛ղ, աւա՛ղ, և ժամերն,
Սիրուն Հաչրենիք, անուշ Հաչրենիք,
Սիրտս և հոգիս քեզ կարօտին Հաչրենիք:
Բաղէշ, 1880 Գ. ԼՈՅՍ-ՊԱՐՈՆԵԱՆ

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆ ԱՌ ԾԻԾԵՌՆԱԿ

Ով ԾԻԾԵՌՆԱԿ վարանած թռչնիկ,
Ի՛նչ տըխրագին ձայնիւ
Կ'եղանակես մօտ իմ բանտին.
Մի՞թէ վարութանդ սիրուն
Հոս միայնա՞կ թողուց զքեզ,
Եւ դուն անմխիթար կը հեծե՞ծես,
Ո՛հ, լաց ուրեմն ինձի պէս:
Բաց երանի՛, քեզ բիւր երանի՛,
Կրնաս թռչիլ՝ թեթև
Թեոցդ ի ծալր ընդ սար ու ձոր,
Իսկ հոս՝ արեւուն նշույն աղօտ
Մութ բանտիս է անթափանց,
Եւ ոչ մեղմ հովիկ մ'ալ կը փչէ,
Որ տանի ձայնն իմ սիրելեաց:
Գէթ դուն զնա՛ դրտնել սիրելիս,
Սըլացիր արագ, սահաչն
Դարձի՛ր նորէն մօտ չուառիս,
Ու հոս հանդէ՛ս աչս իրիկուն,
Լեր դու վըկաչ տըխուր մահուանս,
Եւ չիրմիս վրայ ճըւճալով՝
Գէթ դու չիչէ դիս անմոռաց:

ԳՐՕՍՍԻ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Ո՛ՒՅ, Ո՛ՒՅ, մայրի՛կ, նաչի՛ր նրանց
Փոթորկալից ամպերի պէս
Պմբեր կաղմեն, ու գալիս են
Արիւնհարբու գալլերի պէս:

Աւա՛ղ, մայրի՛կ, ինչո՞ւ աչքալէս
Տխրամած է միշտ քու դէմքը,
Նաչիր շուրջդ, ո՛հ, շուտ արա՛,
Ահա կուգայ վայրագ Թուրքը:

Աւա՛ղ, մայրիկ, տե՛ս Քիւրդ կանաչք,
Զինուած են բազ ու բրիչով,

Լըլի կանչում սիրտ են առնում՝
Առասպելեալ պիղծ շարա'թով :

Երիտասարդ քոչորս մայրիկ
Ինչո՞ւ տարան վատ քրդերը .
Է՞ր զրկեցին մեզ նրանից ,
Այդ մարդակեր դադանները :

Տե՛ս , տե՛ս , մայրիկ իմ եղբայր ,
Ինկած Գրդի ոտքի տակին ,
Թաւալում է արիւն լուս
Եւ լալիս է ո՛հ տրտմադին :

Նաչի՛ր , աչն կողմ , ազնիւ մայրիկ ,
Իմ հայրիկս գետին փռուած .
Անդուժ Թուրքը իւր նիզակը
Նրա կշտին ուժով է մխած :

Ա՛խ , ո՛ւշ , մայրի՛կ , ահա եկան ,
Նաե գերի քեզ տանելու
Քեզ խլելով անուշ մայրիկ
Խեղճուկս ալ որբ թողնելու :

Ո՞ւր , ո՞ւր , մայրիկ է՞ր ես գնում
Ձէ՞ որ ես շատ շատ սղտիկ եմ
Դու գնալով ազնիւ մայրիկ
Իսպառ ե ես կը կորնչիմ :

Չորս տարեկան մի աղջիկ եմ ,
Անդուժը թող գլխա՛յ ինձի .
Մի՛ , մի՛ , մայրս մի՛ սպաննէք ,
Խեղճ ե որբ մի՛ թողուք մեզի :

Մայրը դարձաւ արտասուալից
Աչքերովը ո՛հ տրտմադին
Չորս հինգ բառով իւր վիճակը
Յալանեց անտէր որբ դաւիին :

Մի՛ լար , հո՛գիս , ինձ տանում են ,
Հաչ եղբայրդ մի օր դալով
Անօրէնէն վրիժառութեամբ ,
Քեզ կ'ազատեն վեհ քաջութեամբ :

ԱՐՕՐՆ ՈՒ ՏԱՏՐԱԿ

(Կովիտաս Վարդապետի Հաւաքածոյներէն)

ԱՐՕՐՆ ասաց տատրակ հաւքուն ,
« Ինչի՞ կուշաս կուց կուց արիւն ,
Երթալ լըցուի բարակ առուն » :

Տատրակն ասաց արօր հաւքուն ,
« Գնաց դարուն , եկաւ աշուն ,
Կըտրաւ խոտիկ ծաղիկներուն ,
Կըտրաւ ձէնիկ կաքաներուն .
Էնքան պիտի լամ երերուն ,
Արիւն կաթէ իմ աչքերուն , —
Ես ի՞նչ անեմ իմ ձագերուն » :

Ասաց , « Դու մի լա էս աշուն ,
Ձէ՞ վաղ կուգալ բարի դարուն ,
Լոյս կը բացուի վեր աշխարհուն ,
Դուռ կը բացուի խեղճիկներուն .
Ես քեզ կ'առնեմ իմ թևքերուն ,
Թընեմ բարձրիկ վեր ծառերուն ,
Տանեմ , հանեմ վեր սարերուն ,
Բուն կը դընեմ մէջ քարերուն ,
Տուն կը շինեմ մէջ դաղերուն ,
Երթիք բանամ դէմ հով քամուն ,
Թոնիր թաղեմ մէջ ալրերուն ,
Ծուխ կը հանեմ հետ ամպերուն , —
Մեր ցաւ կը տանք հարաւ քամուն :

Գնաց աշուն , եկաւ դարուն ,
Կաթէր ջրիկ աղբիւրներուն ,
Երթար , լըցուէր բարակ առուն .
Աղբրանց-առուն մէջ քարերուն ,
Դեղին սուսուն վեր սարերուն ,
Փունջ մանուշակ մէջ ձորերուն ,
Կանաչ կարմիր դոյն դոյն ծաղկունք ,
Դաշտերն ամեն էրունք , թրուունք .
Ձէնիկ կուգալ դառնիկ , մաքուն , —
Մեր ապրելիք վեր Աստըծուն :

ԵՐԳ ՊԱՆԴԻՏԻ

ՕՏԱՐ երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,
Տուն Հայրենիք, ես չիշելով կ'արտասուեմ:
Ձկան ծնողք, չկան որդիք, քոյր եղբայր,
Ձիք ամուսին, որով ցաւերս մեղմանայր:
Օտար երկիր, արեւ, աստղեր և լուսին
Թէեւ պաշտօն, ինձի խաւար կը թուին:
Բնակարանս՝ տխուր պանդուխտ օտարաց,
Օգոստոս, ջուրս օտար, օտար Հաց:
Ո՞ւր է Հայրս, ո՞ւր է մայրս քաղցրանուն,
Ո՞ւր դաւաճունքս, ո՞ւր սիրելիքս սիրասուն:
Սակաջն ունիմ քովս Յիսուս, փրկէ զիս,
Նա օտար չէ, Նա իմս է, սիրէ զիս:

ՈՂԲ ՀԱՅՈՐԴԻՈՅՆ

ՄԱՅՐ մը ունէի ես միայն,	Իմ Հայաստանն ալ չկայ
Ան ալ գնաց գիրկ մահուան	Այլ գերեզման սե խաւար:
Անմիտութար թողուց զիս,	Շղթայ կապած իմ վզին
Գերեզմանաց պաշտպան:	Գերի տարին ցաւազին.
Հայրենիք մը ունէի,	Կ'ուզէն պաշտել տալ ինձի
Յետ Աստուծոյ սիրելի,	Օտար մարդուն հող 'ւ ել կիւնք:
Այն ալ իւր ճոխ փառքերէն,	Աւերակներն ես կ'ուզեմ
Ձեռք ինձ սե չղթայ մը:	Հայաստանի տխրադէմ,
Ես որ չառի ձեռքս սուր,	Որ Հոն լամ իմ Հայրենիք
Ինչպէս կրեմ վիզս անուր.	Մինչ ողջունեմ մահուան սեմ:
Պարսիկ քակէ աչս չղթայն	Ո՛հ, անոնք սե թող ըլլան,
Ձիս մօրս Հետ հողին տուր:	Ձայնս կը սիրեմ լաւիտեան
Ամեն դիէն սե խուժան	Ձի երբ իմ Հայրս մեռաւ,
Կը գիմեն դէպ Հայաստան.	Ըսաւ սիրէ Հայաստան:
Հայք վիրաւոր կը հեռն	Պիտի սիրեմ զանի ես,
Պալատ և հիւղ կը միան:	Յ'յետին շունջ իմ սրտիս,
Ձկայ հուժկու Հայ գինուոր,	Մինչ ժպտի իմ Հայաստան,
Ձը փայլեցաւ սուրն անոր.	Դառնայ ծաղկանց բուրաստան:
Ձիք աղօթող քահանայք,	Թէեւ անկեալ Հայաստան,
Եւ չիք տաճար փառաւոր:	Պիտի կանգնի հուսկ հապաջն,
Սուղ է պատեր ամեն վայր	Երբոր Հայք միարան,
Աստղերն անգամ չեն իսկ վառԳնան	Կանգնեն Հայաստան:

Է ՄԱՍ

ՄԵՆԿԱԿԱՆ ԵՐԳԻՐ



ԱՅՅԵԱՄ

Անհոգ ես, չես գիտեր ինչ կայ քո մասին.
Պարտում են քո խեղճ անձի վնասին
Գամբռներով բարակներով, միասին.
Փախիր, աչծեամ, փախիր, որսկանն է գալիս.
Ձագուկներդ տխուր, լալիս են լալիս:

Որսկանը ճրագով քեզի ման կուգայ,
Կ'ուզէ ձեռքերը արիւնովդ լուսայ.
Խղճալի քո տղաք սար ու ձոր կուլան
Փախիր աչծեամ, փախիր, Լալին:

Որսկանը գութ չունի, կ'անէ կրակը,
Կամ քեզի կ'սպաննէ կամ քո գաւակը,
Ի դուր: չ'անցնիր Հրացանի դնակը:
Փախիր աչծեամ, փախիր, Լալին:

Ձորեր մի մտներ, վտանգաւոր է.
Որսկան ման կուգայ աչտեղ, սովոր է,
Բարաչրից խփելով քեզ կը գլորէ:
Փախիր աչծեամ, փախիր Լալին:

Դաշտումը ման մի դար, թէ մտածես լաւ,
Քեզ կը վիրաւորեն կ'ստանաւ մեծ ցաւ.
Դուրս մի ելլեր դու խիտ անտառից բնաւ:
Փախիր աչծեամ, փախիր, որսկանն է գալիս.
Ձագուկներդ տխուր, լալիս են լալիս:

ՋԻԻԱՆ

ԵՐԳ ՄԵԾԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ ՈՐԴԻՈՅ ՄԱԳՆՈՍԻ

ԱՌՆԵՄ գէնքերս, իջնեմ ի ուղմ,
Ձարնեմ ջնջեմ տամ պատերազմ.
Խոլ Պարսիկներ թո'ղ արդ տեսնեն,
Թէ Հայք ինչպէ՞ս միշտ լաղթող են:

Կազմեմ զունդերս ելլեմ Հանդէս,
 Իմ քաջերոյս իջնեմ ի տես,
 Ի՞նչու մնան պիղծ Պարսիկներ,
 Մինչդեռ ապրին մանկիկ Հայեր:
 Առնեմ վրէժ մեր ոսոխէն,
 Հանեմ պիղծ չունջ նորա սրտէն,
 Բաւ ապրեցաւ վատն աշխարհի
 Թող սատակի, Թող ջնջուի:
 Առնեմ նետերս լարեմ աղեղս,
 Մխեմ տէգս լուծեմ վրէժս,
 Թող փշրի թշնամուցն դանկ,
 Հայ մանկուտն ոտքերուն տակ:
 Ես միշտ Հայ եմ, Հայկայ զաւակ,
 Ի՞նչու մնամ թշնամուցն տակ,
 Իմ անունս պէտք է փայլի,
 Մէջ դիւցազանց Հայ աշխարհի:
 Քրիստոնեայս զինուոր Փրկչի,
 Ի՞նչու անունս կորնչի.
 Թող կործանի Հեթանոսը,
 Խուժան Պարսիկ մեր ոսոխը:
 Ես դիւցազնի մ'եմ զաւակը,
 Քաջ վարդանայ Հարազատը,
 Մնա՛ք բարեաւ իմ Հայրենիք,
 Երթամ ջնջել անկրօն Պարսիկ:
 ՍԻՄՕՆ ՀԷՔԻՄԵԱՆ

1879, Տիգրանակերտ

ՆՈՐ ՏԱՐԻ

ԲԱՐՈՎ եկար Նոր Տարի,
 Գալուստդ ըլլայ բարի,
 Տէր մեր Աստուած Բարերար,
 Քեզ վերօրհնեմք անդադար,
 Տուր մեզ Դու միտք բանական
 Զսիւք ծծել գիտութեան
 Եւ քոյդ ուղիղ ի շաւղաց
 Զըլլալ երբէք մոլորած:
 Առջի տարուան ճամբուն մէջ,
 Թէ թեքեցանք ներէ մեզ,
 Աս նոր տարիս պատրաստէ,
 Ըլլալ մեզի շահաբեր,
 Եւ տուր մեզ Դու մաքուր սիրտ,
 Դէմ չի գործել Քու կամքիդ:
 (Կրկնէ վերջին երկու տողերը)

Յունվար 1, 1878

ԱՌ ԳՈՂԹՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՆ

ԳՈՂԹԱՆ մանկտիք, ահա ձեզ
 Շքեղ փառաց ասպարէզ.
 Օ՛ն, փութացէք, խումբ կազմեցէք,
 Պսակ անթառամ մնալ ձեզ:
 Գիտէ՛ք ոչք են ձեր նախնիք.
 Բանաստեղծից էք որդիք,
 Որ քնարով, ոսկի լարով
 Հայրենիքին փառք բերին:
 Դուք ամենից էք զրկուած,
 Փառքեր ունիք բաց կորած.
 Հայ եղբայրներ ձեր մերկ, քաղցած,
 Եւ Հայրենիք աւերած:
 Գիտէ՛ք զփառս ձեր նախնեաց,
 Թագաւորաց, իշխանաց,
 Որք նիզակովք, սուր սուսերովք
 Հայաստանին փառք բերին:

ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆ

ԵՐԲՈՐ Հողից մարդ դարձայ, Ով չի երգել պարելով,
 Երբ Աստուածանից Հարցայ, Ընկերաց Հետ պաշտելով
 Թէ ի՞նչ վիճակ ես ուզում, Նա չգիտեր ցնծութիւն
 Ասի «ուսանողութիւն»:
 Եղուի սրտին, վայ Հոգւոյն:
 Աստուած ուզեց զարգարել, Ով չլինիր ուսանող
 Ինձ դիպակ շորեր կարել, Լաւ էր որ միշտ մնար Հող,
 Ասի էդ դու կանանց տուր, Քան զԱստուծոյ լոյսն արեւ,
 Ինձ մի նշանազգեստ տուր: Անասնոց պէս վայելեր:
 Կապտածաղիկ դտակ տուր, Ով չի երգուիլ ընկերաց,
 Մէջքս կապէ Հատու սուրդ, Պաշտպան լինիլ Հայրենեաց,
 Մառանումս լաւ գինի, Մինչև վերջին չունջ կուրիլ,
 Թող միշտ անպակաս լինի: Հայրենիքը պաշտպանել:
 Իմ սիրելի նազելին Մեզինքն էնպէս Հեռանայ,
 Մնայ միշտ Հաւատարիմ Լոյս աշխարհից վերանայ,
 Փղշտացի ախոյեան Թող անասնոց կարգն անշնի,
 Տեսնէ սուրս է ինձ պաշտպան: Թող նա մեր մէջ չմտնի:
 (Թարգ. Գեղմ.) Ռ. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՀԱՅՈՑ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ Միացեալ,
Նոր Ընկերութիւն,
Լոյս Հաշատանի:
Գիրոցներ բացուան,
Հաշատանի մէջ,
Գիրութեան համար:
Հաշկաչ սերունդներ
Մատաղ մանուկներ,
Երանի՛ Զեղի:
Նոր ընկերութեանց
Գիրոցներուն մէջ
Նոր ուսմունք կ'առնուն:
Արդարեւ դուք էք
Հաշու ապագայն,
Յոյսն, Ազատութիւն:
Տասնեկիներորդ,
Լուսաւոր դարուն,
Նոր Հայրենիք դուք:
Ոչ լաւ գրիչով,
Եւ ոչ լաւ սուրով,

Փրկութիւն կ'ըլայ:
Ուստի պարտիք դուք,
Գրիչն ու սուրը,
Մէկտեղ ստանալ:
Ահա ան ատեն,
Կարող ենք պարզել,
Դրօշն Ազատութեան:
Նոր Հաշատանի,
Նոր նաՀատակներ,
Հաշ պատանիներ:
Ձեր անունները,
Այսպէս 'տի դրուի,
Պատմութեան էջեր:
Ուրեմն գոչենք,
Հետեալ խօսքը:
Կեցցէ Հայութիւն,
Նոր Ընկերութիւն,
Եւ Ազատութիւն:
ԳԱՔՐԻԷԼ ԼՈՅՍ-ՊԱՐՈՆԵԱՆ

ԵՐԳ ԶԲՕՍԱՆԱՅ

Օ'ն, սիրուն ընկե'րք,
Խմբովին դիմե'նք
Դէպի վայրն զբօսանաց
Ցնծալով երգելով և զուարթ
սրտով:
Օգն է պաշտառ զուարթարար
Նաեւ քաջ առողջարար:
Օ'ն եկէ'ք, ցատկատե'նք,
Միաձայն երգենք:
Միշտ կ'ըսեն թէ բժիշկներ
Թող զբօսնում ուսանողներ,
Տիգրանակերտ, 1875

Որք չըլլան վատառողջ,
Այլ միշտ ապրին ողջ:
Օրհնեալ ըլլան բարերարք,
Որք մեզ կուտան ժամանակ
Կարդալու, սովորելու
Նաեւ խաղալու:
Օ'ն, ցրուինք, արդ ցրուինք,
Ժամանակնիս է անգին,
Ձանգակին ձայն բարէ,
Շուտ մեզ ներս կոչէ:
ՍԻՄՕՆ ՀԷՔԻՄԵԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԳ

Մենք կրթութիւն առնում ենք Օրհնեալ ըլլան Բարերարք,
Դպրոց ուսմունք սիրում ենք: Հողաբարձու մեր տիարք,
Ուսուցիչք մեր պատուականք, Ջանանք լինել մարդ բարի,
Ապրին ծնողք սիրականք: Գիրք շատ առնել դալ տարի:
Աշխատութեան փոխանակ, Կարգ կարգ շարունք դիմաց դէմ,
Գրքեր առինք մրցանակ, Ձեռք ձեռքի տանք առնունք ճեմ,
Լա լա լա լա լա լա լա:

Օ Ր Օ Ր

ԱՐԻ իմ սոխակ, թող պարտէզ մէրին,
Տաղերով քուն բեր տղիս աչերին.
Բաց նա լալիս է. — դու, սոխակ մի՛ դալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:
Թո՛ղ, դու, տատրակիկ, քո ձագն ու բունը
Վու՛րուչով տղիս բե՛ր անոյշ քունը.
Բաց նա լալիս է. տատրակիկ, մի՛ դալ,
Իմ որդին չուզէ սրգաւոր դառնալ:
ԿաՀաղակ ձարպիկ, գող, արծաթասէր,
ՇաՀի զրոյցով որդուս քունը քեր.
Բաց նա լալիս է. կաՀաղակ, մի՛ դալ,
Իմ որդին չուզէ սովորաւոր դառնալ:
Թո՛ղ որսըդ, արի՛, քաջասիրտ բազէ,
Գուցէ քո երգը իմ որդին կուզէ . . .
Բազէն որ եկաւ՝ որդիս լրուեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քրնեցաւ:
ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳ

Քուն, եղի՛ր, պալատ, աչքը խուփ արա՛,
Նախուն աչքերուդ քուն թող դաշ վրայ.
Օր, օր, օր պալատ, օր, օր, օր ու նանի,
Իմ (այս անունի) քունը կը տանի:
Ոսկի խաչ վիզիդ քեզի պահապան,
Նարոտ կապել է ծառէն Տէր պապան:
Օր, օր, ևն.:

Մալի հիւրաններ կախել եմ ես ոչ,
Նազար չես առնուէլ, քուն եղի՛ր, մի լար:

Օր, օր, Լն.:

Աս քանի՞ մօրդ անքուն աչքովը,

Անցել է օրեր օրոցքիդ քովը:

Օր, օր, Լն.:

Օրոցքդ օրրեմ, օրով բոյ քաշես,

Մղկտան ձայնով սիրտս չը մաշես:

Օր, օր, Լն.:

Դուն ալ քուն եղի՛ր, ինծի ալ քուն տո՛ւր,

Սուրբ Աստուածամար (այս անունին) քուն տո՛ւր:

Օր, օր, Լն.:

Ռ. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒ

ՄԱՅՐԵՆԻ լեզու, մայրենի բարբառ,

Ախորժ ընտանի իմ հոգուս համար:

Առաջին դու խօսք ականջիս հասած

Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած:

Մանկական լեզուիս թոթովանք տկար,

Հնչում ես իմ մէջ դու միշտ անդադար:

Հոաշալի լեզու, գեղեցիկ լեզու,

Այդ ինչպէս քաղցր հնչում ես ինձ դու:

Կամիմ աւելի քաջ ծանօթանալ,

Քո ճոխ դանձերին, հոգւով հայանալ:

Ասես թէ ահա կանչում էին ինձ

Պապեր և հայրեր խոր գերեզմանից:

Հնչի՛ր, դու հնչի՛ր, այժմ և յաւիտեան,

Մայրենի լեզու, բարբառ սիրական:

Արի՛, բարձրացի՛ր, հնութեան փոշուց՝

Դու իմ Հայ լեզու, մոռացուած վաղուց:

Չգեցիր նոր կեանք, սուրբ գրուածներով,

Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով:

Ամեն տեղ փչում է Աստուծոյ շունչը,

Սուրբ է, այո, միւս ալ ձեռն ու ոճը:

Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,

Իմ սրտի սէրը չաչտնել արժան էր

Իմ երանական մտածմունքը: —

Ապա կը խօսիմ իմ մօրս խօսքը:

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՅ

Ը. ՄԱՍ

ԽԸՈՒՆ ԵՐԳԵՐ

✠

ԳԵՂԱԿԱՆ ԵՐԳ

ԱՌՏՈՒՆ կանուխ թէ երեսնք Թող ճոխն անդին նիրհէ խոր
Քաղցր է վաստակը դաշտին, Հեշտութեանց մէջ նորանոր
Չուարթ կ'ըլլանք ու կ'երգենք Անոր կեանքին չեմ ցանկար
Գեղջուկ երգերը մերին: Թէև սոխ ուտեմ ամեն օր:

Անցաւ գիշեր մութ սեաւ, Մշակին կեանք ոսկի է,
Ժպտին դաշտերը մերին, Խաղաղ անփոյթ ու անդորր,
Պայծառ արև ծագեցաւ Գեղջիկուհուն երգ դաշտայն է

Կանաչ լեռան վրայէն: Սոխակի մը տարփաւոր:

Ելենք աշխույժ ի մեր երկ Թող ճոխն առտուն սթափի,
Հրաւէր կարգան թռչնոց երգ, Իր խոկն ունի ու վիշտեր,
Աշխատութիւնը դաշտին Բայց այս կեանք կը նմանի
Միւրուն քանձ է աղքատին: Վերի կեանքին ցանկալի:

ՏԵՕՎԼԵԹԵԱՆ

ՃՇՄԱՐԻՏ ԸՆԿԵՐ

ԲԱՐԻ, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն,

Որ փառքեցնէ արևի պէս պատկերը մարդուն:

Ինչ մարդ ունենալ իր մօտը հաւատարիմ ընկեր,

Յերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն:

Ընկեր եմ ասում, Աստուածաժախ, ճշմարիտ ընկեր,

Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն:

Կեանքդ նուրբես ընկերի լաւին, քիչ է դարձեալ,

Այնպէս է հոգեկան լուստառ լապտերը մարդուն

Թշնամիները իւր վրայ քաշած Ժամանակը,

Կտրիճ, հարազատ ընկերն է՝ սուտերը մարդուն:

Ինչ մարդ ունենալ մտերիմ ընկեր, Զիւան Աչքդ,

Չի սպիտակիր ամենեւին մէկ հերը մարդուն:

ԱՇԸԳ ԶԻԻԱՆ

ՀԱՅՐԻԿ ԶԱՆ

ԳԱՐՈՒՆՆ է եկել գեղեցկատեսիլ,
Կարօտ ենք տեսքիդ, Հայրիկ Զան,
Շուտ արա՛, Հասիր՝

Տարակաց սրտեր դու մորմոքեցիր,
Երբ քաղցր Հայրենիք, Հայրիկ Զան,
Թողիր գնացիր՝

Մեր սիրտն ու հոգին քո գլխին խուրպան:
Հրեշտակ Հայ ազգին, Հայրիկ Զան,
Դարձիր գէպի Վան՝

Վաստիորի վաչելք գիտեմ սիրել չես,
Վարազայ վանքիդ, Հայրիկ Զան,
Կարօտ կը քաշես՝

Գալիլեան աստղիկ, բուրաստան ծաղկանց
Սիրով տեղի տան, Հայրիկ Զան,
Արծուղ Հայրենեաց՝

Ողջ Վասպուրական երկրին կեանք տուիր,
Սիրուղ կրակով, Հայրիկ Զան,
Չամենք վառեցիր՝

Պատանիք, մանկունք, օրիորդք, կուսանք,
Հայրիկ, կանչելով, Հայրիկ Զան,
Հանեն հառաչանք՝

Իսկ անտէր որբեր, արտասուք աչքին,
Կարօտ կը մնան, Հայրիկ Զան,
Քո Հովանիքին՝

Սողոն, Սոկրատէս, ճարտարն Կիկերոն,
Չունեցան խօսքերդ, Հայրիկ Զան,
Հովիւ ես զգօն՝

Թշուառին բողոք, զրկեալին պաշտպան,
Դու ես Հայ ազգին, Հայրիկ Զան,
Ձոհ նուիրական՝

Ուր որ ալ լինիս ուր որ ալ գնաս,
Քու փաշուն ջահովդ, Հայրիկ Զան,
Մեղի լոյս կուտաս՝

Եւրոպ ճանաչեց քո բարձր արժանիք.
Ունիս մի տխուղո՛ւ Հայրիկ Զան,
Գ. ՇԵՐԵՆՑ

Հայրենեաց Հայրիկ՝

ԶՕՆ

ԱՌ

ՆԵՐՍԷՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

ԵԼԷ՛Ք եղբարք բոլորուելու,
Գահին քովեր Հօրն Հայուն,
Առէ՛ք ծաղկունս, փունջ կապելու,
Որ զարդարեմք իւր վեհ անուն:

Նա՛ Հայր է մեզ ճշմարիտ,
Որ կը հսկէ անվթիթ,
Նա՛ նոր Մովսէս երկնանուէր,
Որ կը տքնի անձնուէր:
Անդէն Հանել անվՀատ՝
Հայն տառապէն չուսահատ:

Որբին հէգին և Հայրենեաց՝
Նա կ'սփոփէ տխուր լալիւն,
Եւ ազգային սուրբ իրաւանց՝

Մատաղ կը տաչ իւր կեանք ողջոյն:
Օ՛ն անդր փութամք ի Հանդէս,
Տօնել զմեր նոր Ներսէս,
Որ իւր չորս գին խափիւռ,
Կանգնէ տաճարս լուսասփիւռ,
Հոն քաւելու դարաւոր,
Աղբին վշտեր բիւրաւոր:

Որ փրկութիւն ազգի միայն,
Ուխտեց ունել նշանաբան,
Եւ անխնայ ճգնի աՀա՛,
Հայրենական փառաց վերայ:

Արեան ծովէն փոթորկուն,
Ուր ազգն անկաւ անկալուն,
Նա կ'երկարէ զիւր բազուկ,
Մնկեալ Հայուն տալ նեցուկ . . .
Կեցցէ՛ Հայր մեր պատուական,
Կեցցէ՛ Ներսէս Սրբազան:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԱՔՐԵԱՆ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ

ՎԵՐՁԻՆ ՀՐԱԺԵՇՏԻՆ ԱՌԹԻԻ

«Հայրիկ Զան»ի եղանակով

Եկել է գարուն,
Սոխակը սիրուն,
Վարդի թուփի կթել,
Կ'երգէ Հայրենիք:
Ծիծեռնակ, բաղէն,
Թռչունը համօրէն,
Քաշում են միշտ ա՛խ
Օտարաց երկրէն:
Կոռնկ մեր պանդուխտ,
Իւր բարձր դիրքով,
Փութաց ձայն տալ մեզ,
Հայրենեաց սիրով:
Արծիւ, մեր Հայրիկ,
Հայրենակարօտ,
Հեռանում է արդ,
Դէպ ի Մուշ Տարօն:
Վասպուրականի
Երիտասարդներ
Եւ օրիորդներ
Հազան սե լաթեր:
Լաց ու տրամոթիւն,
Մոռցաւ Ծաղկազարդ
Ինչպէս իւր սոխակ,
Միրելի և վարդ:
Հայրիկ, ո՛հ Հայրիկ
Ո՛ւր աչքս արագ
Գնաս Հրաթեշտ տալ
Եւ վերջին կտակ:
Նորաչէն, Արարք,
Յայնկոյս Հայկազ վանք,
Ուր կան ժողոված,
Տղայ, մարդ, կանայք:
Իսկ Երկուշաբթին
Որ օրն էր Աւագ,
Ի սուրբ Յակոբէն,
Տուն դառնար արագ:
Վերջին տեսութիւն,
Վերջին վառ կարօտ,
Ձը կրցաւ երբէք,
Տալ ոչ մէկին մօտ:
Մի ջինջ զոյգ արցունք,
Աչերէն վաղեց.
Ձը կարաց ժուժել,
Տեղէն վեր կայնեց:
Լոկ մի բան ասաց
Խօսք մի Հայրական
Ա՛հ կարծես Հայրիկ,
Մեռած է, կուլան:
Լալական խումբեր,
Ո՛հ առին տարին,
Հայրենի քաղաք,
Առաջնորդարան:
Փակեալ կըսպաներ,
Կարծես սուգ արած,
Աւա՛ղ կարդային
Արծւոյն Հայրենեաց:
Թռաւ սլացաւ,
Մեր երկրէն ի բաց,
Ձէ ալ չէ տեսնում,
Միրուն Հայրենիք:
Հայրենի Հողին,
Կարօտ է Հայրիկ:
Կ. Յ. ՊՆՈՒՋԵԱՆ

ԶԻՆՈՒՈՐԻՆ ԵՐԳԸ

Զինո՞ւորի՛ն Երգերը,
Եղբարք լսեցէք.
Աշխարհին դէպքերը
Լաւ ըմբռնեցէք:
Ոմանք Հոյակապ
Պալատներ ունին.
Ոմանք չէն դըղեակ
Խաղաղ բընակին:
Բաց թշուառ զինուորն
Չունի ոչ մի բան,
Ոչ հանգիստ ցերեկն,
Ոչ քուն գիշերուան:
Զգե՞ստըն զարդարուն,
Բաց փորը քաղցած,
Դարի տալ ձիուն,
Ինքն ուտէ սոսկ հաց:
Զինուորին՝ դատարկ
Չըկալ աշխարհի.
Խընդրէ բարեւոր,
Ու ապաստանի:
Թէ քաջ մարտընչի,
Կ'առնու մի պարգև.
Երբ վիրաւորուի,
Կ'ըսէ մնաս բարև:

ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի ԲԻԻՐ ձայնից բնութեան չքեղ
Թէ երգք թըռչին սիրողաբար,
Մատուցը կուսին ամենազեղ
Թէ որ զարնեն փափուկ քընար,
Չունին ձայն մի աչքան սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:
Տո՛ւր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մեք,
Որ մըրկաւ էինք զատուած,
Բախտին ամէն ոխ չարանենդ,
Ի մի Համբոյր ցրուին ի բաց:
Ընդ աստեղօք ի՞նչ կալ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:
Երբ ալևոր Մայրն Հայաստան
Տեսնէ զօրդիս իր քովէ քով,
Սըրտին խորունկ վէրքը դաժան
Քաղցր արտասուաց բուժին ցօղով:
Ընդ աստեղօք, Լեն:
Մէկտեղ լացինք մենք ի հնում,
Եկէ՛ք դարձեալ լար անբաժան,
Խառնենք զարտօսը և ըզխնդում,
Որ բազմածնունդ ըլլալ մեր ջան:
Ընդ աստեղօք, Լեն:

Մէկտեղ չողնինք, մէկտեղ ցանենք,
 Մէկտեղ թափին մեր քրտինքներ,
 Ըզէունձ բարեաց չերկինս Հանեմք,
 Ար կեանք առնուն Հայոց դաշտեր:
 Ընդ աստեղօք, ևն:
 Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԱՌ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՀԱՅՐԻԿ, Հայրի՛կ, քեզ աւետիք,
 Վասպուրական մեր աշխարհ
 Փուշը խլեց, քեզ վարդ բերաւ,
 Հրճուի՛ր, ցնծա՛, բիւր հաղար:
 Մաշխան երբեմն սոխակներով,
 Եկաւ դարձաւ բաղադին.
 Երբ դայ Հիմա, էլ չը դառնար,
 Պիտի երգէ սխրագին:
 Հայրի՛կ, Հայրի՛կ, քու վարդերուդ,
 Խաչթիչ փուշերն սալաասուր.
 Վարդին դարձիր, բացունին, բուրեն,
 Անմահ թերթերն քաղցրաբույր:
 Եւ են չամփոցր սուր սլաքներ,
 Համբերութեանդ դաշին տակ.
 Գոհար, ահունք դարձած ամեն,
 Յօրինուեր են դարդ ու պսակ:
 Հայրի՛կ, Հայրի՛կ, բաց քու վէրքերդ,
 Մենք պատրաստ ենք համբուրել.
 Սիրոց ազնիւ պալատանաւ,
 Չայն պատուաստել օծանել:
 Հայրի՛կ, Հայրի՛կ, թող փարատին,
 Բո տաղտկացած սև ամպեր.
 Հերի՛ք հեղեղը դառն արտասուաց,
 Գան արտասուել սուրբ աչտերդ:
 Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք
 Պոակ Հիւսել քեզ Համար.
 Ձեռքեր ամեն, սրտեր ամեն,
 Պիտ՝ միանան քեզ համար:

Հայրի՛կ, Հայրի՛կ, Հայուն փինիկ,
 Անմահացուր դու մեր կեանք.
 Մօտիր, դալիր, կեանք տուր Հայուն,
 Եւ ասա մերձ է քո փառք:
 Նաե երկինք ահա կախէ,
 Քեզ թագ փառաց աստեղեայ.
 Հայ Հայրապետք այն թագին շուրջ,
 Ծարեն ահունք շափիւղեայ:
 Բաղմիր աթոռ Լուսաւորչին,
 Հայոց մեծաց գերակայ,
 Սահակ Պարթև խոնջած չողնած,
 Իր գաւաղան քեզ կուտայ:
 Հովուիր հօտդ դաւաղանաւ,
 Սփռէ ցանէ, նոր կեանք, լոյս.
 Ամեն Հասակ կ'օրհնէ դքեղ,
 Դողդոջ ծերուկ, մատաղ կոյս:
 ՀԱՅՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱՅ ԶԱՆԿԵԱՆ

ԵՐԳ

Ի ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐԶ
 ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ
 1864 Մայիս 24

ՀՐԺՈՒԻՆ երկինք, խաչտաչ երկիր անթերի,
 Եւ Հաչկաղանցս դէժք կը Ժողտին գեղանի.
 Զի Տարեղարձ մեր փրկութեան նոր Հասեր,
 Դարձեալ Հանդոյն Արուսեկին լուսարեր:
 Յոր նորոգունին մեր սրտեր,
 Կրկին ի յոյս և ի սէր:
 Ազգասիրաց փնեմ ճակտին քրտնաթոր,
 Այսօր Մասեաց Հրեշտակն յաշխոյժս նորանոր,
 Քառեակ պսակ մ'ալ դայ Հիւսել ծաղկափայլ,
 Զոր եթերին կաղմեն մառունք բարեփառ:
 Յոր խրախուսին մեր սրտեր,
 Կրկին Հոգի անվեհեր:
 Զայն Հինաւուրց Քինախնդրին ալ ընդհա՛տ,
 Հնչեն փոխան բարբառքն Հայկեան անընդհատ:

Օրէնք արդար և Միութիւն երջանիկ,
 Զոր «մայր բարեաց» գրեն անշուշտ անջինջ գիրք:
 Յոր կը ցնծան մեր սրտեր,
 Կրկին ի խինդ անեպեր:
 Հա՛յ օ՛ն որդիք Հայկեան լալս պերճ ասպարէզ,
 Եկէք տօնել զայս նոր շքեղ մեծ Հանդէս.
 Նուիրական ըլալ մեզ օրս չարածամ,
 Ուր միութեան ճանչցանք ոգին՝ Ազգութեան:
 Եւ չոր լցան մեր սրտեր,
 Կրկին ի լոյս անստուեր:
 Թող Հնչէ ազատ,
 Միշտ վեհն Այրարատ.
 Ընդ նմին երգեն,
 Դաշտ, լերինք ամեն.
 Թէ բաղդն Հայերուն,
 Դեռ ողջ է անքուն.
 Եւ մեք անդադար,
 Զարնենք Հայկեան քնար.
 Որչափ ապրի Հայն,
 Կեցցէ՛ Միութիւն.
 Ու փառքն աննման,
 Սահմանադրութիւն:

Խօսք Եղանակ
 ՍԱՀԱԿ Ա. ԽԱՆՃԵԱՆԻ ԲԱՐԹՈՂ ԹԱԹԱՐԵԱՆԻ

ԱՐԱՄ

Մեր քաջ Հայոց զօրութիւն,
 Վեր կացէք, ասաց Արամ.
 Առաջեալ բացէք նշան,
 Գնանք Հայ լեզուն տարածենք:
 Ո՛հ, Արամ, Արամ, Արամ:
 Յորդան, դուք զօրք, օ՛ն
 չորդան,
 Պաշապիս Բաղեայ Տիտան,
 Դէպ ի տապաստ ի դամբան:
 Դէպի կողմն Արեւմտեան,
 Ո՛հ, Արամ, Լեն.:

Յորդան, դուք զօրք, օ՛ն
 չորդան,
 Տեարք լայնալիճ աղեղան,
 Քնքուշախօս ամբոխին,
 Տալ զլեզու Հայկական:
 Ո՛հ, Արամ, Լեն.:
 Ի ծովէ մինչ ի ծով,
 Թող խօսին Հայ բառերով.
 Ներհակողին նիզակով,
 Յուրէք, ո՛հ, ասաց Արամ:
 Ո՛հ, Արամ, Լեն.:

ՎԵՐՋԻՆ ՔԱՅԼ

ՈՎ ԴՈՒ սլաք, դու սրածալը Հայկական,
 Որ չողացիր ազատ վայրերն Աթինեան.
 Զգիմադրեց զքեզ զրա՛հ պղնձի,
 Երբ ծակելով անցար ընդ սիրտն Բէլի:
 Որ առաջինն նուագ,
 Նոր փառք առնու մերս Հայի:
 Եւ դուք Հատու սուսերք քաջաց նախնական,
 Որ չողացիր ուժեղ բաղկաւ Հայաստան,
 Դուք պա՛հեցիք զմարդկութեան խանձարուր
 Մինչ թշնամին չուրջ գնովաւ գայր սիրտ:
 Հայ անունն առաւ փառք,
 Տուին լեռներ արձագանք:
 Ի՞նչ Հատու սուր երբ տեսնեմ քեզ կը չողաս,
 Եւ դու նեւ սուր արագնթաց սլանաս,
 Ուր որ ինքք, ուր որ Հասնիք դուք ուժգին,
 Դիպթաւալ կը կործանի թշնամին:
 Այս է Հայոց մեծ Համբաւ,
 Այս է Հայոց փառք անբաւ:
 Սակաջն, աւա՛ղ, Հայոց սրեր ու նետեր,
 Ժանդոտ բեկած ի մեր աշխարհ պա՛հեն դեռ,
 Թէ սիրտ ունիմք և թէ կրօնք արբաղան,
 Առնենք զսուր մեր աշխարհին Հայկական:
 Որ Հայրենիք մեր կանգնի,
 Որ Հայոց փառք նորոգի:

Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆ մեր քաջ զօրավար, Հայոց զօրքերն անհամար
 Թուրը ձեռքին ոսկեվառ, Դրօշակներով պաճառ,
 Կանչում է իւր քաջերին, Ամեն կողմից ըլտապած,
 Զարդել զգլուխ Յաղկերտին: Վազլվեցին կատաղած:
 Հայոց զօրքերն դունդադունդ, Ղևոնդեանց խումբն անմա՛հ,
 Մեծաբարբառ գոռով թունդ, Անվախ, անդող և անա՛հ,
 Հաւաքուեցան լԱրտաշատ Խաչը բռնած Գրիստոսեան,
 Մալրաքաղաք մարդաշատ: Բորբոքեցին զօրք Հայկեան:

Կանաչը համետ, անհրճան, փառք և պարծանք չաղթական,
Վառուած սիրով Աստուածեան. Բեզ սիրելիդ իմ Վարդան,
Դուրս թափուեցան տներից Որ քո սիրով բորբոքիչ,
Վազել դաշտը ծաղկալից: Հանդիսացար քաջ փրկիչ:

Բաղցրախօսիկ և սիրուն, Դու և քո քաջ ընկերներ,
Օրիորդներ փափկասուն, Առիծարար անվեհեր,
Թողին իրենց ոսկի շորեր, Զարդեցիք զօրքն Պարսկական,
Երկաթ հագան մահաբեր: Թողիք դետին անկեղան:

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆ

ՄԻՈՒԹԻՒՆ

Օ'ն, մեր սրտից, օ'ն, իրա'ց

Սուգ և թախիծ ամպամած.

Օ'ն և սէրք ու հրճուանք,

Շարժին մեր սիրտը, քաջ ըլլա'նք:

Հեռո՛ւ, հեռո՛ւ, ձայն տուէ՛ք

Ո՛հ, ծագեցաւ մեզ արեգ. (կրկ.)

Օ'ն ձեռք ձեռքի տանք և հոգի

Ի մի չօղենք մի սիրտ կազմենք

Մի սիրտ, չառա՛ջ.

Գործովք մեր քաջ չառա՛ջ, չառա՛ջ,

Խէթ և նախանձ կորեաւ իրաց, իրաց, իրաց,

Հաչկաղունք, դիմենք չառա՛ջ, (կրկ.)

Լոյս ծագեցաւ մեր առա՛ջ: (կրկ.)

ՎԵՐՋ

ՅԱՆԿ

ԱՅԲՈՒԲԵՆԻ ՎՐԱՅ ՇԱՐՈՒԱԾ

(Երգերու առաջին տողերը)

Երես

Ազատն Աստուած այն օրից՝	17
Ազատութեան այն վառ սէրը	18
Ազնիւ ընկեր մեռանում եմ	19
Ա՛յ թող դադրին արտասուք Հայուն աչերէն	20
Ա՛յ, Հայաստան, Հայաստան	61
Ա՛յ, Հայաստանս սիրտս ու հոգիս քեզ նուիրեմ, ընդունէ	21
Ա՛յ, Հայրենիք, երբ կը տեսնեմ քեզի լաւ	62
Ա՛յ, Վասպուրական, ախուր Հայաստան	145
Ահա՛ կ'երթամ, սիրելի մայր	22
Ահա մօտեցան մահուան ժամերս	146
Ահա՛, տարի մ'ալ սահեցաւ	63
Աղբի՛ւր, պարզի՛ր, պէկի տղին ջուր տանիմ	147
Աղօթարանը բացուեցաւ, ժամանակ է դարթելու	21
Այն աւետիս ազատութեան	91
Ա՛յ իմ լուսնակ գեղեցիկ, Աստուածավառ դու լապտեր	131
Անի քաղաքս նստեր կուլամ	147
Անհոգ ես չես գիտեր ինչ կայ քո մասին	163
Աչսօր չարեաւ ի մեռելոց	12
Աչսօր տօն է ծննդեան, աւետիս	11
Առաւօտեան քաղցր և անուշ հովերն	132
Առնեմ գէնքերս իջնեմ ի ողորմ	163
Առ ընկալ ի գիրկդ, Մայր Հայաստան	64
Առտուն կանուխ թէ երեսնք	169
Աստուած վկայ որ մենք կը չաղթէինք	24
Արի՛, Աստուած Հարցն մերոց	10
Արի՛, եղբա՛յր, ա՛ռ քո գէնքեր	129
Արի իմ սոխակ, թող պարտէզ մէրին	167
Արիք դուք Սասանեացն ի ճամբար	115
Արիք որդիք դուք Հայրենեաց	116
Արկածք Հայոց ժամանակին ընդ անիւ	25
Արշալոյսը նորէն բացուաւ	154


Արօրն ասաց տատրակ Հաւքուն	161
Աւարացիի մէջ խելար և մոլար	148
Ափսո՞ս քեզ Հայոց խեղճիկ ժողովուրդ	149
Բա՛մբ. որստան բարձուստ բոմբիւնք յԱլարատեան դաշտն	117
Բարի, դեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն	169
Բարձրամբարձ լեռներ տեսի ոտքիս տակ	26
Բարով եկար Նոր Տարի	164
Գարնան խիստ անուշ պայծառ ատենն էր	65
Գարունն է եկել դեղեցկատեսիլ	170
Գարունն էր կենացս դեռ	149
Դո՛հ ենք քեզանից, ո՛վ Բարերար	15
Դողթան մանկաիք	165
Դաշնակցական խումբ գնանք մենք Սասուն	92
Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին	92
Դեռ նոր Հայրենիք, դեռ նոր ազգութիւն	66
Դու գո՞վ խնդրես մայր իմ անուշ	150
Դու Հայաստան, մայր սիրական	65
Դուն խելօք Հաշուով վաճառական ես	67
Դու տեսե՞լ ես երկնքումը	133
Դու փափկաթե մանկիկ գեփիւտ	134
Ելէք եղբարք բոլորունքու	171
Եկել է դարուն	172
Ես եմ ազատ Հայ պատանի	93
Ես Հանեցի սուրս պատեանից	94
Ես մէկ ծառ եմ ծիրանի	68
Երբ ալեկոծ ծովի վրայ	26
Երբոր բացուին դռներն չուսոյ	68
Երբոր Հողից մարդ դարձայ	165
Ձարթի՛ր, որդեակ, ուշ բեր, վեր կաց	27
Ձարթիք որդիք, քաջ Հայկաջ	119
Ձինուած, պատրաստուած, Ձէլթունի քաջեր	113
Ձինուորին երգերը	173
Էին փառաց նշույ անչէջ, ամենազօր Սուրբ Հոգի	14
Էս Հակոտնեայ աշխարհում	135
Է՞ր Հեռանաս քո մայրենի աշխարհից	69
Ընդ աստեղօք օտար ափանց	151
Ընկե՛րք, չաղթութեան ժամն է արդ Հասեր	121
Ընցաւ տարին, Հայոցս էլ փառք ընցաւ Հետ	152

Թէ թե ունէի	56
Թէ իմ ալեւոր Հեղբոս սենային	29
Թէ Հայրենեաց պաշկադիր	30
Թէպէտ ես մեծ տան նշան եմ	153
Թէպէտ վրտար քաղքէ քաղաք դամ Թախտ	31
Թո՛ղ երգէ բլրուլ Մշոյ դաշտերում	95
Թող կորնչին Տաճիկները	96
Թող փչէ քամին պաղ, պաղ երեսիս	32
Ժամ է Հայեր, արիք ձեր բաղդն ողջունել	33
Ի բիւր ձայնից բնութեան չքեղ	173
Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ	96
Ի գէն, Հայե՛ր, ի սուր և ի Հրացան	89
Ի զո՛ւր են ի զո՛ւր, բռնաւոր	114
Իմ Հայրենեաց Հոգի Վարդան	55
Իմ Հայրենիք թշուառ անտէր	71
Իմ Հայրենիքս զիս կը կանչէ	70
Իմ սիրելի դաւակունքս	153
Ինձ Համար չէ դարնան դալը	34
Իջի՛ր, արքայ Հօր	14
Իսլամական դոռ վաշտերը կատաղի	97
Լացէք պատանիք, և կուսանք Հայոց	154
Լուռ գիշերին մըտքիս դիմաց	114
Լուսին չկար մութ գիշեր էր	98
Լոեց — ամպերը, եկան ծածկեցին	35
Լօ՛, լօ՛, լօ՛, Սիփանայ սէգ սարի վրայ	99
Խաղաղ դաշտի որդիք լեռները երնենք	100
Խորհուրդ մեծ և սքանչելի	11
Ծաղկաւէտ դաշտին վրայ ցօղը կը փայլի	137
Ծիծեռնա՛կ, ծիծեռնա՛կ	155
Կանչէ՛, կուռնկ, կանչէ՛	157
Կար ժամանակ որ և Հայերն	60
Կարկուտ տեղաց Խանասորայ դաշտումը	101
Կովկասի քաջի՛ր, խմբեր կազմեցէ՛ք	101
Կուռեցէ՛ք տղերք, կուռեցէ՛ք քաջ քաջ	102
Կուռնկ, ուսաի՞ կուղաս, ծառայ եմ ձայնիդ	155
Հայ ապրինք եղբարք, մարդկութեան մէջը	35
Հայաստա՛ն երկիր դրախտավայր	72
Հայ եղբայրներ դէ՛հ, դունդ ի դունդ	121

Հայէ՛ր, ալ Հերիք այսչափ լուռթիւն	37
Հայ երկտասարդներ, շուտ ըշտապեցէ՛ք	104
Հայը բանտէն չի վախնար	103
Հայը որբ ժողովուրդ է	58
Հայի ու Լեւոնի մոռանանք, եղբարք	37
Հայոց Միացեալ	166
Հայ չէ՞ք մի, մի՛ թուլանաք, առէք ձեր վաճան	39
Հայրենասէրք մեռանի՞մք	72
Հայրենեաց սիրոյ Համար	104
Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր	39
Հայրենիքէն ողբի ձայներ կը լսուին	73
Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ	74
Հայրի՛կ, Հայրի՛կ, քեզ աւետիք	174
Հայրիկ, Հայրիկ քո Հայրենիք Վասպուրական մեր աշխարհ	144
Հայր մեր երկնաւոր, սուրբ լա քո անուն	40
Հայա քաջազունք, Հայոց դաւակունք	41
Հեռաւոր երկիր նստած դու նրժղե՛հ	107
Հեռու եմ քեզմէ օտար երկրի մէջ	75
Հերի՛ք, եղբարք այսքան տարուան տառապանք	41
Հիմի է՞լ լուենք, եղբարք Հիմի է՞լ	42
Հուր բարկութեան Համայն Հայոց	122
Հրեշտակ դուարթուն, Հզօր սլաՀապան մեր	10
Հրճուին երկինք, խաչտաչ երկիր անթերի	175
Ձախորդ օրերը ճըմռաչ նման կուգան ու կ'երթան	56
Ձայնը Հնչեց էրզրումի Հայոց լեռներէն	44
Ձա՛յն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լուռ ես	90
Ձայն տուր, ո՛վ Ֆիդա, ինչո՞ւ ես տրտում	105
Մայր Արաքսի ափերով	76
Մայրենի լեզու, մայրենի բարբառ	168
Մայրի՛կ ինձ Հրաման տուր, վարժուելու երթամ	45
Մայր մ'ունէի ես միայն	162
Մանկութեան օրերս, երազի նման	45
Մեզի մոռցաւ Հայոց ազգը	47
Մենք անկեղծ գինուոր ենք, առանց ի վիճակ	106
Մենք կրթութիւն առնում ենք	167
Մենք պէտք է կուռենք և ոչ լաց լինենք	108
Մեռի՛ք ալ մեռի՛ք անդուժ 'ւ անողոր	47
Մեր Հայրենեաց փափուկ Հողեր	79

Մեր քաջ Հայոց զօրութիւն	176
Մեր Հայրենիք թշուառ անտէր	80
Մեր սիրուն Հայրենեաց	82
Մեր սիրուն վայելչական տեղերը օտարները առան	83
Մի գեղեցիկ պարզ գիշեր էր	138
Միութեան թերութիւնը	108
Միսսիւմանաց սէլավաթի փողն Հնչեց	138
Մնասցես բարեաւ, սէր իմ սէր	122
Մռայ կողեր թողէ՛ք դիւս	83
Մտաւ արեւ երջանկութեանս	156
Յազատն ի վեր ի Մասիս	59
Յառա՛ջ, Հայեր, Հայրենիքի	123
Յառա՛ջ Հայութիւն, յառա՛ջ ազգութիւն	48
Նուիրագործ է Հայրենիք Հէդ Հայուն	157
Ո՛հ, դու բարեկամ այրած սրտերու	84
Ո՛հ, դօրեղ բաղուն ՎաՀանայ	124
Ո՛հ, ինչ անուշ, ինչ գեղեցիկ	140
Ո՛հ, ինչ անուշ և ինչպէս դով	140
Ողջոյն ընդ քեզ, Հայաստան	85
Ողջոյն տուէք իմ Հայրենեաց կիսակործան տաճարներուն	86
Ո՛չ, եղբարք, ո՛չ, օտարներէն չկաչ չոչս	49
Ով դու սլաք, դու սրածայր Հայկական	177
Ո՞վ ես որ դաս առանձին	52
Ով երկնքի, երկրի Տէր, դու մեր բարի Հայր	10
Ով ծիծեռնակ վարանած թռչնիկ	159
Ո՛վ Հայր, մեր Հայր, որ ես չերկին	9
Ով որ քաջ է, ի՞նչ կը սպասէ	109
Ո՞րն է աշխարհ Հայաստան	87
Ո՛ւշ, ո՛ւշ, մայրի՛կ, նայի՛ր նրանց	159
Չիք գնդակ, վառօդ, փամփուշտդ Հատաւ	125
Պղտի՛ տղայ, չեմ օրօրիլ օրօրանքդ որ քուն լաս	53
Ռուսական պետութիւնն, Հայեր, ըսաւ աշխարհի	53
Սասուն դաւառ, Հին Հայաստան	141
Սիրէ Հայր թէ ըլլայ	57
Վարդան մեր քաջ զօրավար	177
Վերցուր դլուխդ, ո՛վ Հայի որդի	54
Վէրքերով լի ջան փրտաչ եմ	110
Տալուրիկցի կըտրի՞մ եմ խորթ	110

Տէ՛ր, կեցո՛ւ, դու զՀայս	13
Տղայք ժողովուրինք Հեռուէն ու մօտէն	127
Տուր ձեռդ, եղբայր, ժամ է զարթելու	112
Ֆուրտը փշեց ձըմեռ սաստիկ	143
Քանի թըմրինք, բաւ է, եղբարք	113
Քաղցր Հայրենեաց աղափութեան Համար	127
Քաջ եղէք, ով եղբայրներս, մերձ է օգնութիւն	16
Քուն եղի՛ր, պալաս, աչքդ խուփ արա	167
Օ՛ն մեր սրտից, օ՛ն ի բաց	178
Օն սիրուն ընկերք	166
Օն, փութացէք, Հասեալ է ժամ	128
Օն, Փրկչին զինուորներ	15
Օտար աստեղց տակ կը Հեծէ պանդուխտը	158
Օտար ափունք ցրուած ի սփիւռ	88
Օտար երկիր թափառած	89
Օտար երկիր օտար պանդուխտ կը Հեծեմ	162
Օտարի բնական գիտութիւնիցը, ո՛հ, աւա՛ղ, աւա՛ղ	58



24357

12013

